

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am


Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ ԼԵՆՍԵՐԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՅՈՒԲԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ
ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ԱՐԱՄԱՅԻՍԻ

ՀԱՆԴԱԲԵՐԳԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ



ՀՀ - (2h) + 63 3(2h)

50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ «ԵՐԿԻՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ ԼԵՆՍԵՐԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՅՈՒԲԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ
ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ԱՐԱՄԱՅԻՍԻ

ՀԱՆԴԱԲԵՐԴԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ԿՏ. 333



ՀՏԴ 902/904 : 941(479.25)

ԳՄԴ 63.4(2Հ) : 63.3(2Հ)

Պ 505

Պետրոսյան Համլետ Լենսերի և այլք
Պ 505 Հանդարերդի վանքը և նրա պեղումները / Հ.Լ. Պետրոսյան, Լ.Վ. Կիրակոսյան,
Վ.Ա. Սաֆարյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009. - 108 էջ:

***Տպագրվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ***

Գիրքը նվիրված է Արցախի Վերին Խաչեն գավառում (ներկայումս՝ ԼՂՀ Նոր Շահումյանի շրջան) գտնվող Հանդարերդի վանքի պատմա-հնագիտական և մշակութաբանական մանրամասն հետազոտությանը: Ներկայացվում են վանքի գործունեության պատմա-մշակութային միջավայրը, պեղումները, ճարտարապետական մանրամասն կերպարը, խաչքարերն ու տապանաքարերը, արձանագրությունները, հնագիտական գտածոները: Փաստվում է, որ 12-14-րդ դարերում Վերին Խաչենը հայ մշակույթի և ինքրության կարևոր օջախներից մեկն էր: Նախատեսվում է պատմաբանների, հնագետների, ճարտարապետների, մշակութաբանների, արվեստագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյան

Շապիկի վրա՝
Հանդարերդի վանքի Հիմնական խմբի վիրտուալ վերակազմությունը
(հեղինակներ՝ Լ. Կիրակոսյան, Դ. Նահատակյան)

Երևան 2009

Петросян Гамлет Ленсерович,
Киракосян Люба Владимировна,
Сафарян Вардгес Арамаисович
Андабердский монастырь и его раскопки

ԳՄԴ 63.4(2Հ) + 63.3(2Հ)

Hamlet Lenser Petrosyan,
Liuba Vladimir Kirakosyan,
Vardges Aramais Safaryan
Handaberd Monastery and its Excavations

ISBN 978-5-8080-0779-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009

© Պետրոսյան Համլետ Լենսերի, 2009

© Կիրակոսյան Լյուբա Վլադիմիրի, 2009

© Սաֆարյան Վարդգես Արամայիսի, 2009



Արցախի հնագիտական արշավախումբ

Բովանդակություն

Երախտիքի խոսք 6

Ներածություն 7

Գլուխ Ա
Հանդաբերդի վանքը և պատմամշակութային
իրավիճակը Վերին Խաչենում 13-14-րդ դարերում 11

Գլուխ Բ
Պեղումների ընթացքը 23

Գլուխ Գ
Ճարտարապետությունը 29

Գլուխ Դ
Կոթողները և քանդակազարդ քարերը 47

Գլուխ Ե
Արձանագրությունները 67

Գլուխ Զ
Հնագիտական գտածոները. նկարագրությունը,
տիպաբանությունը, ժամանակագրությունը,
զուգահեռները, գործառույթը 85

Վերջաբան 96

Резюме 98

Summary 102

Հատուկ անունների ցանկ 105



Երախտիքի խոսք

Տեղիևակներն իրենց երախտագիտությունն են հայտնում Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությանն ու անձամբ նրա նախագահ պարոն Մևակ Արծրունուն՝ պեղումները նախաձեռնելու համար, Հարությունյանների ընտանիքին (Նյու Ջերսի, ԱՄՆ)՝ պեղումները ֆինանսավորելու համար, ԼՂՀ Նոր Ծախումյանի շրջանի Քնարավան և Եղեգնուտ գյուղերի բնակիչներին՝ արշավախումբը հյուրընկալելու և պեղումներին աջակցելու համար:

Հատուկ շնորհակալություն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանին՝ մասնագիտական խորհրդատվության համար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Քալանթարյանին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ Գագիկ Մարգարյանին, Միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ Հուսիկ Մելքոնյանին, նույն բաժնի ավագ գիտաշխատողներ Ֆրինա Բաբայանին, Աղավնի Ժամկոչյանին և Նյույրա Հակոբյանին՝ գրքի մասնագիտական ջննարկումը կազմակերպելու, խորհուրդների և դիտողությունների համար, Լիլիթ Արաջյանին և Լիլիա Բաղդասարյանին՝ ամփոփումը անգլերեն և ռուսերեն թարգմանելու համար:

Ներածություն

Հանրահայտ է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մեջ կարևոր դերակատարում ունեն նաև պատմամշակութային բնույթի փաստարկները: Արցախի՝ պատմականորեն հայկական տարածք լինելու և մինչև 18-րդ դ. համարյա միատարր էթնիկ բնակչություն ունենալու հանգամանքները մի անգամ չէ, որ կարևորվել են դարաբաղյան խնդրի զանազան մակարդակի քննարկումներում և այդ խնդրի լուծմանը միտված մտնեցումներում: Այս առումով արդի հայագիտության կարևոր խնդիրներից մեկն էլ Արցախի ընդգծված էթնամշակութային նկարագիր ունեցող հուշարձանների և պատմական իրողությունների հայտնաբերումը, օտումնասիրությունը և ներկայացումն է ակադեմիական շրջանակներին, պետական մարմիններին, հասարակությանն ու քաղաքական գործիչներին:

Արցախի հին ու միջնադարյան մշակույթի և պատմության տեսակետից հնագիտական հետազոտություններն առանձնակի արժեք ունեն: Պատմագիտական, լեզվաբանական, մարդաբանական մի շարք վերականգնումներ հաճախ հնարավոր է հիմնավորել կամ բացատրել հնագիտական-մշակութաբանական տվյալների դաշտում: Դա առավել ևս կարևոր է, երբ խոսքը ողն է մշակույթի էթնիկական կերպարի պարզաբանման մասին է: Գաղտնիք չէ, որ Արցախի պատմության և մշակույթի ուսումնասիրությունն ընթացել, ընթանում և, ցավոք, տեսանելի ապագայում էլ ընթանալու է քաղաքական նպատակներ հետապնդող «ընդդիմախոսների» աչալուրջ հսկողության և պատեհ-անպատեհ հարձակումների ներքո: Մասն ապայմաններում հնագիտական նյութը՝ որպես չեզոք սկզբնաղբյուր, արտակարգ նշանակություն է ձեռք բերում:

Մինչև արցախյան շարժումը հայագիտությունը գրկված էր Արցախում հնագիտական ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից: Այս ասպարեզում տերն ու տնօրենը աղյուսակների հետազոտողներն էին, որոնք հուշարձանի թե՛ ընտրությունը և թե՛ նյութի հրատարակությունը կատարում էին խիստ «ընտրողաբար»: Թաքցվում կամ ավերվում էր այն, ինչը ձեռնառու չէր, հուշարձանը պեղողի «իրավունքով» արվում էին անհիմն հայտարարություններ, առաջ քաշվում կեղծ թվագրություններ և այլն: Պատահական չէ, որ 60-ական թթ. սկսած՝ Արցախում զգալի ծավալ ստացած պեղումների արդյունքները հրատարակվում էին բացառապես մեկ-երկու էջանոց հաղորդումների տեսքով՝ գիտնականներին գրկելով նյութի աղբյուրագիտական հավաստիության մեջ համոզվելու կամ կողմնորոշվելու հնարավորությունից: Հայագիտությունն ստիպված էր ավելի հաճախ հերքել աղյուսակների հնագետների միտումնավոր մեկնաբանությունները, քան թե առաջադրել և լուծել սեփական զարգացումից ու մոտեցումներից բխող հիմնախնդիրներ:

Թվում էր՝ Արցախի ազատագրումը լիակատար հիմք էր իրատեսական այս պահասը լրացնելու համար: Սակայն այսօր էլ Արցախի պատմության և մշակույթի օտումնասիրության ասպարեզում ակնհայտորեն զգացվում է հնագիտական հուշարձանների և լայն առումով հնագիտական մշակույթի ներգրավման խիստ ցածր մակարդակը: Արցախի ներկա հնագիտական հետազոտությունները կարելի է բնութագրել որպես անհատական նախաձեռնությունների վրա հենվող, մասնավոր անձանց ու ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ու այդ իսկ պատճառով էլ բավականին սանձաճակով ծավալներ և թեմաներ ներառող բնագավառ: Թեև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում արդեն հիմնադրվել տարիներ է գործում է Արցախի հնագիտական արշավախումբը, այն իրավական և կազմակերպական որևէ կարգավիճակ չունի:

Խիստ բնութագրական պիտի համարել, որ Արցախի հուշարձանների ցանկացած հետազոտություն առաջ է բերում աղբյուրագիտական իշխանությունների բողոքը՝ ընդհուպ մինչև միջազգային կազմակերպություններ նոտաների հղումը: Ի տարբերություն աղյուսակային եռանդուն ջանքերի՝ թե՛ Հայաստանի և թե՛ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները, ցավոք, մինչև վերջերս որդեգրել էին անտարբեր կեցվածք: Անցած տարիների հնագիտական պեղումները հիմնականում ձեռնարկվել և իրականացվել են անհատ մարդկանց և հասարակական կազմակերպությունների կողմից:¹

¹ Միակ բացառությունն այսօր Արցախի Տիգրանակերտն է, որի հայտնաբերումը պիտի համարել հայագիտության վերջին տարիների նվաճումներից մեկը, և որի հնագիտական պեղումների ֆինանսավորումը 2008 թ. առանձին է և Լ.Ղ.Հ իշխանությունները:



Նման ձեռնարկների շարքին են պատկանում և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արչավայմի հետազոտություններն ազատագրված տարածքներում (Շուշի, Հանդաբերդ, Տիգրանակերտ), որոնք ոչ միայն նպատակ ունեն նորանոր փաստեր կուտակել այդ տարածքների հայկականության վերաբերյալ, այլև, որ պակաս կարևոր չէ, հազարավոր հայ վերաբնակիչների մեջ ամրասնդել իրենց ապրած տարածքների հայկականության մասին պատկերացումները, դյուրացնել նրանց կողմից նոր տարածքի հոգևոր-մշակութային յուրացումը:

Հանդաբերդի վանքի դեպքում խիստ էական է և այն հանգամանքը, որ մենք գործ ունենք սովորական, ոչ տոհմական, այսու՝ շարքային համայնականի կարիքները հոգացող կրոնական կենտրոնի հետ: Եվ նրա հետազոտությամբ վերականգնվող կերպարն էլ հայտնի չափով վկայում է հայ ինքնության առկայությունն այդ տարածքներում հենց համայնքային-ժողովրդական մակարդակով:

Հանդաբերդի վանքի պեղումների հեռահար նպատակներից մեկն էլ այս իմաստով նրանից ոչ հեռու հիմնադրված Քնարավան գյուղի բնակիչների հոգևոր պահանջումները բավարարող կենտրոնի ստեղծումն էր՝ պեղվող համալիրի վերականգնման միջոցով:

Վանքը (նկ. 1) գտնվում է ԼՂՀ Նոր Շահումյանի (նախկին Քարվաճառի) շրջանում, որը 12-14-րդ դդ. մտնում էր Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության մեջ: Այն տեղադրված է Լևոնագետի միջնահովտի աջ ափի երկարությամբ ձգվող անտառապատ լեռնաբազկի մի գոգավորության կենտրոնով դեպի գետը ձգվող հովտի բարձրադիր ափի եզրին՝ ընդարձակ բացատի հարավարևելյան կողմում՝ Հանդաբերդ ամրոցից մոտ մեկ կիլոմետր հյուսիս-արևելք:² Ցավոք, վանքի իրական անունն այդպես էլ

² Ըստ էության, հայագիտության համար այս վանքի հայտնագործման առաջնությունը պատկանում է ճարտարապետ Մուրադ Հասրայանին, որը 1985թ. այցելել է վանք և իրականացրել համալիրի սխեմատիկ չափագրությունը: Համալիրի նախնական ներկայացումը տ'նա Սիմոնյան Շ., Սանամյան Շ., Հանդաբերդի վանական համալիրը – *Տայասրանի Հանրապետությունում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նախաշրջան, Ձեկուցման թեզեր*, Երևան, 1996, էջ 71-73: Առավել մանրամասն համալիրը նկարագրված է՝ *Կարապետյան Ա., Տայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Արցախում ընկալված շրջաններում*, Երևան, 1999, էջ 24-30:

Նկ. 1 Հանդաբերդի վանքի ընդհանուր տեսքը պեղումներից հետո:



մնում է անհայտ: Հանդաբերդի վանք անունը պայմանական է և բխում է Հանդաբերդի հարևանությամբ տեղադրված լինելու հանգամանքից:

Համալիրի շինությունների հիմնական մասը, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է 1276 թ. ուն Դավիթ վարդապետի կողմից տեղում գոյություն ունեցող ավելի հին եկեղեցու շուրջը: Հետագայում ավելացվել են նոր շինություններ: Պեղումների արդյունքներով վանական համալիրը գոյատևել է մինչև 14-րդ դ. կեսերը կամ վերջերը:

Պեղումների հիմնական գիտական նպատակն էր աղբյուրագիտական բավարար հիմք ստեղծել Վերին Խաչենի նորահայտ այս վանական համալիրի բազմակողմանի պատմամշակութային հետազոտության համար: Գործնական նպատակն էր մաքրել համալիրի ավերակներն առատ բուսականությունից (ներառյալ ավելի քան երկու տասնյակ հաստաբուն ծառերը), փլուզման հետևանքով առաջացած հողի և քարի հզոր շերտից, ամբողջությամբ բացել հուշարձանը՝ հիմք ստեղծելով համալիրի մասնակի վերականգնման ու ամրակայման համար:

Պեղումները կատարվել են 2004 և 2005 թթ. հուլիս-օգոստոս ամիսներին: Դրանք իրականացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արչավիստամբը: Այն գլխավորել է պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանը, մասնակցել են ճարտարապետության թեկնածու, դոցենտ Լյուրա Կիրակոսյանը (ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիա), հնագետներ Վարդգես Սաֆարյանն (Արցախի պետական համալսարան) ու Տատյանա Վարդանետյան (ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոն):³ Այժմ համալիրն ամբողջությամբ պեղված է, 2005-2006 թթ. իրականացվել են նաև ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ, որպեսզի կանխվեն հետագա փլուզումները:

Գրքի ներածությունը, առաջին, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ գլուխները, վերջաբանը գրել է Հ. Պետրոսյանը, երկրորդ գլուխը՝ Վ. Սաֆարյանը, երրորդ գլուխը՝ Լ. Կիրակոսյանը:

Գրքում գետնորված լուսանկարները կատարել է Հ. Պետրոսյանը (բացի նկ. 30-ից, որը տրամադրել է Ս. Այվազյանը), գծագրերն ու գրչանկարները՝ Լ. Կիրակոսյանը:

³ Պեղումների մասին նախնական հաղորդումները տես **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ.**, Մշակութային հետազոտություններ Արցախում. ԳՈՒՇԻ, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, 2009, էջ 14-23: **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքի 2004-2005 թթ. պեղումները - ՀԻՆ Հայաստանի մշակույթը, թիվ 14, Երևան, 2008, էջ 247-255: **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքի 2004-2005 թթ. պեղումները - *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով (Ձևկոցումների ժողովածու)*, Երևան, 2007, էջ 446-454: **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքի 2004թ. պեղումների հիմնական արդյունքները - *Ֆին Հայաստանի մշակույթը* 13, Երևան, 2005, էջ 240-246: Պեղումների արդյունքները ներկայացվել են նաև 2005 թ. սեպտեմբերին Իսպանիայի Վիտորիա քաղաքում կայացած Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության միջազգային 10-րդ գիտաժողովում, 2006 թ. ապրիլին Երևանում կայացած «Մասնանների մշակույթ» գիտաժողովում, Երևանում՝ Նարեկացի արվեստի միությունում 2005 և 2006 թթ. կազմակերպված երկու ցուցահանդեսներում:



*Նկ. 2 Հանրաբերդի
փանրի կառույցների
հիմնական խումբը
պեղումներից հետո:*

Գլուխ Ա

Հանդաբերդի վանքը և պատմամշակութային իրավիճակը Վերին Խաչենում 13-14-րդ դարերում

Առկա նյութերով Հանդաբերդի վանքի կառուցման և գործունեության ամենածաղկուն փուլը վերաբերում է 13-14-րդ դարերին, մի ժամանակաշրջան, երբ հայ եանությունն ու մշակույթը փորձում էին պահպանել հին ավանդույթները, քայց և համակերպվել ռազմաքաղաքական անմախտեպ վայրիվերումների արտատոց իրավիճակին: 13-րդ դարի առաջին երեսնամյակը Ջաքարյանների ազատագրական առաքելության հետևանքով դինամիկ զարգացող քաղաքական հարաբերություններով, տնտեսությամբ և մշակույթով երանելի մի դարաշրջան է, որի ստեղծագործ շունչը մշակութային կյանքում գագաթում էր մինչև դարի կեսերը կամ մի քիչ էլ ավելի: 13-րդ դարի երկրորդ կեսը՝ ընդհուպ մինչև դարի վերջը, քաղաքական առումով միանգամայն այլ շրջան էր՝ դաժան օտար տիրապետություն, որի ժամանակ հիմնական միտումները դառնում են մաքսատուն ու զոյատնումը, քարեկեցության միակ ձևը՝ նվաճողին ռազմական ծառայություն մատուցելը, իսկ մշակույթի գերիմնողի՝ փոխիվող պայմաններին հարմարվելով հանդերձ հայ ինքնության պահպանությունը, մի առաքելություն, որ լավագույն կերպով դիտելի է Հանդաբերդի վանքում (նկ. 2) :

13-րդ դ. առաջին կեսին Վերին Խաչենի երկու մասերը՝ Ծարը և Հաթերքը, Ծարի իշխանական տան գերակայության ներքո էին, որն էլ իր հերթին, գոնև 13-րդ դ. առաջին կեսին, Ջաքարյանների քաղաքական ազդեցության տակ էր: Նրա աստիճաններն արևելքում հասնում էին մինչև Թարթուսի միջին հոսանքը՝ ասիանային ամրոց ունենալով Ալանան (դատելով Մևսիս վանքի մի արձանագրության տվյալներից՝ Ջրաբերդը նրանց չէր պատկանում), իսկ արևմուտքում ներառում էին Սևանա լճի հարավարևելյան ափը՝ ծայրասիան ունենալով Շոթագան:⁴ Ծարի իշխանական տունը երկրամասի գործերում կարևոր դերակատարում ստանձնեց 12-րդ դ. վերջերից սկսած, երբ նրա գերակա իշխան՝ Վախթանգի որդի Հասանն (Հասան Ա Ծարեցի) ամուսնացավ Ջաքարյան Սարգսի դուստր. վրաց արքունիքում ընդհանուր զորահրամանատարի (ամիրսպա-

սպար) և խնամակալի (աթաբակ) պաշտոնները գրադեցնող հզոր Ջաքարե և Իվանե եղբայրների քույր Դուխի հետ: Հաթերքի իշխանական տունը, որ 12-րդ դ. երկրորդ կեսում և 13-ի սկզբում իր ձեռքում էր պահում Խաչենի իշխանական ավագությունը, նրա գահերեց իշխան Վախթանգի մահով (1214թ.), որի արու գավակները գոհվել կամ մահացել էին մինչ այդ (չնայած դրանից հետո երկար տարիներ դեռ ողջ էր և ընդարձակ մշակութային գործունեություն էր ծավալում Վախթանգի այրի Արգուխաթունը)⁵, կորցնում է ոչ միայն այդ ավագությունը, այլև, հավանական է, և սեփական իշխանությունը: «Ի վեցհարիւր վաթսուն և երեք թուին գՀաթերք յԻւանէ տուին տեալր նորա. գի մեծաւ Վաղթանգ բուն տէր նորա և ոյրիք իր տարածաւ».: գրում է Ժամանակի պատմիչ. Արցախի անցուղարձին քաջատեղյակ Վարդան Արևելցին:⁶ Մակայն, ինչպես ցույց են տալիս հետագա տասնամյակներին վերաբերող սկզբնաղբյուրները (ի մասնավորի՝ արձանագրական տեղեկությունները). Հաթերքի ու ողջ Վերին Խաչենի գերակայությունն ստանձնում են ոչ թե անմիջապես Ջաքարյաններն իրենք, այլ Ծարի իշխանական տունը, որ հարս էր գնացել նրանց քույրը: Այդ գերակայությունը նախ և առաջ ենթադրում էր քաղաքական-ռազմական ենթակայություն, օրինակ՝ արձանագրությունները վկայում են, որ ծարեցիներին են անցնում այն ամրոցները (օրինակ, Հանդաբերդը, նկ. 3 և Ալանան), որոնք առաջ գտնվում էին հաթերքից իշխանների ձեռքին: Աղբյուրները հաստիկ չեն կարևորում Դուխի ամուսին Հասան Ա Ծարեցու քաջությունը ռազմի դաշտում կամ իմաստությունը կատավարման բնագավա-

⁵ Մակարավանքի մի արձանագրության մեջ հիշվում է «Մշրան, դուստր Գրիգորո, որդո Վախթանգա...»: որին Ս. Ավագյանը համարում է այս Վախթանգի վաղամեծի որդու դուստրը. տես *Իրիսան հայ վիսուպրոթասն ուրտուկոյ*. ԿՀՎ. պր. Ե. Իսկանի յոջան /Հավանցին Ս. Ա. Ավագյան. Տո. Կ. Ջաթիլոլայան. Երևան, 1977, էջ 167:

⁶ *Հասարտնն պատմութեանս Վարդանայ վարդապետի*. Վեներտիկ, 1862, էջ 140: Այստեղ խիստ ուշագրավ է «տեսար նորա» արտահայտությունը, որը կարծես նակագրված է բուն առեր նորա» արտահայտությանը: Կարելի է ենթադրել, որ «տեսար նորա»-ի տակ պատմիչը նկատի ունի Արգուխաթունին և Վախթանգ մեծի դուստրերին

⁷ *Ուլուքաբյան Բ.*, էջ 147-148.

⁴ *Ուլուքաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում*, Երևան, 1975, էջ 161-162:




ում:Ց Դատելով այն հանգամանքից, որ հետագա ժառանգներն էլ ավելի շեշտում են Դուխից ծագումը, ընդհուպ մինչև Դուխյան-Դուխանց տոհմանունի ընդունումը, ավելի քան հավանական է, որ Վերին Խաչենի միավորումը ծարեցիների իշխանության ներքո տեղի է ունեցել հենց Ջաբարյանների ակտիվ մասնակցությամբ: Սա վերջիններին ձեռնտու էր և այն առումով, որ դրանով իսկ՝ ազգակցական կապերի շղարշի ներքո, ապահովում էին սեփական գերագահությունը: 13-րդ դարի կեսերից ծարեցիներին է անցնում և հաթերքցիների կրոնական կենտրոն Դաղիվանքը, որի վանահայրը 70-ական թվականներից դառնում է Դուխի թոռ, Հասան Բ Ծարեցու որդի Աթանասը:

Ավելի բարդ է հետևել սեփական կալվածքների (որոնք որպես կանոն կոչվում են «հայրենիք») ձեռքից ձեռք անցնելու ընթացքին: Որոշ փաստեր ցուցում են, որ Ծարա ճյուղը տեղ էր դարձել նաև նոր կալվածքների, բայց թե տոհմի ձեռքում գտնվող կրոնական կենտրոններին (Խաղարի վանք, որտեղ էր տոհմի տապանատունը, Ծարի եկեղեցիներ, 13-րդ դարի կեսերից՝ նաև Դաղիվանք) արվող նվիրատվություններից բացի ուրիշ ինչ կերպ էր տեղի ունենում այդ անցումը՝ գնումների, բռնագրավումների թե մի այլ ճանապարհով, միշտ չէ, որ հնարավոր է պարզել: Ծարա ճյուղի հզորացումը տեղի էր ունենում շատ խառը և անսովոր ժամանակաշրջանում, երբ ոչ միայն Հայաստա-

նում, այլև ողջ Մերձավոր Արևելքում, կապված մոնղոլների ավերիչ արշավանքների ու նվաճումների հետ, քաղաքական-ռազմական հարաբերությունները նոր, մինչ այդ չդիտվող որակներ և ընթացքներ են ստանում: Կալվածատիրական հարաբերությունները, որոնք այս շրջանում ավելի մեծ չափով դարձան ռազմաքաղաքական հարաբերությունների անմիջական արտահայտիչը, ենթադրում էին «հայրենիք»-ի ձեռքբերման նախ և առաջ ռազմական եղանակներ, և առաջին հերթին՝ մոնղոլական զորախմբերում նրանց հետագա նվաճումներին անմնացորդ մասնակցություն: Մակայն ամենաձանրն, ըստ երևույթին, նոր նվաճողների անհավասարակշիռ, տաքարյուն ու կամայական պահվածքն էր, երբ պահի տակ կարող էին մոռացության տրվել ծառայությունն ու երախտիքը: Օրինակ, 13-րդ դ. կեսերին Դուխյան տոհմը, չնայած մոնղոլների հանդեպ ունեցած ռազմական մեծ ծառայություններին, կորցրեց իր նստավայր Ծարը (նկ. 4): Կիրակոս Գանձակեցին, պատմելով այդ ժամանակ Ծարում իրեն ինքնագլուխ մեսիա հռչակած ոմն ջրաղացպան Դավթի մոլորությունների մասին, նշում է, որ գյուղը պատկանում էր մի պարսիկի. «Եւ տէր գեղջն, քանզի պարսիկ էր, առնոյր զբաժին իւր յընչիցն, քանզի յոյժ բազումս տանէին և յօժարութեամբ տային»:⁹ Հասկանալի չէ, թե երբ և ինչ պայմաններում կարող էր Ծարը, որը իշխանության կենտրոնն էր, դառնալ պարսիկի սեփականություն: Կարելի է նույնիսկ ենթադրել, թե Գանձակեցին թյուրիմացության մեջ է: Մակայն ուշագրավ է, որ Գրիգոր Բ Ծարեցին, մի արձանագրության մեջ խոսելով իր հոր մասին,

⁸ Բացառություն է 1223թ. մի ավետարանի հիշատակարանը, որի համաձայն ոմն Մարգիս այն նվիրել է Մեծկողմանց եպիսկոպոսարանին՝ սուր Գրիգոր վանքին «Ի յիշխանութեանս հզարին Հասանայ որոյոյ Վախտանգա, և ի հայրապետութեանս տեանս Յոհաննիսի» (Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ԺԳ դար /Վազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 134):

⁹ Կիրակոս Գանձակեցի, Պարմութին Հայոց, Երևան, 1961, էջ 326:



ասում է. «Թվիս հայոց :ՉԼԸ: (1289): Աստուծով, ես Գրիգոր որդի Հասանայ, բաջ և յաղթող զարավարին եւ մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սորթից, Շողգահո եւ այլ բազում զաւատաց, կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար, *սիրեցեալ հարև ինոյ հայրենիք եւ պարզև բաշտութան*»:¹⁰ Ինչպես տեսնում ենք, արձանագրության մեջ մեր կողմից ընդգծված հատվածը հասակորեն ցուցում է, որ Ծարը Հասան Բ Ծարեցու ոչ միայն *հայրենիքն* էր, այլև *պարզևսականքը*, ինչը հիմք է տալիս ենթադրել, որ իշխանը որպես պարզև մոնղոլներից ետ էր ստացել իր իսկ կալվածքը: Պետք է ընդունել, որ մոնղոլական արշավանքների թոհուրոհին Ծարն ինչ-ինչ հանգամանքներում հայտնվել էր պարսիկի ձեռքում, և Հասանին հետագայում հաջողվել է ետ ստանալ այն:¹¹ Այստեղ տեղին է հիշել Ստեփաննո Օրբելյանի պատմության մեջ տեղ գտած մոնղոլ մի զորավարի այն արտահայտությունը, թե «թրով առածն և ոսկով գնածն

միապէս հայրենիք են մարդոյ»:¹²

Հասանի և Դովի որդի Գրիգորը (Գրիգոր Ա Ծարեցի), որն իշխանությունը ստանձնել էր մոնղոլների արշավների նախօրեին կամ ամենասկզբում,¹³ ինչպես վկայում են աղբյուրները, հենց այդ արշավանքներով էր նվաճել գերակային վայել թե՛ զորությունը և թե՛ հեղինակությունը: Կիրակոս Գանձակեցին նկարագրելով մոնղոլների կողմից 1242 թվականին Կարինի գրավումը և հետագա արշավանքները, թվարկում է մոնղոլներին դաշնակցած հայ իշխաններին, որոնց շարքում և «Գրիգոր Խաչենեցի՝ Դովին որդի, որ էր այր երկիտղած ի տեառն»¹⁴: Այս արշավանքներից Գրիգորն իր հետ հայրենի լեռնաշխարհ է բերել և հոգևոր կենտրոններին նվիրել մի շարք եկեղեցական գրքեր, որոնցից մեկի հիշատակարանում՝ գրված 1244թ., նա ներկայանում է որպես «որդի Հասանա և Դովին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց Ջարարիայի և Իւանէի»:¹⁵ Իսկ Չարեքտարի մի խաչքարի արձանագրությունում, Սևադան՝ Գրիգորի որդին, իրեն անվանում է որդի «հզար եւ յաղթող իշխանի, որ բազում բա-

¹⁰ **Քարխոտարեանց Մ.**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 405: Տարօրինակ է, որ Բ. Ուլուրարյանը պնդում է, թե «պարզև բաշտութանը» «գեղեցիկ խոսք է՝ գրված երախտագետ որդու կողմից» (**Ուլուրարյան Բ.**, էջ 316):

¹¹ Սա այնքան էլ անհավանական չի թվում, երբ նաև նկատի ենք ունենում, որ Գանձակեցին՝ խոսելով Դավիթ Ծարեցու հակա-եկեղեցական գործունեության մասին, ոչ մի անգամ չի հիշատակում տեղական իշխանների վերաբերմունքի մասին, այն դեպքում, երբ բոլոր հետո ու մտով եկեղեցական գործիչները նզովում են նրան, իսկ Դադիվանքի եպիսկոպոս Գրիգորիան ինքն է հատուկ շքանշանով Ծար այցելում և զսպում Դավիթին: Թվում է, աշխարհիկ իշխանությունների նման զսպվածությունը բացատրվում է հենց այն հանգամանքով, որ Ծարն իրոք Դովիաներիցն էր: Հասանի որդի Գրիգորն էլ՝ 1244թ. մի հիշատակարանում փաստորեն արձանագրում է սեփական տիրույթների զգալի մասի կորուստի փաստը, գրելով, թե մոնղոլները «սակախի մի թողալուցեալ նահանգէս մերոյ» (*ԺԳ դարի հիշարակարաններ*, էջ 228):


¹² *Պապնոսիան նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց*, Թիֆլիս, 1910, էջ 404:

¹³ Առաջին անգամ նա ինքնուրույն հանդես է գալիս 1224թ. մի արձանագրությունում: Այս նույն տարվանից էլ մենք ունենք նրա հոր՝ Հասան Ա-ի անվան վերջին հիշատակությունը: Կարելի է հավանական համարել, որ Հասան Ա-ն մահացել է 1224թ., որից հետո էլ նրան հաջորդել է որդին:

¹⁴ **Գանձակեցի**, էջ 280, տես նաև էջ 284՝ «Գրիգոր, Դովին որդի, մորաբուեր որդի Ջալալին»:

¹⁵ *ԺԳ դարի հիշարակարաններ*, էջ 228: Նույն հիշատակարանում Գրիգորն ավելի հաստատուն կերպով է հավաստում իր կախվածությունը Ջարարյաններից, գրելով, որ ավետարաններից մեկը Կեսարիայում իրեն տվել է «պարոնն իմ Ազան» (Անդ, էջ 229):

Նկ. 4 Ծարի սբ. Սարգիս և սբ. Գրիգոր եկեղեցիները:



ջութեամբ եհար զտաճիկը...»:¹⁶ Գրիգոր Մեծն ամենայն հավանականությամբ գոհվել է 1260թ. առաջ: Նրա որդիներից միջնակր՝ Սևադան, որը գոհվել է 1260թ.՝ երբ մոնղոլական զորքերի կազմում գրոհում էր Մարտիրոսաց քաղաքը կամ Մուֆարկինը¹⁷ (ենթադրյալ հին Տիգրանակերտը), հոր տապանի վրա կանգնեցրած խաչքարի արձանագրության մեջ հայտնում է, որ հայրը գոհվել է Երուսաղեմ մեկնելու ճանապարհին բռնկված մի կովի ժամանակ:¹⁸

Հանուն հայրենի երկրամասի կովը հզորների համար և գոհվել հետուններում՝ այսպիսի ճակատագիր էր վիճակված 13-րդ դարի Արևելյան Հայաստանի համարյա բոլոր իշխանական տների արի ներկայացուցիչներին: Հեծյալ ռազմիկը ժամանակի շունչն էր, հայրենի կավածքի անխախտության և եկեղեցու շենության գրավակակնը: Մոնղոլները ոչ միայն նվաճեցին, թալանեցին ու ավերեցին երկիրը, իրականացրին զանգվածային կոտորածներ, այլև, ինչպես նշեցինք, ստիպեցին նվաճված երկրների ռազմական ուժին մասնակցել իրենց հետագա նվաճումներին: Սա տեղական իշխանների համար տանելի մի տարբերակ էր, քանի որ մոնղոլներն այս դեպքում հրաժարվում էին ենթարկյալ իշխանական տիրույթների հետագա ավերումներից՝ բավարարվելով միայն հարկահանությամբ: Գրիգորի հիշատակարանը մանրամասնորեն և զգացմունքային շեշտադրումով է ներկայացնում այդ ծանր և անսովոր վիճակը, որ

ստեղծվել էր մոնղոլական նվաճումների հետևանքով. «Եւ ապա սակաիկ մի թողացուցեալ նահանգէս մերոյ եւ նուաճեալ ի ծառայութեան ընդեանց զիշխանս, եւ զհեծելագարս ընդ ինքեանս տանէին ուր եւ երթային, ընդ որս եւ գրաւեցայ ես՝ Գրիգոր...»:¹⁹ Մոնղոլական զորքի հիմնական հարվածող ուժը հեծելագորն էր: Եվ այս առումով է, որ Արցախի գորակն ուժի մասնակցությունը մոնղոլների համար խիստ էական էր, քանի որ երկրամասը հայտնի էր հենց հեծելագորային ավանդույթներով, որի կողմնակի վկայություններից մեկն էլ հեծյալ ռազմիկի կերպարն է Արցախի խաչքարային պատկերաբանդակում:

Ըստ հիշատակարանի՝ Գրիգորն ունեցել է երեք որդի՝ Հասան, Սևադա, Հովհաննես: Սևադան

¹⁶ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 228: Նվաճված տարածքների զինուժը հետագա արշավանքներում օգտագործելու մոնղոլական պրակտիկայի մասին շատ ավելի մանրամասն է խոսում Վերին Խաչենի հայտնի ամրոցներից մեկի՝ Ալանայի ծնունդ Գրիգոր Ալանեցին իր հանրահայտ Պատմությունում. «Յետ այտրիկ յորժամ ինացան իմաստուն իշխանքն Հայոց եւ Վրաց, թէ Աստուած է տուեալ զօրութիւն եւ յաղթութիւն նոցա (մոնղոլներին – Հ. Պ.) ասուլ զաշխարհս մեր, ապա գործ եւ սեր կապեալ, գնացին ի հնազանդութիւն Տաթարին, եւ խոստացան տալ հարկս այսինքն մալ եւ թաղար. եւ ինքեանք հեծելով գնալ ընդ նոսա ուր եւ տանիցին. եւ հաւանեալ Տաթարին թողին զկոտորումն եւ զաւերումն աշխարհին. ...Իսկ մեծ եւ անհարկ իշխանքն Վրաց եւ Աղուանից եղեն ընդ հարկաւ նոցա՝ որ կամաւ եւ որ ակամայ. եւ տային անխափան զամենայն սահմանաւ հարկան, գոր յառաջագոյն գրեցար. եւ ինքեանք ըստ ուժոյ եւ ըստ կարողութեան իրեանց հեծելովք գնային ընդ նոսա ի յայլան: ... Բայց պատճառս յաղթութեանն (մոնղոլների – Հ. Պ.) էին Հայոց եւ Վրաց իշխանքն, որ լինէին երեսք գառաջիհն, եւ ուժգին բախելով ի թշնամիս յարձակէին. եւ ապա զկնի նոցա Տաթարն նետիւ եւ աղեղամբ» (Գրիգոր Ալանեցի, *Պատմութիւն ազգին ներդասց* /Հայերեն բնագիրը և վրաց. քարգմ. Ն. Շոշիանշվիլու, Թբիլիսի, 1961, էջ 20):

¹⁶ ԳՀՎ, պր. 5. Արցախ /կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 132:

¹⁷ Վարդան, էջ 152:

¹⁸ ԳՀՎ 5, էջ 132-133:

էլ հոր նման ստիպված էր մասնակցել մոնղոլների արշավանքներին: Նա, ինչպես նշեցինք, 1260թ. զոհվեց Մուֆարիյինի գրավման ժամանակ. «սպանաւ գեղեցիկ երիտասարդն Սևադա Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի, բաջապէս մարտուցեալ և յայնոսիկ պսակեալ, հաւատ և երկիրդ պահելով զՎաստուծոյն և զԵլիանին»:²⁰ Հորը հաջորդած Հասանը, ինչպես վկայում են նրա, կնոջ՝ Մամքանի,²¹ երբեմն էլ որդու՝ Գրիգորի անունով համատեղ բազմաթիվ արձանագրությունները,²² շարունակում է արի զորականի և ավագ իշխանի բարի համբավը: Հասանն ու Մամքանը Գրիգորից բացի ունեցել են և Աթանաս անունով երկրորդ որդին, որն ընտրել էր հոգևոր գործունեության ասպարեզը: Ըստ երևույթին հենց Հասան Բ-ի որդը են ծարեցիներին անցել Դադիվանքն (նկ. 5) ու շրջակայքը: 1267թ. Դադիվանքի մի արձանագրության մեջ Հասանի կին Մամքանը իրեն, ամուսնուն և որդուն՝ Գրիգորին ներկայացնում է որպես «տէրք զոյով տեղոյս հայրենաւք».

նշելով նաև, որ այդ կարգավիճակը կամ իրավունքը «մեր պարունէքն հաստատեցին»:²³ Ավելին, կարելի է հավանական համարել, որ Դադիվանքն ու շրջակայքը նրանց էին անցել տարիներ առաջ, ինչն էլ պայմանավորել է. որ վանքի վանահայր

դառնա նրանց որդի Աթանասը: Այսպիսով, ավելի բան հավանական է, որ մոնղոլների նվաճումներով ծարեցիների տիրույթները զգալի չափով նվազել էին, ինչպես Գրիգոր Ա Ծարեցին է գրում «սակալիկ մի թողացուցեալ նահանգէս մերոյ»:²⁴ սակայն Հասան Բ Ծարեցուն հաջողվել է ետ վերադարձնել կորուստները, գուցե նույնիսկ և ընդարձակել նախկինում ունեցածը:

Ահա հենց նման պատմական գործընթացների ետնախորքի վրա էր, որ 1276թ. Դավիթ անունով մի վարդապետ ընդարձակ շինարարական գործունեություն ծավալեց Հանդաբերդի վանքում. «:ՉԻԵ: (1276) թ./ ԱՎ շինեցաւ ժամա/տունս եւ եկեղեցիքս ԴՎալիթ վարդա/պետ ի/ ձեռաւք: Ազատեցին զս/ա հաթերքեցիքն լճամենայն չարէ:/ ԱՄ արինի զնոսա: Ով/ խափանէ՝ դատի», – կարդում ենք վանքային համալիրի առանձին կանգնած հյուսիսային մատուռի բարավորին: Ինչպես տեսնում ենք, վանքի շինարարական արձանագրությունը չի հիշատակում գահերեց իշխանի անունը, ինչը որ խիստ տարակուսելի է նմանաբնույթ արձանագրությունների համար: Ավելին, արձանագրությունը հայտնում է, որ վանքը տարատեսակ հարկերից ազատել են «հաթերքցիները» («Ազատեցին զսա (այսինքն՝ վանքը – Հ. Պ.) հաթերքեցիքն յամենայն չարէ: ԱՄ արինի զնոսա»), որի տակ, առաջին հայացքից, այնքան էլ պարզ չէ, թե ինչ պիտի հասկանալ: Պարզ է, որ վանքը հարկերից իրավասու էին ազատել միայն այն զեռականները, ում տիրությունը այն գտնվում էր: Հայրենական հողերի կորուստը, ետրերումը կամ նորի ձեռքբերումն արագընթաց փոփոխությունների այս շրջանում, ինչպես տեսանք, բավականին տարածված էր, ուստի, բացառված չէ, որ Հանդաբերդին կից տարածքը, ուր հիմնվել էր վանքը, Հաթերքի պայազատներին էր անցել նման վայրիվերումների շնորհիվ (նկ. 6): Ընդ որում, քանի որ այստեղ չեն հիշատակվում կոնկրետ անձինք, կարելի է ենթադրել, որ խոսք է գնում արդեն բավականաչափ թուլացած տոհմի կամ էլ, նույնիսկ, մոնղոլների կողմից նշանակված ինչ-որ նոր տոհմի մասին: Եթե նկատի

²⁰ «Կարդան, էջ 152: Ոչպարզավ է, որ պատմիչը Գրիգորին անվանում է մեծ, ինչը կարելի է հասկանալ այն իմաստով, որ նա Վերին Խաչենի ավագ իշխանն էր: Զարմանալի է, երբ Բ. Ուլուբաբյանը գրում է, թե Վարդանը Գրիգորին մեծ իշխան է համարում բազմիցս («այն էլ քանի անգամ»), այն դեպքում, երբ Գրիգոր մեծ իշխանը Վարդանի Պատմության մեջ հիշատակվում է միայն մեկ անգամ՝ այն էլ, ինչպես տեսանք, իր որդի Սևադայի զոհվելու կապակցությամբ: Գրիգորին մեծ իշխան է անվանում և Մտեփանոս Օրբելյանը (տես ստորև):

²¹ Փաստորեն՝ Մամքան էր կոչվում թե՛ Հասանի մայրը (ծագումն անհայտ է) և թե՛ կինը (որը Քուրդ Վաչուտյանի դուստրն էր):

²² Դրանց մանրամասն բնութայուն տես *Ուլուբաբյան Բ.*, էջ 239-241:

²³ ԳՀՎ 5, էջ 206, ուր հրատարակիչներն ակնհայտորեն վրիպել են թվականը՝ Ժ-ի փոխարեն կարգադրել Ծ: Ծավոր արձանագրությունը չի հառակցնում, թե ովքեր են պարոները: Գծվար թե՛ դրանց դերում հանդես գալին Ջաջարյանները, որոնք Ավագի մահվանից հետո (1250թ.) կորցրել էին իրենց քաղաքական եզրորոշումն ու ազդեցությունը Վերին Խաչենում: Նկատի ունենալով, որ Այրթի և Աղբի ժամանակով սրան նույն արձանագրություններում Հասանը, Մամքանը և Գրիգորը հանդես են գալիս որպես տարածքի գերակա տերեր (ԳՀՎ 4, էջ 315, 317, 328), ավելի քան հավանական է, որ պարոների տակ սովոր գեալում ներառի են ամբված մոնղոլ իշխողները:

²⁴ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 228:



ունենանք, որ Հանդաբերդի վանքի խաչարարից մեկի արձանագրության մեջ Գրիգորը խնդրում է հիշել իր ծնողներ Հասանին ու Մամբանին, կարելի է նույնիսկ հավանական համարել, որ Գրիգոր Բ Ծարեցու ժամանակ այս տարածքն էլ արդեն (գուցե և վանքն ամբողջությամբ) անցել էր ծարեցիներին: Քանի որ Հասան Բ Ծարեցին մահացել է 1287թ.²⁵, այսինքն խաչարար կանգնեցվել է դրանից հետո, կարելի է ենթադրել, որ Հաթերքը Վախթանգի մահից (1214թ.) հետո էլ որպես կալվածք մնում էր Հասան Մեծի հետնորդների ձեռքում: Նույնիսկ Կարապետ եպիսկոպոսի այն եզրակացությունը, թե Ծարի 1430թ. արձանագրությունը վկայում է, թե այդ ժամանակ հաթերքցիներից ոչ ոք չէր մնացել, և Հաթերքն արդեն պատկանում էր Դոփյաններին,²⁶ հավանական չէ: Ծարի Գետամիջի վանքի մի գեղաբանդակ խաչարարի արձանագրությունը, որը հետագոտողին նման համոզման էր բերել (ցավոք խաչարար խորհրդային տարիներին հարյուրավոր այլ հուշարձանների պես աղորեջանցիների «գոհն» է դարձել), ընդհակառակը, մի խոսում վկայություն է այն մասին, որ գահերեց լինելու ու կոնկրետ կալ-

վածքների սեփականատեր լինելը տարբեր բաներ էին: Արձանագրությունը հայտնում է. «Աստոծով, ես Սայտի, որդի պարոն Շանշին, բայց և յաղթող զարաւարին ես մեծ իշխանաց յագգէն ես ի թուին ԳՀԹ (1430). տեղեացս տէր ես պարոն Փոքր Սինեաց, Ականայ, Հաթերքոյ եւ Հանդաբերքոյ եւ ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաբայ՝ կանգնեցաք զխաչս հար մերոյ Շանշին...»:²⁷ Ինչպես տեսնում ենք, Սայտին իրեն համարում է «տեղեացս (այսինքն Ծարի և շրջակայքի – Հ. Գ.) տէր», բայց «պարոն Փոքր Սինեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերքոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաբայ», այսինքն՝ առաջին դեպքում խոսք է գնում սեփական տիրույթների, իսկ երկրորդ դեպքում՝ միայն ենթակա տիրույթների մասին, ինչը չի բացառում, որ այդ տարածքների մի մասը կարող է հանդիսանալ տեղական զանազան իշխանների և տոհմերի սեփականությունը: Ըստ երևույթին պարոնությունն արտահայտվում էր նրանով, որ գերակային էին պատկանում նախ և առաջ պաշտպանական և հարկային իրավասությունները:

Ինչպես տեսանք, մինչև 13-րդ դարի կեսերը հաթերքցի պայագատների ձեռքին էր մնում նաև Դաղիվանքը: Այս տեսակետից նշանակալից է, որ 1241թ. վանքի կաթողիկեի պատերին նվիրատվական արձանագրություններ են թողել Հաթերքի մեծ իշխան Հասանի (Հասան Կրոնավորյալ՝ 1142-1182 թթ.) թոռները, Վախթանգի

²⁵ Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրության մեջ ՉԻԲ (1287) թվականի տակ կարդում ենք. «Զմեռն խիստ եղև: Մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աբարակ որդի Ջալային, և Հասան, թոռն Դալէիին և ապա մեռաւ Ճարն ի Տիխիս» (*Մանր ժամանակագրություններ*, հ. 1 / Դազմեց՝ Վ. Բ. Տակոբյան, Երևան, 1951, էջ 48):

²⁶ Տէր-Մկրտչեան Կ., Դուիեանք կամ Մեկիք Շահնագարեանք, Նիսբեր հայ մեկիքութեան մասին, պր. Բ, Էջմիածին, 1914, էջ 89:

²⁷ Արցախ, էջ 408:

Նկ. 6 Լևոնագետի հովիտը, որի միջնամասում գտնվում է Հանդաբերդի վանքը:

դոստր Մաման, Սմբատի որդիներ Վախթանգն ու Սևադան:²⁶ Կարելի է նույնիսկ ենթադրել, որ սա հաթերքցիների վերջին փորձն էր նյութապես ամրապնդել իրենց պատկանող վանքը: Ասում ենք փորձ, քանի որ հետագա դեպքերը վկայում են նրանց ազդեցության թուլացման և, ի վերջո, վանքը ծարսեցիներին զիջելու մասին:

Գրիգորին հաջորդած Հասան Բ Ծարեցուն էլ աղբյուրները ներկայացնում են քաջ զորականի կերպարով: Տեսանք, որ հենց այս Հասանն էր, որ իր ռազմական հաջողությունների շնորհիվ ևս ստացավ հայրենի Ծարը, իր իշխանության տակ վերատավ Ականան, Հանդաբերդը, Սոթը, Շողվազը:²⁹ Մոդրում այս իշխանական տան ունեցած գերակայության մասին վկայությունները հատկապես վերաբերում են հենց Հասան Բ-ի և նրա որդի Գրիգոր Բ-ի ժամանակներին:³⁰ Նույնը կարելի է ասել և դեպի արևելք նրանց ունեցած սահմանների մասին: Մռավի փեշերին գտնվող Մեսիս վանքի իր մի ղեղարձակ արձանագրության մեջ Հասանի որդի Գրիգորը նշում է, որ թեև Չարաբերդը (Ջրաբերդը) գտնվում էր տաճիկների ձեռքին, իրեն հաջողվել է Աստու օգնությամբ պահել Ականան: Գրիգոր Բ-ի որդի Սարգիսը 1312թ. գրած մի հիշատակարանում այսպես է բնորոշում իր հորն ու Ծարի իշխանության սահմանները. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ և երևելի տոհմային պայազատութեան. ի ցեղ վեհից, ի գարմի, դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ զովելեաց, Գրիգոր իշխան Հայոց՝ տէր և պարոն Փոքր Սիւնեաց՝ Հանդաբերդոյ, և Ականոյ, և բարձր յերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղուագայ»:³¹

Դարի կեսերին մոնղոլական հսկայական տիրույթները բաժանվեցին առանձին պետությունների միջև: Մանգու խանի եղբայր Հուլավուն

հիմնադիրն է դառնում մոնղոլա-իրանական մի պետության, որի կազմի մեջ էին մտնում Իրանը, Ատրպատականը, Արևելյան Վրաստանը, Հայաստանը, Ռուսը, Քրդիստանը, Իրաքը: Հուլավյան և Ոսկեհորդյան իլխանությունների ստեղծումով մի ժամանակավոր դադար էր տիրում Մերձավոր Արևելքում: Պատերազմներից ու ավերածություններից մի փոքր շունչ քաշելով՝ ժողովուրդը՝ մոնղոլական հեռավոր արշավանքներից վերադարձած և որոշակի դիրքի հասած իրենց իշխանների գլխավորությամբ 13-րդ դարի 60-ական թվականներից փորձեց կրկնել այն վերելքը, ինչը դիտվել էր արդեն Ջաբարյանների ազատագրական մարտերի հետևանքով: Ինչպես ցույց են տալիս փաստերը՝ այս վերելքը շատ ավելի համեստ էր: Հնագիտական հետազոտությունների ներկա մակարդակը ցավոք հնարավորություն չի տալիս ուրվագծել տնտեսական փոփոխառես հատակ պատկեր: Սակայն լայնածավալ շինարարությունները մի քանի հոգևոր կենտրոններում (Դադիվանք, Կոչիկ անապատ, Եղիշև առաքյալի վանք և այլն), խաչքարակերտության նոր ալիքը, վանքերին արվող անշարժ և շարժական ինչքի բազմաքանակ նվիրատվությունները նման ենթադրության համար ավելի քան բավարար հիմք են:

Հուլավու (1256-1265 թթ.) և Աբադա (1265-1282 թթ.) խաների ժամանակ հայ իշխանական տները շարունակում են մասնակցությունը մոնղոլների արշավանքներին, և նրանց կարգավիճակը հայտնի չափով պարմանավորված էր ռազմական ասպարեզում ունեցած հաջողություններով: Ինչպես դիպուկ նկատել է Բ. Ուլուբաբյանը, Հասան Բ Ծարեցին շատ ավելի արշավանքներում է եղել. քան տանը, քանի որ նրա կին Մամբանը և որդի Գրիգորն իրենց արձանագրություններում նրա մասին խոսում են որպես ողջի. բայց հայրենիքից բացակայողի:³² Հասան Բ-ն եղել է ժամանակի հայ ամենահայտնի զորականներից մեկը և Խաչատուր Կեչառեցին իր հանրահայտ «Ողբում» նրան պատկերում է որպես մեկն այն սյուներից, որոնց կորուստով վրա է հասնում Արևելյան Հարաստանի կործանումը.

²⁶ ԳՏՎ 5, էջ 202-203:

²⁷ 13-րդ դարում Հաթերքն ադրպես էլ չանցավ ծարսեցիներին. Ավելի քան հավանական է, որ այն Ջաբարյաններից մոնղոլները խել էին, բայց թե կոնկրետ ում էին հանձնել մտնում և անհայտ: Հանդաբերդի վանքի չինարարական արձանագրության «հարկերցիք» անույն արտահայտությունը կողմնակի վկայություն է այն համոզմանը, որ Հաթերքը պատկանում էր ոչ թե ծարսեցիներին, այլ ոչ նշանավոր մի տոհմի:

²⁸ Տես ԳՏՎ 4, էջ 315, 317, 328

²⁹ ԺԳ վարդի հայերեն ներազգրի հիշարակարաններ, էջ 84:

³⁰ Ուլուբաբյան Բ., էջ 239:

«ՋՀասանն իշեմ ըզխայնենցի,
 Որ մականուամբ էր որդի Դօսիի,
 Հանց յուծրնդակ էր ինքն յատենի՝
 Քան գՔրիստոսի նշանն ի բնմի»:³³

Հայ միջնադարյան դավանաբանական երկերում խաչը մի անգամ չէ, որ ներկայացվում է որպես ամենահաղթ զենք, իրողություն, որն իր լիարժեք արտահայտությունն է գտել և խաչքարային մշակույթում:³⁴ Եվ Հասանին ամենահաղթ խաչի հետ համեմատելը իրացուցիչ անգամ վկայում է նրա՝ որպես քաջ զորականի, ունեցած հեղինակության մասին:³⁵

Հասան Բ-ին հաջորդած Գրիգոր Բ-ն նույնպես հայ իշխանագույնների շարքում մեծ հեղինակություն էր վայելում: Գրիգոր Բ-ին վերաբերող արձանագրական մի քանի տեղեկություններ ներկայացնում են զավակների հանդեպ հայ իշխանական տներում տիրող առանձնահատուկ խանդավառատանքը և ընդհանրապես երեխաների հանդեպ հայ հասարակության հատուկ վերաբերմունքը: Ուշագրավ է, օրինակ, որ Այրքի սբ. Աստվածածին եկեղեցու շինարարական ար-

ձանագրության մեջ հայտնվում է, որ տաճարը կառուցվել է «իշխանութեամբ մեծին Հասանա եւ Մամբանա եւ աստղանշան որդայն Գրիգորի...»:³⁶ Նման անվանումների արժեքը շատ ավելի է մեծանում, եթե նկատի ենք ունենում, որ այդ պատկերացումներն իրենց արտահայտությունն են գտել նաև արցախյան խաչքարերի պատկերաքանդակներում և, ի մասնավորի, մեր վանքի մի հայտնի խաչքարային հորինվածքում, որը ներկայացնում է հայ մշակույթում եզակի՝ երեխային կուրծք տալու տեսարանը: Ստեփանոս Օրբելյանը Տարսայիցի դուստր Ասիայի ամուսնությունը հիշատակելիս հատուկ շեշտում է, որ այս հզոր իշխանի դաստրը կնության էր տրվել «մեծի և փառաորեալ իշխանին Խաչենոյ Գրիգորոյ՝ որդոյ Հասանայ, որդոյ մեծի Գրիգորին, որ էր բեռորդի Աթաբէկ Խանէի»:³⁷ Մարգարի հիշատակարանում, ինչպես տեսանք վերը, նա է «մեծ և երևելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի գարմէ դիցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելակաց», իսկ Հասան Բ-ի եղբայր Հովհաննես Լախկոպոսի Դաղիվանքում գտնվող տապանաքարի արձանագրության մեջ Գրիգոր Բ-ն նույնիսկ հորջորջվում է որպես «արքաշնորհ իշխան»:³⁸ Հենց այս Գրիգորն է, որ մեր վանքում խաչքար է կանգնեցրել՝ խնդրելով հիշել իր ծնողներին: Ցավոք՝ խաչքարը թվագրված չէ, կարելի է միայն նկատել, որ հարազատներին ներկայացնող հիշատակային բնույթի խաչքարերը, որպես կանոն, կանգնեցվում էին (և արձանագրություններն էլ փորագրվում էին) հարազատների մահվանից

³³ Ալիշան Ղ., *Տայտպագրում*, Խ. Բ. Վենետիկ, 1901, էջ 527: Իգուր չլ. Կեչառեցին այստեղ օգտագործում «մականուամբն» արտահայտությունը, Հասան Բ-ն իրականում Գոսիի ոչ թե որդին էր, այլ թոռը: Այս տոհմի համար ըստ երևույթին «Գոսիի որդի» արտահայտությունն ավելի պատվաճանր էր, քան ազգակցության կոնկրետ աստիճանը ցուցող արտահայտություն: Այսպես, Ծարի սբ. Սարգիս եկեղեցու շինարարական արձանագրության մեջ կարդում ենք. «Թւին :ՉԻԼ: (1279), ի հայրապետու թի սր Արամաթի, ի պարտության Գոսիին որդոյն, Ռհան երեց ու Ռուանես շինեցար զսբ. Սարգիսս կենաց բարեխաւս, հոգոց փրկութի...» (ԴՀՎ 5, էջ 218): Քանի որ Հասան Բ-ն մահացել է 1287թ., ավելի քան հավանական է, որ այս դեպքում Գոսիի որդի է կոչվում Հասանի որդի Գրիգոր Բ-ն: Այս իրողությունը հաստատվում է և Գրիգորի որդի Սարգիսի վերոհիշյալ հիշատակարանով (գրված 1312թ.), որ կարդում ենք. «զամենարինեալ պարունաց պարոն Գրիգոր որդի Գոսիի» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշագրականներ, Երևան, 1950, էջ 84):

³⁴ Լեւոնթանյան տն. *Պնտրության Հ., Խաչքարերի անվանաբանական համակարգը և Սուրբ Սարգիս խաչքարերը - Սուրբ Սարգիս, Գրիգորի մի կրթություն*, Երևան, 2002, էջ 60-79: *Նույնի, Խաչքար. ծագումը, պրոստրուկցիա, պարկերապարտությունը, ինտերպրետացիան*, Երևան, 2008, էջ 367-370):

³⁵ Ղեւոնդ Ալիշանը խաչատուր Կեչառեցու՝ Հասանի վերաբերյալ համեմատությունը քաջատրում է այսպես. «Այնպես գորատր էր և ազատիչ ներելոց՝ ինչպես Քրիստոսի Ս. Խաչն, եթե ներսի այս համեմատութիւնն» - Ալիշան Ղ., *Նշվառի...*, էջ 529:

³⁶ ԴՀՎ 4, էջ 317: Լիկնկ աստղանշան քրիստոսարանական ընկալմանը նշանակում է նմանվել Քրիստոսին, կրկն աստվածային հատուկ բարեհաճությունը: Քրիստոսն է ծնվել հատուկ աստղի տակ և Քրիստոսի երկրորդ գալուստն է, որ թագաժողով այլ նշանների հետ մեկտեղ ցուցվելու է Արևելյան ծագող հատուկ աստղի՝ այսպես կոչված «աստղն աստուտի» միջոցով: Ուշագրավ է, որ խաչքարային մի շարք հորինվածքներ համախոհ ներառում են և այդ աստղը՝ որպես ցուցում Քրիստոսի երկրորդ գալուստի, և վերջին օրերին շարեհան վերաբերմունքի ակնկալիչ կոնկրետ այն հավատացյալի (հավատացյալների) խանդեպ, ում նվիրված է խաչքարը: Իսկ Հանգարեթի մեր պատկերաքանդակում, ինչպես կտեսնենք, մասնակց պատկերված է որպես «աստղանշան»:

³⁷ Օրբելյան, էջ 424:

³⁸ ԴՀՎ 5, էջ 214:

հետո, ուստի մեր խաչքարը կարող է վերաբերել 13-րդ դ. վերջերին կամ 14-ի սկզբին: Գրիգոր Բ-ն նվիրատվական մի արձանագրություն է թողել Բջնիի սբ. Աստվածածին եկեղեցու պատին. «Ի :ՉԾԲ: (1303թ.) կանա Ամենակալին Այ, ես Գրիգոր իշխան, որդի Հասանա իշխանի, թոռն Դավիթին, միաբանեցա սբ Նշանիս եւ ետու արդիւնս ի սբ ԱԾածնիս եւ սպասատրք սքրոցս հաստատեցին ի տարին :Բ: աւր պատարագ՝ :Ա: Հասանա առնեն եւ :Ա: Մամբանա անխափան»:³⁹

Պատիւի և հոր նման Գրիգոր Բ-ն էլ, հավանական է, հաճախ էր գտնվում հեռավոր արշավանքներում, և այս դեպքում էլ մեզ հասած արձանագրությունների հիմնական մասը գրված է նրա կին Ասփայի անունից:

14-րդ դարի 10-ական թվականներից, պատմական թատերաբեմից Գրիգորի և Ասփայի հեռանալուց հետո, աստիճանաբար թուլանում է ծարեցիների իշխանությունը և նրա ավագ իշխանների մասին տեղեկություններն էլ ավելի սուղ են: Եսայի կաթողիկոսն իր հայտնի ձեռագրում, ուր հեղինակն իրեն հասու արձանագրական տեղեկությունների հիմամբ փորձել է տալ Դոփյան տոհմի սերնդաբանությունը,⁴⁰ հայտնում է, որ Գրիգորի և Ասփայի թոռ՝ Վահրամի որդի Սարգիսը «բազում արդիւնս արարեալ՝ եւ մի ի բազմացն այս է գեղեցիկ գանգականին ի Դատի վանս. ի Խաթրի վանս. ի Գետամէջ. ի գեաղարադարն Ծար. եւ է մինչ ցայսօր»:⁴¹ Ըստ նրևույթին. նման տեղեկության համար հինք ևն հանդիսացել եննց գանգերի վրայի արձանագրությունները: Ի մասնավորի, հայտնի է, որ Դադիվանքի գանգերից մեկը կրում էր Վահրամի որդի Սարգսի արձանագրությունը՝ թվագրված 1314թ.:⁴² Արձանագրական երկու տեղեկություններ Գրիգորի որդի և Դադիվանքի

վանահայր տեր Սարգսին հիշում են 1309 և 1312 թթ.:⁴³ 1312թ. գրած հիշատակարանում Սարգիսն այսպես է ներկայացնում Գրիգոր Բ-ի ընտանիքն ու իրեն. «(Գրիգորն) Ամուսնացեալ ընդ դստեր Տարասիճ իշխանին, ընդ ամէնօրինեալ պարկեշտ տիկնոջն Ասփայի, ծնանի ի սմանէ ուստերս և դստերս, իսկ մինն, որում անունն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստնդեալ հասակին, որ արժանատրութեամբ ի կոչմանէ հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան տանն Խաչենոյ...»:⁴⁴ Կարելի է հավաստել, որ 14-րդ դարի սկզբներին Վերին Խաչենում գործում էին երկու Սարգիս, որոնցից մեկը Գրիգոր Բ իշխանի որդին էր և Դադիվանքի վանահայրը, իսկ երկրորդը՝ նույն Գրիգորի թոռն էր և Վերին Խաչենի ավագ իշխանը:

14-րդ դարի կեսերից սկսած՝ մոնղոլական լայնածավալ իշխանության խճորումների ու հաճախացած ասպատակությունների հետևանքով՝ երկրի ահագնացող քաղաքական ու տնտեսական վայրէջքի պայմաններում հայ իշխանական տներն ավելի մասնատվում և թուլանում են: Ծարի իշխանական տունը, ի շարս այլ տների, հզոր հարված է ստանում ողջ Հայաստանը ավերակների վերածած՝ 1387թ. լենկթեմուրյան արշավանքների ժամանակ: Գրիգոր Խաթեցին իր չափածո երկում առանձնահատուկ շեշտում է այն աղետը, որ հասավ Ծարի իշխանական տանը.

«Այ և զՀասանն Ծարեցին
Երեք որդուլքն զենեցին.
Չի ըզնոցին ամուրն առին.
Եւ գրագունս գերեցին»:⁴⁵

Եսայի կաթողիկոսի կազմած ցանկի համաձայն, Գրիգոր Բ-ին հաջորդել է նրա որդի Վահրամը, նրան՝ Սարգիսը և Սարգսին էլ՝ Հասանը:⁴⁶ Խաթեցու Հասանն ըստ նրևույթին նույնական է Եսայի կաթողիկոսի հիշած Հասանի և

³⁹ **Շահնաթուրունանց Յ.** Մտորագրութիւն կարողիկէ Էջմիածնի եւ հինգ գատաացն Արարսաայ, Էջմիածին, 1842, հ. Բ, էջ 185: Ինչպես տեւանում ենք, այստեղ էլ Գրիգորը հորջորջվում է որպես Դոփի թոռ:

⁴⁰ Ճիշտ է՝ ոչ միշտ փաստարկված, տե՛ս **Ուլաբարյան**, էջ 153-155:

⁴¹ **Արցախ**, էջ 207:

⁴² Մանրամասները տե՛ս **Կարապետյան Ս., Լշվ. աշխ.**, էջ 121:

⁴³ **ԴՎՎ 5**, էջ 205, 207:

⁴⁴ **ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, էջ 84:

⁴⁵ **ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, մ. Ա / Կազմեց **Լ. Ս. Խաչիկյան**, Երևան, 1955, էջ 275-276:

⁴⁶ Թերևս ավելի իրական է, որ Վահրամին հաջորդել է Հասանը, իսկ հոգևորական Սարգիսը տեղ է կանգնում Վահրամի կամ Հասանի եղբայրը:



Գաղիվանքի մի անթվական արձանագրության այն Հասանի հետ, որը ներկայացվում է որպես Գոնցայի որդի, Քուրդ Անրերդեցու դուստր, վաղամեռիկ Թաթունի կամ Թանթունի ամուսին:⁴⁷

1411թ. գրված մի ավետարանի հիշատակարանի համաձայն, իշխանական տան կոտորածը շատ ավելի սահմակեցուցիչ է եղել: Այն խնդրում է հիշել «սրախողխող կոտորելոցն և արխնաներկ դիաթաուալ նահատակելոցն՝ նախ մեծաշուք իշխանին Հասանայ, որդույ Գարին, և ամուսնույ իրոյ Խոնձային և գաւակացն իրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շիրվանին, նաև թագազարմ իշխանին Սաղունին, գոր տէր տէրանց և թագաւոր թագաւորաց ընդ սրբոյ թագաւորացն և բարեպաշտ իշխանացն դասեսցէ և պատկեացէ զնոսա...»:⁴⁸

Պատմաքաղաքական այս պայմաններում էր, որ առանձին վարդապետներ իրենց հարագատ կամ ոչ հարագատ իշխանների օգնությամբ կամ ինքնուրույն հիմնում էին զանազան վանքեր ու մենաստաններ, կամ ընդարձակում նախկինում եղածները: Եվ եթե 13-րդ դարի առաջին կեսն ավելի ներկայանում է ճարտարապետական իսկական գլուխգործոցներով՝ կառուցված գահերեց իշխանների նախաձեռնությամբ, միջոցներով ու վերահսկողությամբ, ինչպիսիք են, օրինակ, Գանձասարի տաճարն ու գավիթը, Արգուխաթունի եկեղեցին Գաղիվանքում, ապա երկրորդ կեսում նորակառույցներն ավելի հաճախ ձեռնարկվում են հենց հոգևորականների կողմից՝ նրանց միջոցներով և նույնիսկ ֆիզիկական ջանքերով (նկ. 7): Ճարտարապետական լուծումներն ու տեխնիկական կատարումներն էլ անհամեմատ համեստ են: Այդ պարզ ու անպաճույճ կառույցները մի կողմից աներկրա վկայություն են քաղաքական և տնտեսաշակտության անկման: Մյուս կողմից էլ դրանք յուրօրինակ մի շտեմարան են պարզելու, թե մշակույթն ինչպես էր արձագանքում ծանր պայմաններին և փորձում հարմարվել՝ պահպանելով ազգային ինքնության հիմնական նվաճումները:

Հանդարերդը, որը տարածքի ամենաընդարձակ և թերևս ամենահզոր ամրոցն է, եկեղեցական որևէ կառույց չունի, և ավելի քան հավանական է, որ վանքը նախ և առաջ սպասարկել է բերդի բնակիչների հոգևոր պահանջմունքները: Այդ մասին կողմնակի վկայում է նաև վանքում

Նկ. 7 Չափնիի վանքը
Հանրաբերդի վանքի
մերձակայքում, 12-14-րդ
դդ.:

⁴⁷ «Կանան Այ և Գոնցու ու որդիքս՝ Հասան ու Վարհամ, բոռն Գուփանց, տվաք ի Գաղի վանս զմեր հայրենիքն զԼուղ իր սահմանովն, խասովն, վերին մարզով, վանս սիրական հարսինն մեր Թաթունին՝ դստերն Քրդին Անրերդեցի՝ ամուսնո Հասանա, և միարանքս սահմանեցին :Ը: արեցն :Ը: պատարագ վանս Լուինն, արդ ով զԼուղի Գաղի Վանաց հանձ կամ զժամն խափանե՝ :ՅԺԸ: հայրապետացն նգոված է» (ԴՀՎ 5, էջ 203): Իրավացի է Ս. Բարխուդարյանը, երբ նշելով, որ Քուրդ Անրերդեցին գործել է 14-րդ դ. առաջին կեսին, արձանագրություն էլ համարում է այդ ժամանակի (Նույն տեղում): Պետք չէ այս Քուրդին շփոթել իր նույնանուն պապի հետ, որի դուստր Մամբանը ամուսնացած էր Հասան Բ. Ծարեցու հետ:

⁴⁸ Մխավում է Բ. Ուլուբաբյանը, երբ գտնում է, թե Խոնձան նույնական է Գաղիվանքի արձանագրության մեջ հիշատակված Գոնցայի հետ (Ուլուբաբյան Բ., էջ 328): Գոնցան արձանագրության մեջ ներկայանում է որպես Հասանի մայր, այն դեպքում, երբ Խոնձան Հասանի կինն է: Ընդ որում, հավանական է, Խոնձան Հասանի երկրորդ կինն էր, քանի որ նույն արձանագրության մեջ խոսվում է Հասանի վաղամեռիկ կին՝ Թաթունի համար պատարագներ սահմանելու մասին:

Մասնա Հանդաբերոցո թողած արձանագրութիւնը, որը նաև Վերին Իտալիոնի ձեռնազորն էր, հեծյալ ռազմիկների քանդակները պեղումներից հայտնաբերված երկու յառքարերի վրա և այլն:

Մենք առայժմ կոնկրետ գրավոր կամ էլ հնագիտական տվյալներ չունենք վանքի ավերման մասին: Ավելի հավանական է, որ այն ուղղակի 14-րդ դ. երկրորդ կեսին աստիճանաբար լքվել է:



Նկ. 8 Մարտիարի ման
ընթացքը:

Պեղումները կատարվել են 2004 և 2005 թթ.՝ տարեկան մեկական ամիս տևողությամբ: Դրանք ընթացել են ըստ շինությունների հատակագծածավալային ուղվագծերի, իսկ ցանցային համակարգն օգտագործվել է հնագիտական գտածոների վավերացման համար:

2004 թ. պեղումները

ա) *Տիևակյան խմբի պեղումները:* Մինչև պեղումներն սկսելը, համալիրի ողջ տարածքը, ներառյալ և շինությունները, նախ մաքրվել են ծառերից ու թփերից (նկ. 8, 9):

Այս տարվա պեղումների արդյունքում բացվել են զանգակատան արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի ներքնամասերը, ժամատուն-գավթի հյուսիսարևմտյան, հարավարևմտյան, հարավային պատերն արտաքուստ, նրան կից մատուռի հյուսիսային, արևելյան ու արևմտյան պատերն արտաքուստ, գլխավոր եկեղեցուն կից հարավային մատուռի հարավային պատն արտաքուստ և արևմտյան պատի մի մասը, հյուսիսային մատուռի հյուսիսային և արևելյան պատերն արտաքուստ: Այս հատվածներում պեղումներն ըստ էության կրում էին մաքրման բնույթ: Հետագված լիցքի մեջ մեծ թիվ էին կազմում կղմինդրների բեկորները, մեկ տասնյակի չափ խաչքարերի և խաչային հորինվածք կրող շինաքարերի բեկորները:

բ) *Տյուսիսային մազուռի պեղումները:* Մատուռի մեծ մասը մինչև պեղումները գտնվում էր հողի տակ, այնպես որ մատուռ կարելի էր մտնել արևմտյան ճակատի մի անցքով: Պեղումներն սկսվեցին մատուռի հարավային կողմում: Այստեղ փորձում էինք գտնել կառույցի հարավարևմտյան անկյունից դեպի հարավ ընթացող հենապատի շարունակությունը: Աշխատանքների ընթացքում պարզվեց, որ հենապատը դեպի հարավ ձգվում է 4,0 մ: Դրանից հետո պեղումները շարունակվել են

մատուռի արևմտյան հատվածում արտաքուստ՝ նայատակ ունենալով բացել մատուռի մուտքը և մատուռի ներսը մաքրել լցված հողից:

Առաջին շերտը 25 սմ խորությամբ հանելուց հետո հայտնաբերվեցին պահուսակները, որոնց վրա ժամանակին դրվել էր մատուռի շինարարական արձանագրություն ունեցող բախավորը (այն հիմա ընկած է մատուռից մի քանի մետր հեռավորության վրա):

Մատուռի ներսը մաքրելու ընթացքում հայտնաբերվել են մարդու տարբեր ոսկորներ, այդ թվում՝ զանգի մի փոքր հատված (ճակատային մասն աջ աչքի խոռոչի հետ): Մատուռի ներսում 110-120 սմ խորության վրա բացվել է տարբեր ոսկորների մնացորդների հետ միասին խառնված վերափորված հողի ղեղնադարչնագույն մի շերտ: Ակնհայտ էր, որ ոչ վաղ անցյալում մատուռի ներսը փորփորվել էր:

Արևմտյան ճակատի հյուսիսային հատվածում արտաքուստ 130-135 սմ խորության վրա բացվել է 50 սմ լայնությամբ դեպի հյուսիս ձգվող մի այլ պատ: Այն նույնպես հենապատի դեր է խաղացել մատուռի հարթակի համար:

Մատուռի հատակին չհասած՝ ժամանակավորապես դադարեցվել են ներսի աշխատանքները, և սկսվել է դրսից արևելյան և հարավային հատվածների մաքրումը: Այսպիսի մոտեցումը պայմանավորված է նրանով, որ բացառվի արտաքին հողալիցքի ճնշման տակ մատուռի պատերի փլուզումը:

Արևելյան պատի հարավարևելյան անկյունից 90 սմ հեռու և 15 սմ խոր գտնվել են ապակե անոթի, գուգահեռ գծերով փորագրված կավե անոթների բեկորներ, խաչքարերի բեկորներ, երկաթե գան:

Մատուռի արտաքին հարավարևելյան անկյունից 1,5 մ դեպի հարավ՝ 1,0 մ խորության վրա բացվել է մեջքի վրա պառկած, ձեռքերը կրծքին



խաչած մարդու ամբողջական կմախք, կողմնորոշումը՝ արևմուտքից արևելք: Այդ կմախքից 80 սմ դեպի հարավ գտնվել է նույն դիրքով ու կողմնորոշմամբ մի այլ կմախք: Թաղումները հիմք տվեցին եզրակացնելու, որ մատուռին հարավից կից տարածքը հենապատի հավելումով վեր էր անվել տապանաբակի: Մատուռի հարավային պատը դրսից ամբողջ մակերեսով սվաղված էր, ինչը նույնպես վկայում էր, որ հենապատը կցվել է հետագայում:

Այս աշխատանքներից հետո վերջնականորեն մաքրվել է մատուռի ներքը: Բացվել են կրաշաղախով սվաղված աղոթասրահի հատակը, բեմը: Ամբողջությամբ մաքրվել է հարավային և հյուսիսային խաչաքների հատվածը:

Հաջորդ կարևոր խնդիրը ջրահեռացման համակարգ ստեղծելն էր: Մատուռի արևելյան ճակատին կից տարածքի պեղված հատվածի ծայրային մասերը իջեցվել են, որպեսզի անձրևաջրերը չհոսեն դեպի հուշարձանը: Այդ աշխատանքի ընթացքում հայտնաբերվել է երկաթե կողպեքի մի մաս:

Մատուռի շրջակայքում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել է 16 խաչքար: Գտնվել են տառերի հետքերով կոմիսիոնների երկու բեկոր, ջնարակած անոթի բեկոր, խեցանոթների տարբեր բեկորներ, երկաթե իրեր:

2005 թ. պեղումները

Հանդաբերդի վանքային համալիրի հնագիտական պեղումները վերսկսվել են 2005 թ. հուլիսին: Աշխատանքների հիմնական նպատակն էր ավարտել վանքի պեղումները, հուշարձանը նախապատրաստել ամրակայման համար:

2005 թ. աշխատանքներն սկսվել են մաքրման և ժամանակավոր ամրացման միջոցառումներով, որպեսզի ապահովվեր հետագա պեղումների անվտանգությունը (նկ. 10):

Մոտ մեկ ամիս տևած աշխատանքների շնորհիվ ամբողջովին պեղվել են գլխավոր եկեղեցին, նրան հարավից և հյուսիսից կցված մատուռները, հարավային մատուռին կից տապանաբակի մի հատվածը, գավիթ-ժամատունը՝ հյուսիսային կից մատուռով, զանգակատունը:

Պեղումներին զուգահեռ ամրակայման աշխատանքներ էին ընթանում ժամատան հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածներում՝ գերանների միջոցով ամրացվում էին ժամատան թաղի մնացորդները:

Տարախարեյան մարտի պեղումները: Այս հատվածում նախքան պեղումները երևում էին միայն երկու անկյունային քարեր: Պատերի մնացած մասերը, համարյա մինչև տանիք, ծածկված էին հողի և քարի լիցքով: Թափված հողաշերտում (25-35 սմ խորությամբ), անմիջապես ճիմահողի

Նկ. 9 Կոստյցների հիմնական խումբը ծառահայրամից հևար:



տակ գտնվեցին տարբեր խեցանոթների բեկորներ: Հարկ է նշել, որ այս հատվածում խեցանոթների և կղմինդրների բեկորները ավելի շատ գտնվել են մինչև 0,6 մ խորությունը: Ավելի խոր շերտերում դրանց թիվը խիստ կրճատվում է: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ դրանք բոլորն էլ փլվել են ուշ շրջանում:

Ինչպես պարզեցին պեղումները, մատուռի պատերի ներքնամասերը՝ հատկապես արևելյան և հարավային հատվածներում, շարվել են՝ օգտագործելով հին խաչքարեր: Լցոնված հողի առկա մակերեսից 50 սմ խորության վրա բացվեց քարերով շարված բեմի եզրը, որով այն բաժանվում էր աղոթասրահից: Իսկ մուտքի մոտ՝ 70 սմ խորության վրա, բացվեց լավ պահպանված սվաղված հատակը: Պեղման ընթացքում գտնվել են կավե անոթների տարբեր բեկորներ:

Տյուսիսարևելյան մատուռի պեղումները: Մատուռը պեղվեց ներսում թաղի ամրակայման աշխատանքներ իրականացնելուց հետո: Լիցքն այստեղ կազմված էր թափված շինարարական մնացորդներից, շերտի առավելագույն խորությունը հասնում էր 2,25 մետրի: Շատ էին ամբողջական և բեկորային խաչքարերը:

Պեղման ընթացքում գտնվել են կարմիր, դեղնավուն և սև կավե անոթների բեկորներ՝ իրանի հատվածներ, ուռուցիկ կանթեր, հատակներ, շուրթեր:

Մատուռի հյուսիսարևմտյան անկյունում, անմիջապես դրան բացվածքի մոտ՝ 2,25 մ խորության վրա, բացվեց կրաշաղախով սվաղված հատակի և պատի մի հատվածը:

Գլխավոր եկեղեցու պեղումները (նկ. 11): Գլխավոր եկեղեցու լիցքը կազմված էր փլված ծածկի և պատերի շինարարական մնացորդներից: Եկեղեցու հարավային, արևելյան ու հյուսիսային պատերն արտաքուստ մաքրելուց հետո նոր մաքրվել է եկեղեցու սրահը: Լիցքի մեջ մեծ քանակությամբ խեցանոթների բեկորներ են գտնվել:

Արևմտյան պատից 2,72 մ արևելք, առկա մակերեսային 1,6 մ խորության վրա բացվեց բեմի 0,5 մ լայնությամբ որմնաայունը:

Մուտքի ձախ կողմում ներքուստ, երբ մինչև հատակին հասնելը մնացել էր 50 սմ, սկսեցին երևան գալ մկրտության ավազանի բեկորները: Մուտքի կամարից 1,15 մ խորության վրա գտնվել է հեծյալի պատկերաքանդակ կրող խաչքարի մի բեկոր:

Մուտքի մոտ 20-30 սմ խորության վրա ներսից և դրսից բացվեց կրաշաղախով սվաղված հատակը:

Եկեղեցու արևելյան պատին կից բացվեց բեմը, սեղանի պատվանդանը: Բեմի և աղոթասրահի հատակները սվաղված էին կրաշաղախով: Բեմի վերին եզրը շարված է սալիկներով: Հարա-



վային մասում բեմն ունի երկու աստիճան: Եկեղեցու հարավային և արևմտյան պատերի մեջ գտնվեցին սալիկներով շարված խորշեր:

Գավիթ-ժամապսան պեղումները: Ժամատունը մի յուրօրինակ միջանկյալ ծավալ է, որն իրար է կապում իր շուրջը տեղադրված տարբեր կառույցները: Ժամատան լիցքը հիմնականում կազմված էր թաղի մեծ կտորներից:

Հիմնական խնդիրներից մեկը ժամատան հատակի վավերացումն էր: Այդ նպատակով մաքրման աշխատանքները կենտրոնացրինք ժամատան հարավային մուտքի հատվածում՝ հավասարաչափ իջնելով թե՛ արտաքուստ և թե՛ ներքուստ: Այս հատվածում առկա մակերեսից 1,10 մ խորության վրա բացվել է կղմինդրների բեկորներից կազմված մի շերտ: Այն 1,50 մ լայնություն ունեցող գոտու տեսքով ձգվում է նաև ժամատան հարավային պատի երկարությամբ: Սա հիմք էր տալիս հավաստելու, որ այս խմբի կառույցների մեջ ամենավաղը փլվել է ժամատան ծածկի հարավային հատվածը: Յավոք այս հատվածի պեղմանը հնարավոր չեղավ վավերացնել հատակը, ստիպված էինք աստիճանաբար ընդարձակել պեղման մակերեսը, մինչև որ այն ներառեց դահլիճի հարավային կեսը: Միայն նման լայն տարածքով մաքրումը հնարավոր դարձրեց տեղ-տեղ վավերացնել սվաղապատ հատակը, որը մուտքի նիշից ցածր էր 60-70 սմ:

Ժամատան արևելյան մասում բացվեցին 25 սմ, 30 սմ, 30 սմ բարձրությամբ և 55 սմ լայնությամբ աստիճաններ, որոնք առաջնորդում են դեպի գլխավոր եկեղեցի և նրան կից մատուռներ:

Ժամապսանը հյուսիսից կցված մաքրոտի պեղումները: Մատուռի մուտքի մոտ բացվեց մոխրաշերտ, որը շարունակվում էր դեպի ներս: Մուտքի մոտ գտնվել են կղմինդրի և խեցեղենի բեկորներ: Ներսում կղմինդր չի հանդիպել: Մոխրաշերտի տակ՝ հատվածի կենտրոնում, բացվեց մատուռի կրի սվաղով ծածկված հատակը: Արևելյան բեմապատը շարված է մանր քարերով: Մատուռի պեղման ընթացքում խեցեղենի հատուկենտ բեկորներ են գտնվել:

Ջանգակապսան պեղումները: Ջանգակատան արևմտյան պատին կից՝ արտաքուստ և ներքուստ, զանգակատան հատակը վավերացնելու համար պեղվել է 0,80x1,50 մ չափերի երկու խրամատ: Դրսի խրամատից գտնվել են կղմինդրի և աղյուսի բեկորներ, կավե անոթների հատակներ, կանթեր: Ջանգակատան հարավարևմտյան անկյունում, առկա մակերեսից 50 սմ խորության վրա բացվեց կրաշաղախով հատակի մի հատվածը: Այս հատակից 20 սմ խորության վրա բացվեց կրաշաղախով սվաղած մեկ այլ հատակի մաս: Կարելի է ենթադրել, որ զանգակատան հատակը ժամանակի ընթացքում բարձրացվել է:

Նկ. 11 Գլխավոր եկեղեցու արևելյան հարվածի պեղումները, 2005 թ.:

2005թ. պնդվեց նաև հարավարևելյան մատու-
ոյի և գավիթ-ժամատան հարավային պատին ար-
տաքուստ կից հատվածը: Լիցքի բարձրությունն
այս տարածքում տարրեր էր՝ 0,50-1,60 մ: Լիցքի
ստորին շերտերից դուրս էին գալիս կարմիր, դեղ-
նավուն և սև կավե անոթների բեկորներ: Ժամա-
տան հարավային պատի համարյա կենտրոնից՝
2,80 մ հարավ լիցքի 0,60 մ խորությամբ գտնվե-
լ մի թասի հատակ՝ փորագիր «Խ» տառով: Ու-
շագրավ 1. նաև մարմարե սալիկի երեք կտորից

բաղկացած մի մասը՝ փորագիր խաչով և արձա-
նագրությամբ:

Պեղումներն ավարտելուց հետո զանգակա-
տան հյուսիսարևմտյան ու ժամատան հարավա-
յին մասերում չրահեռացման համար թեքություն-
ներ ստեղծվեցին: Գտնված խաչքարերը տեղա-
փոխեցինք ժամատանը հարավից կից բակում:
Քիչ ավելի վերև՝ ընդարձակ տաքածքի վրա,
տեղափոխեցինք կղմինդրների հարյուրավոր բե-
կորները:



*Նկ. 12 Գիսապիտ
եկեղեցու և հարավից
կցված մատուռների
արևմտյան ճակատը:*

Գլուխ Գ

Ճարտարապետությունը

Հանդարերդի վանքը պարզ ու ժողովրդական ձևերի լայն կիրառմամբ ստեղծված մի համակառույց է, որը դասական միջնադարյան վանքաշինության ավանդների շարունակողը լինելով հանդերձ, դրսևորում է նաև եզակի ճարտարապետաշինարարական ոճ և ինքնատիպ կերպար:


Շինությունները մինչև պեղումներն ամբողջովին ծածկված էին փլատակների և հողի մինչև 2,0 մ հաստության շերտով, ծածկերով և թփերով: Պեղումները երևան են բերել վանքի կիսավեր կառույցները (նկ. 12): Առավել վատ են պահպանվել գլխավոր եկեղեցին և ժամատուն-գավիթը: Կառույցների ավերմանը նպաստել է նաև բնությունը: Առատ բուսականությունն աճել էր հուշարձանների ծածկերի վրա, քայքայել դրանք, արմատներով մխրճվել պատերի մեջ՝ լայն ճեղքեր առաջացնելով դրանցում:

Տեղադրությունը: Հանդարերդի վանքը տեղադրված է անտառապատ լեռնաբազկի թեք

լանջի վրա: Տարածքը նախօրոք ենթարկվել է մշակման. ստեղծվել են հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք իջնող դարավանդ-հարթակներ, որոնց վրա էլ իրականացվել է կառուցապատումը: Այսօր առաջին՝ վերին դարավանդի վրա դիտելի են կառույցների և առանձին պատերի հետքեր: Երկրորդ դարավանդի վրա կառուցված է շինությունների հիմնական խումբը, որից հյուսիս, ստորին դարավանդի վրա տեղադրված են առանձին կանգնած հյուսիսային մատուռը, ամրապատը և տապանաբակը (նկ. 13):

Վանքից արևելք ընկած ձորակում կա մի աղբյուր, որն ամենայն հավանականությամբ գործել է և միջնադարում: Համալիրից արևմուտք և հյուսիս փոփում է ընդարձակ գերեզմանոցը: Նման տեղադրությամբ փորձ է արվել համալիրը ներդաշնակել թեք տեղանքին:


Խորհրդային տարիներին աղբրեջանցիները վանքային համալիրի համարյա մեջտեղով անց



Նկ. 13 Վանքի գլխավոր տապանաբազկի շինությունները:

են կացրել մոտ 4,0 մ լայնությամբ և 2,0 մ խորությամբ ավտոճանապարհ, որը լիովին բացել է հիմնական խմբի կառույցների հյուսիսային հիմքերը: Նույն կերպ էլ դեպի մոտակա ամատները տանող ավտոճանապարհը անց է կացվել վանքի շուրջը տարածվող միջնադարյան գերեզմանոցի մեջտեղով, որի հետևանքով ավերվել է մի ընդարձակ հատված: Որոշ տապանաքարեր ու խաչքարեր, տեղահան արվելով, փռվել են ողջ տարածքով մեկ: Դրանց մի մասն էլ գլորվել է ձորը:

Ներկայումս վանքային համալիրն իր կազմում ներառում է կառույցների երկու խումբ, որոնցից հիմնականը բաղկացած է գլխավոր եկեղեցուց, նրան կից երկու մատուռներից, ժամատուն-գավթից ու վերջինիս հյուսիսից կցված մատուռից, արևմուտքից կցված զանգակատնից, տապանաքանից (նկ. 14): Հիմնական խմբից մոտ 10,0



0 10

մ հյուսիս գտնվում է երկրորդ՝ հյուսիսային մատուռի խումբը: Երկու հարթակների միջև նիշերի տարբերությունը 2,6մ է: Կառույցների երկու խմբերն էլ արևելք-արևմուտք առանցքի նկատմամբ ունեն զգալի շեղում՝ հիմնական խումբը շեղված է 16°, հյուսիսային մատուռը՝ 22°:

Հուշարձանախմբի ճարտարապետական հետազոտությունը թույլ է տվել վերականգնել վանքի շինարարության ողջ ընթացքը. այն ստեղծվել է տեղում գոյություն ունեցող հին եկեղեցու շուրջը՝ վերահիշյալ կառույցները հաջորդաբար հավելելու միջոցով:

Կառույցների նման կազմը, բացառյալ զանգակատունը, փաստված է նաև հյուսիսային առանձին կանգնած մատուռից մի քանի մետր արևմուտք ընկած բարավորի քարի շինարարական արձանագրով, որը հայտնում է նաև վանքի շինությունների հիմնական մասի հիմնադրման թվականը՝ ՉԻԵ (1276թ.): Արձանագրությունում խոսվում է ոմն Դավիթ վարդապետի շինարարական գործունեության մասին, որն ըստ երևույթին կառուցել է Հանդաբերդի վանքի շինությունների հիմնական մասը:

Հանդաբերդի վանքը փաստորեն բաղկացած է հինգ մեծ ու փոքր եկեղեցիներից, գավիթ-ժամատնից և զանգակատնից: Եթե գլխավոր եկեղեցու և նրան կից երկու մատուռների բեմերին հավելենք նաև հյուսիսային առանձին կանգնած մատուռի և ժամատանը հյուսիսից կից մատուռի բեմերը, ապա կստացվի, որ վանքում կար հինգ բեմ, և կարող էին պատարագ մատուցել միանգամից հինգ տեղում, ինչը պատկառելի թիվ է նման փոքր և ակնհայտորեն առանձնացված վանքի համար: Հայտնի է, որ 12-րդ դ. վերջերից սկսած և հատկապես 13-14-րդ դդ. ինչպես Արցախում, այնպես էլ ողջ Հայաստանում նկատելի է հանգուցյալի հոգու համար մատուցվող պատարագների թվի խիստ բարձրացում:⁴⁹ Ըստ երևույթին հենց այդ իրողությունն էլ խթանել է Հանդաբերդի վանքում նման քանակի մատուռների ստեղծումը:


Գլխավոր եկեղեցին Հանդաբերդի վանքի

⁴⁹ Հմմտ. Հազունի Վ., Մուրջ պարտաբաշի օրերն, փասակը և ժամեր հայ եկեղեցու մէջ, Վենետիկ, 1899, էջ 23 և եջր.:

Նկ. 14 Շինությունների հիմնական խմբի հարավագիծը:




կառույցների հիմնական խմբի ամենավաղ շինությունն է և ունի պարզ հատակագծային հորինվածք: Այն արևելքից արևմուտք ձգված ոչ մեծ միանավ դահլիճ է (6,5 x 5,0 մ արտաքին և 4.6 x 3.0 մ ներքին չափերով), որն արևելքում ավարտվում է ուղղանկյուն խորանով: Վերջինս ունի եկեղեցու աղոթասրահի լայնությունը և նրանից անջատվում է 0,5 x 0,4 մ չափերի որմնասյուներով, որոնց վրա ժամանակին հենվել է թաղակապ ծածկի կամարը: Բեմի և աղոթասրահի երկարությունների հարաբերությունը 1:2 է, որով փաստվում է լայն բեմ-փոքր աղոթասրահ համասանությունը: Բեմի բարձրությունը 0,9 մ է, դեպի ուր աղոթասրահից տանում են երկու աստիճաններ (նկ. 15): Վերին եզրը շարված է սալիկներով: Բեմի մեջտեղում կանգնեցված է (76 x 60 x 32 սմ) մի կանաչավուն քար: Այս պատվանդանքարի հորիզոնական մակարդակն ապահովելու համար տակին դրել են երկու մանր քարեր: Երեք պատերում (բացի արևելյան բեմապատից) խորշեր են բացվել: Կամարակապ միակ մուտքը (լայնությունը՝ 0,9 մ, բարձրությունը՝ 2,5 մ) գավիթ-ժամատնից է և գտնվում է արևմտյան պատի համարյա կենտրոնում: Այն բոլորված է համեմատաբար կանոնիկ, կիսամշակ քարերով շարված շրջանակով (նկ. 16): Լուսամուտի միակ հնարավոր տեղը արևելյան ճակատն է, որը շատ վատ է պահպանված: Ինչպես գլխավոր եկեղեցուն կցված մատուռները, այնպես էլ ժամատանը հյուսիսից կից մատուռը արևելյան խորաններում ունեն դեպի դուրս նեղացումով լուսամուտի բացվածքներ, հանգամանք, որը հնարավորություն



Նկ. 15 Գլխավոր ներքինը բեմը:

Նկ. 16 Գլխավոր ներքինը մուտքը:





է տալիս եկեղեցում էլ չբացատել այսպիսի բացվածքի գոյությունը: Եկեղեցու երբեմնի երկթեք ծածկն ամբողջովին բացակայում է: Արևելյան պատը պահպանված է երկու քարի մակարդակով (0,8 մ), հյուսիսային և հարավային պատերի առավելագույն պահպանված բարձրությունները ժամատանը կից հատվածում կազմում են 4,2 մ: Մուտքից ձախ՝ հյուսիսարևմտյան պատի անկյունում՝ ոչ բարձր պատվանդանի վրա (պատվանդանի չափերը 0,5 x 0,4 x 0,2 մ) մկրտության փոքրիկ ավազան էր դրված: Բեմի և աղոթասրահի հատակները սվաղված են կրաշաղախով: Սվաղված են եղել նաև եկեղեցու ներքին պատերը, որոնցից որոշ հատվածներ են պահպանվել: Արևմտյան, դեպի ժամատուն նայող պատը (4,8 մ պահպանված բարձրությամբ) համարյա ամբողջությամբ շարված է խաչակիր և արձանագրակիր քարերով (նկ. 17): Եկեղեցին կառուցված է 0,45 մ լայնություն և 0,25 մ բարձրություն ունեցող որմնախարխախի վրա, որի մի հատվածը պահպանվել է արևելյան պատի տակ:

Գլխավոր եկեղեցուն կցված հարավային (3,7 x 2,6 մ արտաքին չափերով) և հյուսիսային (3,4 x 2,7 մ արտաքին չափերով) մատուռներն ունեն նույնատիպ հատակագծային և ծավալատարածական լուծումներ: Դրանք արևելք-արևմուտք առանցքով ձգված, արևելակողմում ուղղանկյուն խորաններով թաղածածկ կառույցներ են, որոնք ունեն միաթեք տանիքներ: Խորանների լայնությունը հավասար է աղոթասրահի լայնությանը, իսկ երկարությունները մի փոքր գիշում

են: Խորաններն աղոթասրահներից անջատվում են որմնապուրով և դրանց վրա նստած թաղակապ ծածկի կամարով: Կամարային այս շրջանակը նաև թաղածածկին կոշտություն է հաղորդել: Հարավային մատուռի թաղը հարավային կողմում հենված է մատուռի պատի, իսկ հյուսիսում՝ գլխավոր եկեղեցու հարավային պատին կցված գույգ որմնակամարների վրա: Հյուսիսային մատուռի թաղը հարավային կողմում նստել է գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին կցված գույգ որմնակամարների վրա: Սակայն ի տարբերություն հարավային մատուռի, թաղը հյուսիսային մասում հենված է հյուսիսային պատին կցված գույգ կամարների վրա: Այսպիսով, մատուռները կցված են եկեղեցուն և կոնստրուկտիվորեն կապված չեն նրա հետ, հանգամանք, որը նույնպես նպաստել է կառույցների խաթարմանը: Մատուռների մուտքերը արևմտյան կողմից են: Հյուսիսային մատուռի մուտքի վրա շինարարական արձանագրությամբ բարավորի քար է դրված եղել, որի մի կեսն ընկած էր ժամատան ներսում: Մատուռների ներսույթը լուսավորվում է արևելյան ճակատներում բացված, դեպի դուրս նեղացող՝ (0,3 x 0,8 մ) լուսամուտներով (նկ. 18): Հատակները սվաղված են կրաշաղախով: Պատերում որպես շինանյութ օգտագործված են խաչքարեր: Շատ հետաքրքիր է հարավային մատուռի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատերի շարվածքը: Ներսում հարավային և արևելյան պատերի առաջին շարքը շարված է ուղղահիգ դրված, 1,1 մ բարձրությամբ խաչ-

Նկ. 17 Գլխավոր եկեղեցու, հյուսիսից և հարավից կցված մատուռների արևմտյան ճակարը:



Նկ. 18 Հրախից կցված մատուռի երկայնական կտրվածքը:

Նկ. 19 Հարալից կցված մատուռի երկայնական կտրվածքը:

Նկ. 20 Հարալից կցված մատուռի հարավային պատի նակարն ապագառուար:

քարերով (նկ. 19): Նույն կերպ է իրականացված և հարավային պատի դրսի առաջին շարքը: Հաջորդ երկու շարքերն իրականացված են հորիզոնական դրված խաչքարերով: Խաչքարերով ստեղծված այս գոտիներն ունեն ինչպես կառուցվածքային (պարփակող, հակասեյսմիկ), այնպես էլ դեկորատիվ նշանակություն (նկ. 20): Հարավային մատուռի հարավային պատի արտաքին կողմում տարածվում է տապանաբակը: Այստեղ բացվել են չորս մշակված տապանասալեր:

Նշված մատուռների շինարարական-կառուցվածքային առանձնահատկությունները խոսում են այն մասին, որ դրանց կառուցումը հաջորդել է գլխավոր եկեղեցու և նախորդել ժամատան կառուցմանը:

Գլխավոր եկեղեցին և նրան կցված մատուռներն ունեն միանավ թաղածածկ դահլիճի հորին-

վածք: 12-13-րդ դարերում Արցախի վանքային համալիրներում ծավալատարածական այս հորինվածքն ունի լայն կիրառություն, որը հայկական ճարտարապետության Արցախի դպրոցի կարևոր առանձնահատկություններից մեկն է:⁵⁰ Թաղածածկ դահլիճներ են Կոշիկ անապատի երեք, Եղիշև առաքյալի վանքի բոլոր ութ, Բոի եղցու երեք, Օխտը եղցու հինգ եկեղեցիները:⁵¹ Այս շարքը կարելի է համարել բազմաթիվ այլ օրինակներով:

Արցախի ճարտարապետական դպրոցի առանձնահատկություններից է նաև գլխավոր եկեղեցում և մատուռներում փաստված ուղղանկ-

⁵⁰ Հասրաթյան Մ.Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ 94:

⁵¹ Մկրտչյան Շ.Մ., Լեռնային Ղարաբաղի պարմանադրապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 29, 68, 163, 193:



յուն խորանի կիրառությունը: Արցախի զարգացած միջնադարյան համալիրների մեծ մասում թաղածածկ մատուռներն ու եկեղեցիներն ունեն ուղղանկյուն խորան, այն դեպքում, երբ Վասպուրականի, Այրարատի, Շիրակի, Սյունիքի և այլ նահանգների եկեղեցիներում այն հազվադեպ է կիրառվել: Եզակի օրինակներից են Ցաղաց Քար վանքի՝ այն էլ գմբեթավոր դահլիճ տիպի սբ. Կարապետ եկեղեցու հատակագծային լուծումը,⁵² Անիի Ծաղկոցաձորի վիմավոր եկեղեցու հորինվածքը:⁵³ Վաղ միջնադարում բեմի ուղղանկյուն եզրագիծը ինչպես հայկական, այնպես էլ ողջ քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետության ընդունված ձևերից մեկն էր:⁵⁴ Ուղղանկյուն խորան ունեցող հայկական պահպանված բազիլիկաներից հնագույնը Արագյուղի Աստվածածինն է, որտեղ երկայնական պատերի հաստացման շնորհիվ խորանը աղոթասրահի նկատմամբ զգալի նեղացել է:⁵⁵ Հանդարերդի վանքի գլխավոր եկեղեցու և մատուռների բեմը չի նեղանում, այլ մի ամբողջությամբ է կազմում աղոթասրահի հետ՝ ունենալով ընդհանուր ծածկ: Դահլիճի հետ միասնական թաղով խորանը բնորոշ է Արցախի վանական համալիրների ուղղանկյուն բեմով եկեղեցիների համար: Այսպիսի օրինակներ են Դաղիվանքի, Չարեքտարի վանքի, Բոթի եղցու և Եղիշե առաքյալի վանքի հյուսիսային եկեղեցիները, Գուշավանքի եկեղեցին,⁵⁶ Խաթրավանքի կողային մատուռները:⁵⁷

Մատուռների բեմը չի նեղանում, այլ մի ամբողջությամբ է կազմում աղոթասրահի հետ՝ ունենալով ընդհանուր ծածկ: Դահլիճի հետ միասնական թաղով խորանը բնորոշ է Արցախի վանական համալիրների ուղղանկյուն բեմով եկեղեցիների համար: Այսպիսի օրինակներ են Դաղիվանքի, Չարեքտարի վանքի, Բոթի եղցու և Եղիշե առաքյալի վանքի հյուսիսային եկեղեցիները, Գուշավանքի եկեղեցին,⁵⁶ Խաթրավանքի կողային մատուռները:⁵⁷

Ժամատուն-գավիթ: Հանդարերդի վանքի գավիթ-ժամատունը⁵⁸ հատակագծում մոտավորապես քառակուսի է (արտաքին չափերը՝ 10,7 x 9,4 0 մ): Ժամատան արևելք-արևմուտք առանցքը չի համընկնում գլխավոր եկեղեցու առանցքի հետ. այն մի փոքր տեղաշարժված է դեպի հարավ: Մուտք ունի ինչպես արևմտյան, այնպես էլ հարավային կողմում: Արևմտյան՝ կենտրոնական մուտքը (լայնությունը՝ 1,25 մ) այժմ բացվում է դեպի հետագայում կցված զանգակատուն և հաղորդակցվում վերջինիս հյուսիսային կողմում բացված կամարակապ մուտքի (լայնությունը՝ 1,1 մ, բարձրությունը 2,35 մ) հետ (նկ. 21): Երկրորդ մուտքը (լայնությունը՝ 1,2 մ) բացվել է հարավարևելյան անկյան մոտ՝ հարավային պատի կողմից:

⁵² **Հարությունյան Վ. Մ.**, *Տայկական ճարտարապետության պատմություն*, Երևան, 1992, էջ 219: Ուղղանկյուն արսիդ ունի նաև վերջերս Ցաղաց Քարում հնագիտական պեղումներով հայտնաբերված միանավ եկեղեցին (տես **Մելքոնյան Հ.**, Ցաղաց քարի վանքը Վայոց ձորի միջնադարյան հուշարձանների համակարգում: Առնենայություն... պատմ. գիտ. թեկնածուի ատիճանի համար, Երևան, 1994, էջ 30-31):

⁵³ Токарский Н. М. По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, с. 54, 58.

⁵⁴ Асратян А. А. Архитектура грузинских и армянских церквей с прямоугольным внутри алтарем – Второй Международный симпозиум по грузинскому искусству, Тбилиси, 1977, с. 16.


⁵⁵ **Տայկական ճարտարապետության պատմություն**, հ. 2, Երևան, 2002, էջ 82:

⁵⁶ **Մկրտչյան Շ. Մ.**, *Նշվ. աշխ.*, էջ 40, 55, 67, 68, 84:

⁵⁷ **Հարությունյան Վ. Մ.**, *Նշվ. աշխ.*, էջ 69:

⁵⁸ Հանդարերդի վանքի շինարարական արձանագրության մեջ ինչպեսակամ է նաև ժամատունը: Մենք գուցահետաքրար օգտագործում ենք նաև գավիթ եզրը, նկատի ունենալով, որ ճարտարապետական գրականության մեջ այդ երկուսն էլ ներկայացնում են կառույցի նույն տիպը:

Նկ. 21 Համալիրի տեսակետը հյուսիսարևմտյան անկյունից:



թափված մեծ բեկորների և ամբողջ համալիրի մանրամասն զննումը հնարավորություն են տալիս խոսել նրա նախնական ձևի մասին: Այն կրկնում է անսյուն գավիթների՝ հատվող կամարների վրա հենվող ծածկերի ձևերը: Գմբեթատակ քառակուսին անկյուններում կառուցված կամարների միջոցով վեր է ածվել ութանկյան, վերջինիս վրա էլ հենվել է զագաթում երդիկ ունեցող «կեղծ» գմբեթը: Երդիկը ներսույթի լուսավորության միակ աղբյուրն է եղել, քանի որ բացակայել է դասական բարձր թմբուկը, որը կարող էր պատուհաններ ունենալ: Ծածկի այսպիսի կառուցվածքային համակարգը սերում է ժողովրդական բնակելի տների «հազարաշեն» փայտածածկից: Փայտից դեպի քարին՝ հատվող կամարների վրա հենվող ծածկերի ձևերի բազմազան մոնումենտալ տարբերակներին անցումն ապահովում է ներսույթի միասնականությունն ու ընդարձակությունը: Ծածկի այսպիսի լուծումներ ունեն Խաթրավանքի գլխավոր եկեղեցին,⁵⁹ Դաղիվանքի ժամատունը և «տաճար» կոչվող եկեղեցին:⁶⁰ Նմանատիպ ծածկով անսյուն գավիթների օրինակներ հանդիպում են նաև Հայաստանի այլ հուշարձաններում:⁶¹

Ժամատուն-գավթում ոչ մի թաղում չի բացվել: Սա նույնպես Հանդաբերդի վանքի առանձնահատկություններից է, քանզի գավիթները,

որպես կանոն, ունեին նաև տապանատան գործառույթ:

Հյուսիսային կողմից ժամատանը կցված մատուռը նույնպես միանավ թաղակապ սրահ է (արտաքին չափերը՝ 3,1 x 4,0 մ, ներքին չափերը՝ 1,9 x 2,85 մ, նկ. 14): Այն ունի պայտածն հատակագծով խորան: Խորանի մեջ է բացվում դեպի դուրս նեղացումով փոքրիկ պատուհանը, որը մատուռի լուսավորության միակ աղբյուրն է: Խորանի հարավային պատը որմնախորշ ունի: Աղոթարարը և խորանը ծածկված են սլաքածն միասնական թաղով, որը հյուսիսային կողմում նստել է պատի վրա, իսկ հարավում՝ ժամատան պատին կցված հարթ որմնակամարի: Այսպես են իրականացված նաև գլխավոր եկեղեցուն կից մատուռների թաղերը: Հյուսիսից կցված մատուռը նույնպես ժամատան հետ կառուցվածքային ամբողջություն չի կազմում: Այն հավանաբար հետո է կցվել վերջինիս, և անհրաժեշտություն է առաջացել դեպի ժամատուն մուտք բացել: Մուտքի հնարավոր միակ տեղը հարավարևմտյան կողմում է, որտեղ էլ այն բացվել է՝ գավթի հյուսիսային պատի անկյունային խորշի մեջ: Այսպիսով, ստացվում է, որ հյուսիսային կցված մատուռն առանձին մուտք չունի և ժամատան հետ հաղորդակցվում է վերջինիս պատի մեջ բացված անցումով: Եկեղեցիներում մուտքի այսպիսի լուծումը նույնպես հազվադեպ հանդիպող երևույթ է: Մատուռն ունի միաթեթ ծածկ, պատերը ներսից սվաղված են կրաշաղախով:

Պայտածն ուրվագծով խորանները բնորոշ են վաղմիջնադարյան հուշարձաններին: Հայկական ճարտարապետության հնավանդ այս ձևը հանդիպում է նաև Արցախի այլ հուշարձաններում (Քոլատակի Մեծառանից սբ. Հակոբավանք, Կոչիկ անապատ, Կիչանի անապատ և այլն):⁶²

Ջանգակատունը համալիրի ամենաուշ կառույցն է՝ կցված ժամատանը արևմտյան կողմից: Ջարգացած միջնադարի համար զանգակատան այսպիսի տեղադրությունը ավանդական է համարվում: Իրենց բազմապիսի հատակագծային և ծավալատարածական ինքնատիպ հորինվածքի, դիրքի և հատկապես բարձրության շնորհիվ այս

⁵⁹ Հարարյան Մ. Մ., Նշվ. աշխ., էջ 70:

⁶⁰ Կարապետյան Ա., էջ 89, 90:

⁶¹ Мнацаканян С. Н. Архитектура армянских притворов, Ереван 1952, с. 43-53.

⁶² Մկրտչյան Շ.Մ., Նշվ. աշխ., էջ 25, 29, 32, 58:



կառույցները միջնադարյան Հայաստանի վանքային համալիրներին գեղարվեստական արտահայտչականություն հաղորդող կարևոր տարրեր էին:⁶³ Ջանգակատան տիպը որպես կանոն թելադրվում էր վանքային համալիրի հորինվածքով և ստորադասվում էր վերջինիս գլխավոր եկեղեցուն կամ դոմինանտին՝ մեր դեպքում ժամատանը: Հանդարերդի համալիրի զանգակատունը հատակագծում ուղղանկյուն (2,6 x 4,2 մ), 4,9 մ պահպանված բարձրությամբ աշտարակ է՝ արևմտյան պատի մեջ բացված փոքր (0,35 x 0,6 մ) պատուհանով (նկ. 24) և հյուսիսային պարսան մուտքով (1,1 x 2,10 մ.): Ջանգակատան առաջին հարկը թաղածածկ սրահ է և դեպի ժամատան գլխավոր մուտք տանող անցումի դեր է կատարում: Այսինքն՝ զուգակցվում են զանգաշտարակի և մուտք-նախասրահի գործառույթները: Ջանգակատան երկրորդ հարկից պահպանվել են հյուսիսարևմտյան և հարավարևմտյան հատվածների շարվածքը:

Ջանգակատան երեք արտաքին պատերի մեջ խաչքարերի երկրորդական օգտագործումով հորիզոնական գոտի է ստեղծվել: Կառուցվածքային՝ հակասեյսմիկ, կոշտացնող նշանակությունից գատ, այն արտաքին ճակատների յուրօրինակ հարդարման միջոց է:


Հանդարերդի վանքի զանգակատունն իր հորինվածքով վերաբերում է ուղղանկյուն հա-

տակագծով, աշտարական զանգակատների տիպին: Հավանական է՝ այն ունեցել է նաև ռոտոնդա: Ընդհանուր գծերով այսպիսին են Դաղիվանքի, Խաթրավանքի,⁶⁴ Սպիտակավոր Ասովածածին⁶⁵ վանքերի զանգակատները:

Իր եզակի հատակագծային և ծավալատարածական հորինվածքով առանձնանում է նաև

⁶⁴ Հասրաթյան Մ. Մ., Նշվ. աշխ., էջ 73, 74:


⁶⁵ Հարությունյան Վ.Մ., Նշվ. աշխ., էջ 331:



Նկ. 25 Տրախապին առանձին կանգնած մազրուի արևմտյան նակարդը:

Նկ. 26 Տրախապին առանձին կանգնած մազրուի հարակազիծը:

⁶³ Халпахчян О. Х. Национальные особенности архитектуры армянских колоколен - Архитектурное наследство, N 21, 1973, с. 100-120.



Հանդարերդի **հյուսիսային**՝ առանձին կանգնած **մատուռ** (նկ. 25): Այն ներսից խաչաձև, դրսից ուղղանկյուն (4,0 x 5,0 մ), ոչ գմբեթավոր կառույց է: Արևելյան խաչաթևը հատակագծում կիսակլոր է և որպես «ավագ» խորան է ծառայել, մյուսները ուղղանկյուն են (նկ. 26): Ավագ խորանում պատի հարավ-արևելակողմում, խորշ է բացված: Հյուսիսային և հարավային խաչաթևերը ծածկված են թաղով: Արևելյան, արևմտյան և կենտրոնական մասը վերցված են մի ընդհանուր ցածր, կիսակլոր թաղային ծածկի տակ: Մուտքն արևմուտքից է և ունեցել է բարավորի սալանն արձանագրակիր քար (նկ. 27): Ծաղախի մեջ պահպանվել է քարի տեղը, իսկ քարն ընկած է մուտքից արևմուտք՝ թմբի լանջին: Լուսավորության միակ աղբյուրը մատուռի մուտքն է: Պատուհանները բացակայում են: Ակնհայտ է գանգվածեղ պատերի, թաղածածկի և ներքին սահմանափակ տարածության անհամապատասխանությունը: Հյուսիսային և հարավային խաչաթևերի մեջ ուղղանկյունաձև փոքրիկ կառուցումներ կան՝ իրագործված հին, շքեղ պատկերաքանդակներ կրող խաչքարերով (նկ. 28), որոնք ինքնատիպ ծիսական միջավայր են ստեղծել: Մատուռի հյուսիսային պատի կենտրոնական մասն ունի մյուս հատվածներից տարբերվող՝ ավելի մանր քարերով իրականացված շարվածք: Ուշադիր զննու-





մը պարզել է, որ այս հատվածը հյուսիսային խաչաթևի պատի արտաքին երեսն է, որն, ըստ երևույթին, բարակ լինելու պատճառով փլվել է ու վերաշարվել:

Պեղումներով բացվել են մատուռի մուտքից դեպի հյուսիս և հարավ ձգվող հենապատերը, որոնք 1,7 մետրով ցածր են վերևում տարածվող տապանաքակի նիշից: Մատուռի հարավային պատի դրսի՝ տապանաքակին կից հատվածն ամբողջ մակերեսով նույնպես սվաղված էր, ինչը ցուցում է, որ հենապատերը հետո են կցվել մատուռին՝ թաղումների համար հատուկ հարթակ ստեղծելով: Տապանաքակում մատուռի հարավային պատին կից հատվածում, ինչպես նաև զանգակատան մուտքի դիմաց անճշակ տապանաքարեր են բացվել:

Փոքր եկեղեցիների՝ ուղղանկյանը ներգծված խաչի հորինվածքային տիպը միշտ գմբեթի առկայություն է ենթադրում: Հայկական առաջին հայտնի բոլոր այսպիսի եկեղեցիները գմբեթներ ունեն:⁶⁶ Հանդարերդի վանքի դեպքում գմբեթը բացակայում է: Տարածաշրջանում երկթեք թաղածածկ ունեցող թաղածածկ փոքր մատուռների գոյությունը, շինարարական տեխնիկայի և շինանյութի նմանությունը Հանդարերդի մատուռի հետ թույլ

⁶⁶ Գրիգորյան Վ., Հայաստանի փոքրիցնապայտ կենտրոնավայրեր փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 19-32:

Նկ. 27 Հյուսիսային առանձին կանգնած մատուռի և հենապատը:



են տալիս ասել, որ այստեղ ևս կառույցը երկբեր ծածկ է ունեցել (նկ. 29): Հյուսիսային առանձին կանգնած մատուռ-եկեղեցին իր եռախորան թաղակապ հորինվածքով, պատկերաքանդակներ կրող հին խաչքարերի օգտագործումով եզակի մի կառույց է որչ միջնադարի ճարտարապետության համար:

Վանքային համալիրի շինարարական ճարտարապետական վերլուծությունը ցույց է տալիս, որ գլխավոր եկեղեցին և թաղակապ մատուռները նախորդել են ժամատան կառուցմանը: Դրանցից վաղագույնը գլխավոր եկեղեցին է: Վերջինս և նրան կից մատուռները հաղորդակցվում են ժամատուն-գավթի հետ արևմտյան կողմում բացված մուտքերով: Ժամատունը կառուցելիս այս մատուռները պահպանել են: Դրանք փաստորեն դարձել են հիմնական խմբի ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալատարածական ամբողջականության մի մասը: Արդյունքում շինությունների հիմնական խմբի ծավալատարածական հորինվածքում գերիշխողը դարձել է ժամատուն-գավթը: Համալիրն այս առումով որոշ աղերսներ ունի Ծարի իշխանության հողեր կենտրոն Խաղարի վանքի հատակագծային հորինվածքի հետ:

Շինարարական տեխնիկան: Համալիրը կառուցված է անմշակ և կիսամշակ ձեղքված քարով, կրաշաղախով, անկանոն, խառը շարվածքով:

Շինանյութը տեղական, հիմնականում մոխրագույն երանգի քարն է: Որմաքն ունի կոամաս կազմություն, կրաշաղախի միջուկ և այն երկու կողմից պարփակող, հարթ ճակատները դեպի դուրս ուղղված քարեր: Պատի հաստության մեջ կրաշաղախի շերտն ավելի լայն է: Ստառիկ ուժերի չեզոքացման հիմնական դերը վերապահված է հենց կրաշաղախե միջուկին: Քարի շարվածքն քստ էության, կրեսապատման դեր է կատարում: Պատասխանատու հանգույցները (պատերի անկյուններ, կամարներ) շարված են կիսամշակ քարով՝ որոշ կանոնավորությամբ: Որմերն ունեն 0.5-1.25 մ հաստություն: Ներսից բոլոր շինությունների պատերն (բացառությամբ խաչքարերով շարված հատվածների) ու հատակները ամբողջովին սվաղված են: Դրանց քարերի արանքները նույնպես մշակվել են կրաշաղախով: Պատերի որոշ հատվածներում (ժամատան ներսում հյուսիսային և արևելյան պատեր) որմնանկարների և որմնագրերի մմանվող դրվագներ են պահպանված: Լուսամուտները պարզ պսակներով են: Երբեմն (գլխավոր եկեղեցուն հյուսիսից կցված մատուռի արևելյան ճակատ, զանգակատան արևմտյան ճակատ) դրանք խաչակիր քարեր են: Մուտքերն ունեն կամարաձև բացվածքի մեջ վերցված սալան բարավորի քարեր: Գլխաձև թաղերն իրականացված են ուղղանկյուն դրված և ստուխանաբար

28 Հյուսիսային
Շին կանգնած
Պի երկայնական
Ծածրը:

29 Հյուսիսային
Շին
Կանգնած մարտի
Կարգան ճակատը
Կազմություն:



առաջացող քարերի ու ամբողջ կոնստրուկցիան շաղկապող կրաշաղախի զանգվածով: Թաղերի հաստությունը 0,3 մ է, բարձրությունը՝ 3,0-3,6 մ, թռիչքը՝ 1,5-3,0 մ: Ինքնատիպ կառուցվածք ունեն Հանդաբերդի վանքի հիմնական խմբի շինությունների ծածկերը: Ծածկը սովորաբար բաղկացած է թաղն արտաքինից անմիջապես պատող 10-15 սմ հաստության ամուր կրաշաղախե շերտից, որն իր հերթին «լցոնված» է կոտրտված կղմինդրների 2-3 շերտերով: Կղմինդրներն այստեղ երկրորդական կիրառության են և նախատեսված են ծածկը թեթևացնելու և ջրամեկուսացումը մեծացնելու համար: Օգտագործվել են ավելի վաղ կառույցներից վերցված ջարդոտված կղմինդրներ: Ուշագրավ է, որ Բաղիվանքի գմբեթավոր եկեղեցու ծածկում նույն նպատակով օգտագործվել է աղյուս:⁶⁷ Կրաշաղախե շերտն ավարտվել է ամբողջական կղմինդրների կանոնավոր ծածկույթով:

Հանդաբերդի վանքային համալիրի ողջ տարածքից հավաքվել են կղմինդրների հազարից ավելի բեկորներ, որոնց մեջ կան նաև հայերեն արձանագրակիր օրինակներ: Կղմինդրների ամբողջական օրինակներ չեն պահպանվել: Տեղում՝ գլխավոր եկեղեցուն հյուսիսից կցված մատուռի ծածկի վրա, երևում են դրանց հետքերը միայն (նկ. 30): Օգտագործվել են տափակ և փորա-





կավոր կղմինդրներ, տարածված է եղել նաև կղմինդրի մի հատուկ տեսակ, որը համատեղում է փորակավոր և տափակ տարրերը (նկ. 31): Տափակ կղմինդրը լինում էր ուղղանկյունաձև, սեղանաձև և եռանկյունաձև՝ երկար կողմերում բարձրացող եզրերով: Հանդաբերդի վանքում կիրառվել է սեղանաձև տարրերակը: Կղմինդրների երկարությունը տատանվում է 40 սմ սահմաններում, հաստությունը 1,8-2,2 սմ է: Տափակ կղմինդրի լայնությունը 26 սմ է լայն կողմում և 20 սմ՝ նեղ կողմում: Փորակավոր կղմինդրի տրամագիծը 10-15 սմ է: Փորակավոր կղմինդրը կիսագլանաձև է՝ նեղացող վերին ծայրով, կողին ունի բլթակաձև ելուստ, որը նեցուկ էր ծառայում նույն ձևի վերին կղմինդրի համար: Հանդաբերդի վանքի տարածքից հայտնաբերվել են այդպիսի կղմինդրի մի քանի տեսակներ: Ծածկերը կազմվել են տափակ և փորակավոր կղմինդրների համադրությամբ (նկ. 32, 33) կամ միայն տափակ ու փորակավոր տարրերն համադրող կղմինդրներով (նկ. 34):

Համալիրն ամբողջովին զանգվածեղ մոնոլիտի տպավորություն է թողնում:

Համալիրի տարրեր մասերում պատերի շարվածքում առկա են որպես շինաքար օգտագործված բազմաթիվ խաչքարեր, որոնք պատերի յուրօրինակ հարդարման միջոց են՝ գեղարվեստական արտահայտչականությունն ապահովող տարր: Այսպիսի շինարարական եղանակը որոշ աշխու-

Նկ. 30 Գլխավոր եկեղեցուն հյուսիսից կցված մատուռի ծածկի մի հայրվածը (լուսանկարը՝ Ս. Այվազյանի):

⁶⁷ Ավագյան Ս., Բաղիվանքի հոգևոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը – ԳՐՀ, 2006, թիվ 3, էջ 207:




Նկ. 31 Պեղումներից հայրենարժեքի կղմինորների քնասկները:

Նկ. 32 Տափակ և փորակափոր կղմինորներով իրականացված ծածկի կառուցվածքը:

Նկ. 33 Տափակ և փորակափոր կղմինորներով իրականացված ծածկի կառուցվածքը:

Նկ. 34 Համակցված կղմինորով իրականացված ծածկի կառուցվածքը:



0 1մ

ծություն է հաղորդում համայնի պարզ և անպաճույճ կառուցման կերպին:

Կիսամշակ և կոպտատաշ քարերի և խաչքարերի գուգակցումով շինարարական այս տեխնիկան շատ բնորոշ է Արցախի ճարտարապետական դպրոցին և փաստվում է բազմաթիվ հուշարձաններում: Շինարարության այս եղանակը կիրառվել է նաև Սյունիքի ճարտարապետական հուշարձաններում⁶⁹:

Հանդարերդի վանքի ամրակայումը: Վանքի բոլոր կառույցները շատ քայքայված էին և փլուզման վտանգի առջև կանգնած: 2005 թ. գարնանն արդեն ժամատան հյուսիսարևելյան՝ եկեղեցուն կից հատվածի մի մասը քանդվել էր: Պեղումների անվտանգությունն ապահովելու նպատակով ամրակայման որոշ քայլեր արվել են դեռ 2005 թ. հուլիս ամսին: Ամրակայման հիմնական աշխատանքներն իրականացվեցին պեղումներից հետո՝ 2005 թ. աշնանը և 2006 թ. գարնանը:⁶⁸


Այդ աշխատանքների արդյունքում լրացվել են

հյուսիսային և հարավային կցված մատուցների պատերի բացակայող մասերը, թաղածածկերը, որմնասյուները: Տեղում պահպանված փաստացի նյութերի հիման վրա կատարվել է որոշ հատվածների վերականգնում: Վերականգնվել են մատուցների արևելյան պատուհանները: Հյուսիսային մատուցի պատուհանի պսակի բարը, որը գտնվել էր պեղումների ժամանակ, դրվել է իր տեղը: Երկու մատուցների ներսում էլ վերականգնվել են գույգ հորինվածքով որմնակամարները, որոնց վրա էլ նստել է թաղածածկը: Վերականգնվել է հյուսիսային մատուցի մուտքի կամարը: Ամրակայման աշխատանքներ են կատարվել նաև ժամատանը: Ներսում հյուսիսարևելյան անկյան ներքևի՝ խարխլված մասը քանդվել և վերաշարվել է: Քանդվել և նորից կառուցվել է նույն անկյան վերևում որմնակամարի ձևափոխված և շաղախից անջատված հատվածը: Այս անկյունը վերականգնվել է նաև դրսից:

Ժամատան թաղի պահպանված հատվածը ամրացնելու և պահպանելու համար թաղի տակ տեղադրվել են փայտյա հենակներ: Այս միջոցառումը իրատապ էր, որովհետև ծածկի մեծ մասի

Նկ. 35 Գլխավոր եկեղեցուն և հարակից ու հյուսիսից կցված մատուցների արևելյան ճակարկները, վերականգնություն

⁶⁸ Ամրակայման աշխատանքներն իրականացրել են ճարտարապետ Սամվել Այվազյանն ու աշխղեն Վլոդյա Հարությունյանը:



կործանված լինելու պատճառով կորել էր թաղի կոնստրուկտիվ ամրոցականությունը, և այն ցանկացած պահի կարող էր քանդվել: Ծածկի կործանմանը նպաստող պատճառներից մեկն էլ կարող էր լինել դրա ներքին և արտաքին հորինվածքների անհամապատասխանությունը, որի հետևանքով թաղի վրա առաջացել են կրաշաղախի ավելորդ զանգվածներ:

Շուշարձանախմբի պահպանումն ապահովելու համար նախատեսվում են նաև հիմնական խմբի հյուսիսային մասում հենապատի կառուցում՝ հողաշերտի, նրա հետ միասին նաև կառույցների փլուզումից խուսափելու համար, բոլոր կառույցների պատերի խարխուլված մասերի ամրացում՝ որոշ տեղերում քանդման-վերաշարման, որոշ տեղերում՝ շաղախի ներարկման միջոցով:

Հանդարերդի վանքի վերակազմությունը: Վանքի շինությունների վերակազմության հարցը հանգում է ծածկերի վերակազմությանը, որովհետև հիմնականում դրանք են ավերված: Գլխավոր եկեղեցում, նրան կցված, ինչպես նաև ժամատանը հյուսիսից կցված մատուռներում կիրառված է միանավ թաղածածկ դահլիճի հորին-

վածքը: Արցախի վանքային համալիրներում այսպիսի պահպանված օրինակներ շատ կան, որոնց հետ համեմատությունը, ինչպես նաև պահպանված հատվածների փաստագրումը հնարավորություն են տալիս ներկայացնել դրանց նախնական տեսքը: Եկեղեցին ունեցել է երկթեք ծածկ, իսկ մատուռները՝ միաթեք: Առաջինի դեպքում ծածկի բարձրությունը հավաստի վերականգնելի է, իսկ մատուռներում՝ համարյա պահպանված (նկ. 35):

Մանրամասն չափագրությունը և ճարտարապետական քննությունը թույլ են տալիս վերականգնել նաև ժամատուն-գավթի ծածկը: Ներսում թաղի հորինվածքը ենթադրում է արտաքին քառականջ տանիք, սակայն ժամատան հատակին ընկած ծածկի մեծածավալ բեկորը և տանիքի տեղում պահպանված հատվածը ցույց են տալիս, որ իրականացվել է երկյանջ տանիք, որի վրա բարձրացել է զագաթում երդիկ ունեցող ցածր՝ ութանիստ թմբուկ ունեցող գմբեթը (նկ. 36):


Զանգակատունը երկհարկ շինություն է: Երկրորդ հարկի մասին են փաստում արևմտյան պատի հյուսիսային և հարավային անկյունների



0 1մ

բարձրացումները: Ըստ երևույթին այդպիսին են եղել նաև մյուս անկյունները: Երկրորդ հարկն ունեցել է երկթեք տանիք, որը կարող էր պատկված լինել ռոտոնդայով: Վստահաբար այդ մասին խոսել հնարավոր չէ՝ թերի պահպանվածության պատճառով, առավել ևս, որ զանգակատները չունեն կանոնիկ մշակված ճարտարապետական ձև և յուրաքանչյուր մասնավոր դեպքում դրանք տարբեր և ինքնատիպ լուծումներ ունեն: Մենք հակված ենք ընդունել նաև ռոտոնդայի առկայությունը (նկ. 37), քանի որ այս դեպքում է, որ զանգակատունն իր բարձրությամբ զգալիորեն կզերպանցեր մնացած ծավալները:

Հյուսիսային առանձին կանգնած մատուռի վերակազմության հարցը հիմնականում վերաբերում է նրա արտաքին ծածկին, քանի որ պահպանված է ներքին թաղամածկը: Պեղումների ընթացքում մատուռի շրջակայքում կղմինդրի բեկորներ և ծածկասալեր չեն գտնվել: Ի սկզբանե մատուռը կարող էր նույնիսկ տոփանված ծածկ ունենալ: Մեր առաջարկում ծածկը երկթեք, պարզագույն



Նկ. 37 Զանգակատունի վերակազմություն. արևմտյան ճակար

Նկ. 38 Հյուսիսային առանձին կանգնած մատուռի վերակազմություն. փնայր հյուսիսարևմտյան

ապլածածկով (0,5x0,3x0,1մ) է նախատեսվում: Մալածածկը նախատեսվում է կառույցի ջրահեռացման խնդիրները, կայունությունն ու դրանով երկարակեցությունը ապահովելու նպատակով: Մալահատակ է (0,5 x 0,3 x 0,1մ) նախատեսվում նաև մատուցի մուտքի դիմաց: Մուտքի բարավորի քարը, որ մատուցի արևմտյան ճակատից մի քանի մետրի վրա է ընկած, տեղադրվում է իր տեղում: Վերականգնման աշխատանքների ընթացքում պետք է նորոգվի և իր տեղում կանգնեցվի մատուցի հարավային խաչաթևի խաչքարը: Բարեկարգման աշխատանքների ընթացքում

նախատեսվում է մատուցի մուտքի երկու կողմերում կանգնեցնել պեղումներով հայտնաբերված առավել դիտարժան խաչքարերը (նկ. 38):

Արտաքինից բոլոր կառույցները քարերի կարերի հատվածներում պետք է սվաղվեն կրաշաղախով՝ այնպես, ինչպես որ տեղում պահպանված հատվածներում է: Մատուցի ներսում թաղը և պատերը նույնպես սվաղվում են կրաշաղախով:

Ջրահեռացման և բարեկարգման նպատակով ապահատակ է նախատեսվում նաև շինությունների հիմնական խմբի շուրջը:



Նկ. 39 Սյունքու մայրն ու
կրեխան, խաչքարային
պարկերաքանդակ, 12-
րդ դարի վերջ:

Գլուխ Դ

Կոթողները և քանդակագարդ քարերը

Խաչքարեր և խաչաքանդակ սալեր: Համարյա բոլոր պեղումների ամենամեծ արդյունքներից մեկն էլ մոտ հարյուր ութսուն խաչքարերի ու խաչաքանդակ սալերի⁶⁹ հայտնաբերումն է, որոնց միայն մի փոքր մասն էր տեսանելի մինչև պեղումները:

Խաչքարը հայ մշակույթի ինքնատիպ զարգացման արգասիքն ու ցուցիչն է, հայ ինքնության ամենարժեքավոր և խորհրդանշաններից մեկը: Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդներից և ոչ մեկը նման կոթողներ չի ստեղծել, ուստի խաչքարը նաև հայ մշակույթի ամենատարբերիչ նշաններից մեկն է: Իր զարմանահրաշ քանդակային հորինվածքներով, խաչի փրկագործական խորհրդարանությամբ և քարի հավերժություն ներշնչող մշտականությամբ այն եղել է հայ հավատացյալի ամենասկզբնական, իսկ բացօթյա տեղադրությամբ և բազմաքանակությամբ՝ նաև ամենամատչելի սրբություններից մեկը: Արցախի վանքերում, գյուղատեղիներում, եին գերեզմանոցներում պահպանված հարյուրավոր խաչքարերն այդ տարածքների հայկականության ամենավաղ ապացույցներից մեկն են: Հանդարերդի վանքի դեպքում դրանց քանակն ուղղակի աչքեցուցիչ է (նկ. 40, 41):

Հարկ է նկատել, որ խաչքարագիտությունը՝ որպես հայագիտության մի բաղկացուցիչ, դեռևս կայացման փուլում է, ինչի պատճառով հայ մշակույթի և արվեստի մասին գիտական պատկերացումները, մշակումներն ու ներկայացումները հա-

ճախ կրում են ոչ ամբողջական բնույթ: Սա առավել չափով վերաբերում է Արցախի խաչքարերին, որոնց հետազոտությունը խորհրդային տարիներին առաջ էր բերում աղբրեջանական իշխանությունների և Լեռնային Ղարաբաղի մարզային կառույցների դժգոհությունը: Նման տիպի աշխատանքները չէին խրախուսվում նաև Խորհրդային Հայաստանի կոմունիստական և նույնիսկ ակադեմիական կառույցների կողմից:

Արցախի խաչքարերին առաջինն անդրադարձել է անվանի հայագետ Հովսեփ Օրբելին: Ընդ որում, գիտնականը հետազոտության առարկա է դարձրել ոչ թե Արցախի խաչքարերի ընդհանուր նկարագիրը կամ զարգացումը, այլ նրա եզակի դրսևորումներից մեկը՝ խաչքարային պատկերաքանդակը:⁷⁰ Նա ոչ միայն փորձում էր բնութագրել այդ երևույթը, այլև մատնանշում էր, թե ինչպիսի լայն հեռանկարներ կարող է ունենալ խաչքարային մշակույթի ուսումնասիրությունն ընդհանրապես: Ցավոք, Օրբելու այս կարևորումը հետևողներ չունեցավ, և այսօր էլ մշակութային այս հսկայական ժառանգության մասին գերակշռում են ավելի հպանցիկ դիտողությունները⁷¹ և միայն եզակի դեպքում՝ մանրամասն քննությունը⁷²:

Ինչքան էլ տարօրինակ թվա, Արցախի խաչքար-

⁶⁹ Տվյալ դեպքում խաչքարի տակ պետք է հասկանալ սկզբնապես առանձին կանգնած կոթող, որը պատի մեջ հայտնվել է երկրորդական օգտագործումով: Այն ունի ձգված համաստիսներ (բարձրությունը երկու և ավելի անգամ գերազանցում է լայնությունը) և գեանի կամ պատվանդանի մեջ անբացնելու համար նախատեսված պոչով:

Խաչաքանդակ սալերը որպես կանոն պոչով չունեն, նրանց բնորոշ չէ խաչքարերի սյացիկությունը: Հորինվածքներն էլ ասիմետրիկ են միայն խաչերի քանդակներով: Դրանց մի մասը հատուկ պատրաստվել է պատերի մեջ դնելու համար, մի մասն էլ ուղղակի պատի քարեր են, որոնց վրա խաչաքանդակներն ավելացվել են հետագայում:

⁷⁰ Орбели И. А. Бытовые рельефы на крестных камнях Хачена 12-13-го веков - Записки Восточного отделения Императорского русского археологического общества, 1915, т. 22, вып. 3-4, с. 327-335. *Նույն*. Орбели И. А. Избранные труды. Ереван, 1963, с. 196-203.

⁷¹ Sisa, orhinal, Մկրտչյան Շ., *Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հուշարձաններ*, Երևան, 1985, էջ 15-18: Улубабян Б. Хачкары Арцаха - Четвертый между симпозиум по армянскому искусству: Тез. докл., Ереван, 1985, с. 273-274.

⁷² Петросян Г. Новонайденный хачкар из Арчадзора - Вестник общественных наук. 1991. N 4. с. 147-152. *Նույնի*. К интерпретации группы сюжетных рельефов на хачкарах Арцаха - Историко-филологический журнал, 1997, N 2, с. 164-171. Արցախի խաչքարերի հետազոտությամբ երկար տարիներ զբաղվել են և մենք: Ուսումնասիրությունն արդեն պատրաստ է և չուսով լույս կտեսնի:



րերն անցած դարի 80-ական թվականներին դարձել են արդրբեջանցի մի քանի հետազոտողների «քննության» առարկան:⁷³ Ցավոք, անշեղորեն հետևելով բունիաթովյան տխրահռչակ տեսությամբ, խաչքարերին վերաբերող արդրբեջանական էքսկուրսները հետապնդում էին միայն մեկ նպատակ. Արդրբեջանական ԽՍՀ-ին բռնակցված հայկական պատմական տարածքների և Հայկական ԽՍՀ՝ Արդրբեջանին հարակից տարածքների խաչքարերը, ինչպես նաև քանդակագործական ու ճարտարապետական ողջ ժառանգությունը հայտարարել աղվանական-արդրբեջանական: Նման միտումնավորությունն էլ պայմանավորել է արդրբեջանցիների անհեթեթ մեթոդաբանությունը. ստեղծել խաչքարերի արդրբեջաներեն «անվանաբանություն» (նիշանդաշ, խաչդաշ), խաչքարային հորինվածքի ընդհանրական որոշ բնութագրեր (օրինակ՝ կառուցվածքի եռամասնությունը) համարել առանձնահատուկ միայն

Արցախի, Ջուղայի, Սյունիքի, Գեղարքունիքի խաչքարերի համար կամ էլ հորինվածքին վերագրել մտացածին հատկանիշներ (օրինակ՝ քրիստոնեական պատկերազրական թեմաների կամ կերպարների համադրություն միթրայական, մոնղոլական կամ էլ այլ օտար տարրերի հետ), որոնք իբր առանձնացնում են դրանց հայկական խաչքարերի հիմնական զանգվածից: Ընդ որում, խաչքարերի վերաբերյալ գիտելիքի ակնհայտ պակասը, մասնագիտական թերպատրաստվածությունն ու անգրագիտությունը «փոխհատուցվում» են փաստերի խեղաթյուրմամբ և մերկապարանոց հայտարարություններով:

Արկածախնդրական բնույթ կրող այդ փորձերը ժամանակին արդեն իսկ արժանացել են հայագետների հիմնավոր հակահարվածին, որը ներառում էր գեղծարարության քաղաքական, տեսական, պատմամշակութային և մասամբ էլ փաստացի առումները:⁷⁴ Միաժամանակ նաև

⁷³ Геюшев Р. Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 100-104. Ахундов Д., Ахундов М. Культурная символика и картина мира, запечатленная на храмах Кавказской Албании – 4-ый меж. симпозиум по грузинскому искусству, Тбилиси, 1983. Նույնը՝ լուսանկարներով հանդերձ լույս է տեսել և Գ. Ախունդովի գրքում (Ахундов Д. Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, с. 236-252):

⁷⁴ Якобсон А. Л. Гандзасарский монастырь и хачкары - ИФЖ, 1984, N 2, с. 146-152. Асратян М. М. Арцахская школа армянской архитектуры: факты и фальсификации - В кн.: К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинции Армении, Ереван, 1991, с. 457-469. Аракелян Б. Н., Саакян А. С. Хачкары - предмет антинаучных извращений - В кн.: К освещению проблем истории и культуры..., с. 470-483.

Նկ. 40 Պեղումներից հայրենաբերված խաչքարերի և խաչաքանդակների մի խումբ:



զգացվում էր, որ խաչքարագիտությունը մեծ անելիքներ ունի խաչքարերի ռեզիտնալ առանձնահատկությունների վերհանման ու մեկնաբանման, գործառույթների հստակեցման, խաչքարային հորինվածքի կառուցվածքային, պատկերազրական և իմաստաբանական քննության ասպարեզում:⁷⁵

Խաչքարերի առատությունն ընդհանրապես բնորոշ է հայկական վանքերին. նրանց մի զգալի մասը ծառայում էր որպես տոհմական գերեզմանոց զանազան իշխանական տների համար, և դարերի ընթացքում դրանցում ավելանում էր հատկապես գերեզմանների վրա կանգնեցվող խաչքարերի թիվը: Սակայն նման առատությունն արդյունք է նաև այն առանձնահատուկ վերաբերմունքի, որ տաճում էին հոգևոր գործիչները դեպի հին, իրենց նախնական գործառույթն այս կամ այն պատճառով կորցրած, արդեն հուշակոթողի վերածված խաչքարերը, տապանաքարերն ու արձանագրությունները, քանդակազարդ կամ ուղղակի սրբատաշ քարերը: Դրանք վեր էին ածվում յուրօրինակ մասունքի: Եվ ինչպես զանազան սրբերի մատուցները կարող էին սրբացնել այս կամ այն եկեղեցին, այնպես էլ այդ հին կոթողները,

դրվելով նոր կառուցվելիք հոգևոր շինությունների պատերի մեջ, միտում ունեին հավաստելու նաև նոր կառույցի սրբությունը: Ուշագրավ է, որ այդ սովորույթի մասին ունենք նաև արձանագրական մի տեղեկություն՝ վավերացված հենց Ծարի հոգևոր կենտրոն Խաղարի վանքում, ուր Հասան Ա Ծարեցու եղբայր Հովհաննեսը արձանագրության մեջ հայտնում է. «Ի :ՌԾԳ: (1204թ.) թուխս ես տր Յոհանէս շինեցի զեկեղեցիս ես ժողովեցի զխաչ և զգիրք որ ի սմա...»:⁷⁶ Տվյալ դեպքում ավելի քան հավանական է, որ խաչերի տակ նկատի են առնված խաչքարերը, իսկ գրերի տակ՝ վիճագրերը, այլապես դժվար է պատկերացնել, թե մինչև եկեղեցիների հիմնելը տեղանքում անտեր-անտիրական թափված էին մետաղական խաչեր ու ձեռագիր մատյաններ, ինչպես կարծել են հետազոտողները:⁷⁷

Մրան գումարվում էր և մի այլ՝ գուտ կիրառական նկատառում. այդ կոթողները նաև հարմար շինարարի դեր էին ստանձնում, հատկապես այն հանգամանքներում և դեպքերում, երբ հնարավորություն չկար կառուցել երկար ժամանակ ու միջոցներ պահանջող կանոնավոր, սրբատաշ կա-

կ. 41 Պեղումներից
պահպանված
խաչքարերի մի խումբ:

⁷⁵ Մանրամասն տես Պետրոսյան Հ., *Խոսքեր*, էջ 176, 225, 301-303,346:

⁷⁶ ԴՀՎ 5, էջ 121:

⁷⁷ Անդ, էջ 121: Ուկուբարյան Բ., *Խաչների իշխանությունները*, էջ 254:



ույցներ: Այսպես, եթե Գանձասարի տաճարի և գավթի, Դաղիվանքի Արգուխաթունի կառուցած եկեղեցու կամ Գուշավանքի եկեղեցու սրբատաշ շինությունների պատերի մեջ խաչքարեր համարյա չեն օգտագործվել, ապա տասնյակ շարքային, կուպտատաշ կամ ճեղքված քարերով կառուցված համալիրներում, ներառյալ և գյուղական առանձին եկեղեցիները (օրինակ՝ Դաղիվանքի մնացած եկեղեցական կառույցները, Կոշիկ անապատ, Խաղարի վանք, Ադին նահատակ, Ծեր նահատակ, Բոի եղցի,⁷⁸ Այրքի եկեղեցիներ), դրանց օգտագործումը վեր էր ածվել պարտադիր կանոնի: Ընդ որում, խաչքարի բանդակված մակերեսը որպես կանոն դրվում էր դեպի դուրս: Հանդարերդի վանքում, ինչպես և այլ վանքերի դեպքում է, խաչքարերը պատերին հիմքին մոտ դրվում են միայն ուղղաձիգ, իսկ ավելի վերին շարքերում, որպես կանոն, հորիզոնական դիրքով, այսինքն՝ առաջնային էր համարվում պատերի ամրությունն ապահովելու խնդիրը (նկ. 19, 20, 42): Ուղղաձիգ դրվելու դեպքում խաչքարերի գլուխներն ուղղվում են դեպի վեր, հորիզոնականի դեպքում՝ ինչպես դեպի աջ, այնպես էլ դեպի ձախ: Կարելի է եզրակացնել, որ առկա է ծխական և շինարարական նպատակների որոշակի համադրում. հին խաչքարը կարելի էր օգտագործել որպես շինանյութ, սակայն, որպես կանոն, չէր կարելի ծածկել խաչը և հնարավորության դեպքում անհրաժեշտ էր պահպանել հորինվածքի ուղղաձիգ դիրքը:⁷⁹ Հենց այս դեպքում էր, որ հին խաչքարերը շինարարականից բացի կարող էին պահպանել երկրպագության իրենց գործառույթը:


Հանդարերդի վանքի խաչքարերի առավել աչքի ընկնող օրինակները բազալտից են: Տարածված են նաև տեղական փխրուն ավազաքարից պատրաստված օրինակները: Քիչ չեն և կաթնագույն կրաքարից պատրաստված խաչքարերն ու

տերի ամրությունն ապահովելու խնդիրը (նկ. 19, 20, 42): Ուղղաձիգ դրվելու դեպքում խաչքարերի գլուխներն ուղղվում են դեպի վեր, հորիզոնականի դեպքում՝ ինչպես դեպի աջ, այնպես էլ դեպի ձախ: Կարելի է եզրակացնել, որ առկա է ծխական և շինարարական նպատակների որոշակի համադրում. հին խաչքարը կարելի էր օգտագործել որպես շինանյութ, սակայն, որպես կանոն, չէր կարելի ծածկել խաչը և հնարավորության դեպքում անհրաժեշտ էր պահպանել հորինվածքի ուղղաձիգ դիրքը:⁷⁹ Հենց այս դեպքում էր, որ հին խաչքարերը շինարարականից բացի կարող էին պահպանել երկրպագության իրենց գործառույթը:

⁷⁸ Հարկ է նկատել, որ Բոի եղցի վանքային համալիրը նաև առանձնանում է այս շարքի մնացած կառույցներից նրանով, որ նրա եկեղեցիներում ավելի շատ օգտագործվել են ոչ թե հին խաչքարեր, այլ ճակատների սալաքարերը պատվել են խաչքարային հորինվածքներով ու նոր շարվել:

⁷⁹ Անշուշտ եղել են նաև բացառություններ և նույնիսկ բաժանական վերաբերմունք, ինչպես, օրինակ, տեսնում ենք Գուշավանքի գավթում, ուր հին խաչքարերը բանդակազարդ երեսներով դեպի վար դրվելով՝ օգտագործվել են որպես ծածկի եզրասալեր:

Նկ. 42 Խաչքարերի օգտագործումը գանգալապուսն արևելյան ճակատում:



խաչաքանդակ սալերը: Որոշ խաչքարեր էլ գլաքարից են:

Հանդարերդի խաչքարերի հիմնական մասը ծավալային և հորինվածքային առումով ներկայանում է շարքային օրինակներով: Դրանց բնորոշ է ցածր տեխնիկական կատարումն ու պարզունակ հորինվածքային լուծումը: Նման պայմաններում այս կամ այն օրինակի կոնկրետ թվագրությունը, երբ, որպես կանոն, բացակայում է արձանագրությունը, որոշակի դժվարություններ է հարուցում: Արցախի խաչքարերի թվագրության դեպքում պետք է նկատի ունենալ նաև կոթողների ծավալային լուծումների, խաչի և առանձին մոտիվների ավանդականությունը, որի դեպքում, օրինակ, 13-րդ դարի օրինակը կարող է համարյա նույնական լինել 10-11-րդ դդ. խաչքարերի հետ:⁸⁰

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքը, Հանդարերդի խաչքարերի մեջ վաղ՝ 10-11-րդ դդ. վերաբերող խումբը կարելի է առանձնացնել որոշակի վերապահությամբ: Այս խմբում առա-

վել մեծ հավանականությամբ վաղ օրինակների թվին կարելի է դասել հարավային մատուռի հարավային պատում հորիզոնական դիրքով օգտագործված խաչքարը (նկ. 43), որը բազալտե մի սալ է՝ մակերեսի շատ կոպիտ հարթեցումով: Այն, ասեք, ցուցում է խաչքարագոյացման ամենաառաջին փուլը՝ 9-րդ դարը, երբ հորինվածքը քանդակվում էր բնականից հարթ տեսք ունեցող սալի վրա: Այս խաչքարի վաղ բնութագիրը հավաստվում է նաև ելնդավոր քանդակով, որն իրենից ներկայացնում է երկրյթակ թևերով կոթառավոր խաչ՝ ընդգծված փորագիր եզրակոսով: Սրան մոտենում են մի քանի կոթողներ, որոնց վրա պահպանված են վաղ խաչաձևերը, սակայն քանդակն արված է ավելի ցածր ելնդավորությամբ (նկ. 44): Որոշ օրինակներում խաչից բացի կան հորինվածքի նաև այլ մանրամասեր՝ վերնանկյունից դեպի խաչահատումն իջնող խաղողի ողկույզներ, խաչի ներքևի թևի երկու կողմերում դրվող պարզ վարդյակներ և այլն (նկ. 45): Բացառված չէ այս խմբի որոշ խաչքարերի ավելի ուշ՝ ընդհուպ մինչև 13-րդ դ. թվագրությունը:

Բնական՝ արդեն «պատրաստի» սալի օգ-

⁸⁰ Օրինակ՝ Դաղիվանքի մի շարք խաչքարեր, երև չլինեն նրանց վրայի 12-րդ դ. վերջերի արձանագրությունները, կարելի էր համարել առնվազն 10-11-րդ դարերի:



տագործումով և խնձորակի վրա հենվող շառավղաձև լայնացող թևերով խաչի գծային կատարումներով այս խմբի մեջ կարելի է դասել եկեղեցու արևմտյան ճակատում և հիշյալ հարավային մատուռի հարավային պատում օգտագործված խաչքարերի մի զգալի մասը: Կարելի է նույնիսկ ենթադրել, որ այս խաչքարերը ծագում են միևնույն վայրից, քանի որ ընդհանրությունները շատ ակնհայտ են:

Ըստ խաչի ուրվագծի կարելի է առանձնացնել չընդհատվող ակոսով իրագործվող խաչերով կոթողները (նկ. 46): Այստեղ վարպետը ողջ խաչապատկերը ստացել է առանց փորագիր գիծն ընդհատելու, ինչպես, օրինակ, կարելի է խաչ նկարել թղթի վրա՝ առանց գրիչը թղթից կտրելու: Նորից բացակայում է եզրագոտին, խաչերից բացի այլ լրացուցիչ մոտիվներ նույնպես չկան:


Ժամանակագրական հաջորդ խումբը վերաբերում է 12-13-րդ դարերին: Այն արդեն ըստ հորինվածքի կառուցվածքի ներկայանում է մի շարք տիպերով՝ ներառելով նաև խաչքարային մշակույթի մի քանի եզակի օրինակներ:

Համեմատաբար վաղ օրինակների թվին կարելի է դասել բավականին ձգված համամասնություններով (որոշ օրինակների բարձրությունը

Նկ. 45 Խաչքար, 10-11-րդ դարեր:

Նկ. 46 Խաչքար, 11-12-րդ դարեր:

Նկ. 47 Խաչքար, 12-րդ դար -13-րդ դարի սկիզբ:



գերազանցում է լայնությունը մոտ երեք անգամ) մի քանի խաչքարեր (նկ. 47, 48, 49), որոնց հորինվածքը ներկայանում է խնձորակ-վարդյակի վրա հենվող՝ ակնհայտորեն ոսկերչական նախօրինակից ընդօրինակած խաչով: Թեև քանդակը բավականին մոտավոր է, այնուամենայնիվ ելնդավոր կիսազանհիկների տակ կարելի է գուշակել մետաղական խաչի հիմքի վրա գողված լարերը, իսկ բլթակների ու քառանկյուն խորացումների տակ՝ կիսաթանկարժեք քարերն ու ապակիները: Խնձորակի վրա հենվող խաչի թեման շարունակվում է մի քանի այլ խաչքարերում էլ: Մի դեպքում հորինվածքն ունի մի շարք հավելումներ (խաղողի ողկույզներ, շրջանների մեջ ներառված խաչեր, եզրագոտի) և թվագրված է 1205թ. (նկ. 50):

Սակայն թե Արցախի և թե կոնկրետ Հանդաբերդի խաչքարային արվեստի բարձրակետը 12-րդ դարի երկրորդ կեսը և 13-րդ դարն են: Այս ժամանակ է, որ խաչքարային մշակույթի մի շարք բնութագրեր (կորոդի ծավալային հստակ մշակում, արևմտահայաց երեսի համատարած քանդակազարդում, երկրաչափական և բուսական զարդերի համադրում, հորինվածքի կառուցվածքի եռամասնություն, պատկերաբանդակի ներառում և այլն) դառնում են համատարած:



Նկ. 48 Խոսքար, 12-րդ դար - 13-րդ դարի սկիզբ:

Նկ. 49 Խոսքար, 12-րդ դար - 13-րդ դարի սկիզբ:

Նկ. 50 Խոսքար, 1205 թ.:



10 0 10սմ




Երկլար և եռալար ելնդավոր «թելերը» փոխ-
 հյուսվելով ստեղծում են եզրագոտիները, քիվը,
 կենտրոնական խաչը (նկ. 51, 52, 53)՝ երբեմն էլ
 հաջող կերպով ներառելով նաև պտուղները կամ
 խաղողի ողկույզները (նկ. 54, 55): Երկրաչափա-
 կան բարդ միահյուսված զարդերով առանձնա-
 նում են կրաքարից կերտված երկու կանոնավոր
 խաչքարերը: Համատարած գծաքանդակին ար-
 ված է այնպես, որ խաչի խորանի ներքնաեզրն իր
 ուրվագծով համապատասխանում է կենտրոնա-
 կան խաչի թևերի եզրագծերին, և խորանը, կար-
 ծեր, խաչի համար մի յուրօրինակ պահարան է:
 Այս խաչքարերից առաջինը թվագրված է ՌԿԱ
 (1212) թվականով (նկ. 56): Չնայած քանդակը
 բավականին վնասված է, բայց զգացվում է հո-
 րինվածքի նուրբ ու համաչափ ուրիշմը, խաչատա-
 կից դեպի վեր բարձրացող արմավազարդը վեր-
 նամասերում վեր է ածվում թռչունների, վերին
 խաչաթևից աչ և ձախ պահպանվել են արևային-
 լուսային նշանները:

Առանձին խումբ են կազմում կարծր բազալ-
 տից կերտած խաչքարերը, որոնց միավորում են
 նաև մեանդրային զարդի հաճախականությու-

Նկ. 51 Խաչքար,
13-րդ դար:

Նկ. 52 Խաչքար,
12-րդ դար -13-րդ դարի
սկիզբ:

Նկ. 53 Խաչքար,
12-րդ դար -13-րդ դարի
սկիզբ:



նը, եռալարերից կազմված պարզ հյուսվածքները (նկ. 57): Խաչքարային մշակույթում առանձնակի է կանգնած մի խաչքար (նկ. 58), որտեղ խաչատակի մեանդրային ձևավորումներով վարդյակը նմանվում է փակ-լաբիրինթատիպ մի կառույցի, որի մեջ, ինչպես վանդակում, փակված է գլուխը դեպի մեջքը թեքած կարավատիպ մի թռչուն (նկ. 59):⁸¹ Վարդյակի երկու կողմերից, արմավազարդի փոխարեն, դեպի խաչահատումն են բարձրանում երկու մրգատու ծառեր, դատելով պտուղներից՝ խնձորենի և տանձենի⁸², ճյուղերին՝ չորսական թռչուն: Քանդակագործը ձգտել է պատկերել թռչունների երկու տարբեր տիպեր. «խնձորենուն» թռածներն ունեն երկար, դեպի ներքև լայնացող պոչեր (նկ. 60), իսկ «տանձենուն» թռածները՝ մեջքերին պուտեր և դեպի ներքև ավելի նեղացող պոչեր (նկ. 61): Տեսարանն ավարտում են հորինվածքի խորանի անկյուններից դեպի խա-



Նկ. 58 Խաչքար,
13-րդ դարի
մոտ:

Նկ. 59 Խաչքար,
13-րդ դարի
մոտ:

Նկ. 60 Խաչքար,
13-րդ դարի
մոտ:


⁸¹ Ցաղաց Քարի 1041թ. խաչքարերից մեկի վարդյակն էլ ներառում է պոչերով իրար դարձած չորս գույգ թռչուններ, դատելով դեպի գլուխն ուղղված պոչերից՝ թերևս, սիրամարգեր:
⁸² Տանձենին կարելի էր համարել և նոնենի, եթե նրա պտուղներն այդքան տանձաձև չլինեին. նույն պտուղների նման պատկերում ինձ չի հանդիպել միջնադարի հարյուրավոր քանդակներում:



չահատումն իջնող խաղողի ճոխ ողկույզները: Կարելի է ենթադրել, որ այգային այս տեսարանը ներկայացնելու համար վարպետը պատկերել է իրեն ծանոթ ծառեր ու թռչուններ: Ընդհանրապես խաչքարային հորինվածքը, շեշտելով խաչի փրկագործական դերակատարումը, հաճախ է փորձում զանազան բույսերի ու կենդանիների (հատկապես թռչունների) և երկրաչափականացված զարդերի օգնությամբ պատկերել ապագայի կան երկնային դրախտը: Ընդ որում, սովորական են արձավագարդն ու խաղողը, շուշաններն ու նուռը: Եվ քննարկվող խաչքարն այն եզակիներից է, որն օգտագործում է զուտ տեղական ծառատեսակներ:⁸³ Եթե նկատի ունենանք, որ խաչատակի վարդյակի խորհրդարանական շարքի մեջ է մտնում և Եղեմի կամ Ադամի դրախտը,⁸⁴ ապա կարող ենք ենթադրել, որ այստեղ ներկայացված է Հին և Նոր դրախտների խորհրդանշական հակադրությունը՝ ի դեմս վանդակում փակված և ծառերի վրա ազատ թռչած ու դրանց պտուղները վայելող թռչունների:

⁸³ Խնձորենու են վերածված և Մանկունքից (Ազատ գետի հովիտ) հայտնի մի խաչքարի ուղղանկյալ արձավագարդերը (**Պետրոսյան Շ., Խաչքար**, նկ. 472):

⁸⁴ Խաչքարային հորինվածքում խաչատակի առանձին բաղադրիչների, այդ թվում և վարդյակի խորհրդարանության մասին մանրամասն տե՛ս **Պետրոսյան Շ., Խաչքար**, էջ 277-294:



Այս խմբում առանձնանում են նաև պատկերաբանդակներ կրող երեք խաչքարեր: Դրանցից մեկը՝ դրված առանձին կազմած հյուսիսային մատուռի հարավային պատի մեջ՝ ներսից աղբրեջանցիների կողմից կռակի հարվածներով բաժանվել էր մի քանի տասնյակ բեկորների և հայտնաբերվել է մատուռը մաքրելու ժամանակ (նկ. 62):⁸⁵ Խաչախորանը, եզրագոտին, խաղողի ողկույզներն ու երիցուկներն արված են 12-րդ դարի վերջերին բնորոշ հստակ ու վարժ ռելիեֆով: Խաչային հորինվածքից ներքև պատկերված է մի հեծյալ ռազմիկ: Հորինվածքը համարյա ամբողջությամբ կազմված է եղևալոր երկլարի և եռլարի հյուսումներով: Երկլար եղևալորով կազմվել են կենտրոնական

⁸⁵ Ընդհանրապես կռանով բարբարոսաբար ջարդուփշոբ են արվել պատերի մեջ դրված առավել աչքի ընկնող խաչքարերը: Կարելի է ենթադրել, որ ավերողները կարծել են, թե նման քարերի ետևում ինչ-որ գանձեր կան:

Նկ. 57 Խաչքար, 12-րդ դար -13-րդ դարի սկիզբ:

Նկ. 58 Խաչքար, 1194 թ.:




Նկ. 59 Մանրանաս
1194 թ. խաչքարից:

Նկ. 60 Մանրանաս
1194 թ. խաչքարից:

Նկ. 61 Մանրանաս
1194 թ. խաչքարից:

խաչը և կից գարդերը, եռալարով՝ բավականին լայն եզրագոտին ու քիվը, ականթագարդի նմանակումը: Հորինվածքին առանձին գրավչություն են հաղորդում խորանի վերնանկյունից դեպի խաչահատումն իջնող խաղողի ողկույզները, խաչի ստորին թևի երկու պարանահյուս ցողունների վրա դրված գույգ երիցուկները: Պատկերաբանդակը, ինչպես որ բնորոշ է Արցախի խաչքարերին, տեղադրված է նախաշային հորինվածքից ներքև և նրանից դուրս: Այն պատկերում է ոչ բարձր ռելիեֆով իրականացված զինավառ հեծյալի (նկ. 63): Ձին ներկայացված է հանդիսավոր քայլքի պահին, ունի բարձր պարանոց, կանոնավոր ուղղածիզ ոլորքով գլուխ, երկարամազ սանրված բաշ, պոչը հանգուցված է: Մանրամասնորեն պատկերված է ձիասարքը: Հեծյալը նստել է փոքր թամբի վրա, որը ձիու պարանոցի և գավակի տակով անցնող փոկերով ամրացված է մարմնին: Թամբից ուղղածիզ դեպի ներքև է իջել ասպանդակը, որից միայն մի փոքրիկ հատված է երևում: Ձիասարքի մաս է կազմում և սանձը, որի լկանները դրված են ձիու բերանում, իսկ ծայրափոկերը՝ սեղմված հեծյալի թևի և բազուկի միջև՝ արմունկի շրջանում: Ջգացվում է, որ հեծյալը ձգված սանձափոկի միջոցով կառավարում է ձիու քայլքը: Հեծյալը գոտկատեղից ներքև պատկերված է կողքից, գոտկատեղից վերև՝ դիմահայաց՝ հայացքը սևեռած դիտողին: Նա գլխին դրել է հավանաբար ոչխարի մորթուց պատրաստված փափախ,⁸⁶ որի տակից երևում են խիտ, բայց կանոնավոր սանրված մազերը: Նույն ձևով խնամված և սանրված է պատկերված և թավ մորուսը: Հագին ունի հավանաբար չուխա, որից հատակ դիտելի է միայն սրտածն խոր կտրվածքով օձիքը: Այն գոտկատեղում ընդգծվում է լայն գոտիով, որից երկու ուղղածիզ փոկերով կախված է լայնասայր ու կեռ թուրք: Ռազմիկն աջ ձեռքով բռնել է երկարավուն նիզակը, իսկ ձախով՝ գավաթը: Գավաթի փողածնությունն ու միջնա-



մասը բոլորող ելնդավոր կիսազլանը վկայում են, որ վարպետն արտապատկերել է մետաղական նախօրինակը:

Ձիավորի երկրորդ քանդակը տեղադրված է կրաքարե մի խաչքարի վրա, որից միայն հենց պատկերաբանդակի հատվածն է պահպանվել (նկ. 64): Կատարումն այս դեպքում շատ անվարժ է, և քանդակն ավելի ծաղրապատկեր է հիշեցնում: Կունածն գլխարկով երկարամորու ձիավո-

⁸⁶ Արցախի խաչքարային քանդակում հեծյալները որպես կանոն կրում են կոնածն սաղավարտ-գլխարկներ (մանրամասն տես Պետրոսյան Գ. Կ. интерпретации группы сюжетных рельефов..., с. 164-171), և Հանդարտերդի քանդակն այս առումով եզակի է:



Նկ. 63 Մանրամաս նույն խաչքարից:

Նկ. 64 Խաչքարի ներքնամաս՝ հեծյալի քանդակով, 12-րդ դարի վերջ -13-րդ դար:

րը աջով բռնել է հարվածելու պատրաստ թուրը, ձախով՝ ձիու սանձը: Գավակի մասում աչ կողմից ամրացված է աղեղը, ձախ կողմում նկատելի է կապարճի ուրվագիծը: Ձիու պոչը հանգուցված է վզից կախված է կախիկ (որն անվարժ կատարելու հետևանքով չափից մեծ է ստացվել):

Որպեսզի հասկանալի լինեն մեր խաչքարերի պատկերաբանողակները, հարևանցի անդրադառնանք Արցախի խաչքարային պատկերաբանողա-

կին ընդհանրապես: Նախ նկատենք, որ մահկանացուներին ներկայացնող պատկերաբանողակը արցախյան խաչքարերի բնորոշ կողմերից մեկն է:⁸⁷ Այն սովորաբար ընդհանուր եզր չունի պաշտոնական քրիստոնեության հետ, չնայած տե-

⁸⁷ Գրանք վկայված են Գանձասարում, Պատավանդում, Կոշիկ անապատում, Հավապտուկում, Օխտը եղջում, Ծեր նահատակում, Ադին նահատակում, Ամարասում, Բոի եղջում և բազմաթիվ այլ հնավայրերում: Մանրամասն տես Սետրոսյան Գ. Կ интерпретации группы сюжетных рельефов...:

դադարվում է խաչի հարևանությամբ և ուղևորվում է վերջին օրվանն ուղղված կանոնիկ արձանագրություններով: Քանդակները ներկայացնում են ռազմիկների, իշխանների և արհեստավորների, կանանց և երևանների: Կարելի է առանձնացնել կովի և խնջույքի, անմխիթար սգի, «ընտանեկան դիմանկարի» թեմաները: Ըստ էության, Հանդաբերդի վանքի նկարազարված երկու խաչքարային պատկերաբանդակներն առնչվում են հենց կովի և խնջույքի թեմաներին, որոնք ներկայացնում են ռազմիկին լիովին սպառազինված (հեծյալ կամ հետոտոն) և զինու զավաթով: Արցախը հետագայում քաջ հայտնի դարձած դարաբաղյան ձիու հայրենիքն էր, որեմն, պիտի ենթադրել, որ ձիու հանդեպ այստեղ առանձնահատուկ վերաբերմունք կար: Ըստ վրաց պատմիչի՝ Թամար թագուհու ամուսին Գավիթ Սուրանը Գանձակի մահմեդականների դեմ արշավանքի էր ելել արցախյան ձի հեծած. «Այնժամ թագավորը զինվեց ու զինավորվեց, նստեց ղեղնբարը, որը անուն հասած լինելու համար գնել էր Վախթանգ Խաչնևացուց.⁹⁵ տարով բերս և գյուղ, որք են ճարձանը»⁹⁶: *Գեղնբարը* վրացերեն բնագրի *գերդագ-ի* թարգմանությունն է: *Ջերդագն* իր հերթին փոխառություն է պահլավերեն *zartak* կամ պարսկերեն *zardak* բառից, որ նշանակում է դեղին, դեղնագույն (ոսկեգույն) և *գադրակ*, *գերդակ*, *գադր* ձևերով կիրառվել է և գրաբարում:⁹⁷ Եկատենք, որ Արցախի ներկա բարբառում գործածական է *գադրա* բառը, որպես բնադիր դեղնակարմիր ցորեն (հմնտ. «յերի արտի գարգա» արտահայտությունը): Հակված ենք կարծելու, որ *գերդագը* տվյալ դեպքում (այսինքն՝ վրացերեն տեքստում) ոչ թե սոսկ երանգ նշող, այլ արցախյան ձիու ցուցող հատուկ տերմին է, ծագած բառի հենց արցախյան տարբերակից, քանի որ արցախյան ձիու հիմներանգը հենց դեղնակար-

⁹⁵ Այս արշավանքը տեղի է ունեցել 1196-1197 թթ., որեմն ձիու էլ զնվել է դրանից առաջ: Ալինալտ է, որ խոսքը վերաբերում է Հաթրեթի և ողջ Խաչենի ախալ իշխան Վախթանգ Մեծին (մահացել է 1214 թ.):

⁹⁶ **Թորոսյան Խ.** «Թուրանիկների պարսկարարներն ու գավառները» որպես Զաքարյան Հաջաթանի ու Զաքարյանների պարսկարարան նկարնադրոք. Երևան, 1992, էջ 407:

⁹⁷ Մանրասան տնա *Լույն փերտն*, էջ 533-534, ծան. 242:

միրն է: «Ոսկեգույն փայլվում է ոչ թե նրա մազածածկույթը, այլ մաշկի գույնը, այդ պատճառով էլ թվում է, թե փայլը գալիս է ոչ թե մակերեսից, այլ խորքից. ...դարաբաղյան ձին ոսկի է ցայում, վագում է ոսկու մեջ», – այսպիսի հիացմունքով է նկարագրել արցախյան ձիու հիմներանգը հայտնի արձակագիր Մարիետա Շահինյանը:⁹¹

Քննարկվող քանդակներում առանձնակի ջանասիրությամբ պատկերվում են նաև զենքերն ու գլխարկը: Ձիու հետ միասին դրանք հանդես են գալիս որպես անձի կարգավիճակն արտահայտող կարևոր հատկանիշներ: Այստեղ տեղին է հիշել արցախյան մի սովորույթի մասին, ըստ որի սղամարդու համար յուրօրինակ փոխարինողի դեր էին կատարում նրա գլխարկն ու զենքը: Հագուստի հենց այդ մասերն էին, որ նրան փոխարինում էին բացակայության պայմաններում, օրինակ՝ նշանդրերի ծիսակատարության ժամանակ:⁹²

Գառնալով գավաթին, նկատենք, որ Արցախի խաչքարային մի շարք պատկերաբանդակներում ռազմիկները ձևաբանական գավաթներ ունեն: Երբեմն էլ պատկերվում են նաև ծառա-մատուցակները, որոնք մի ձևաբանում սահմանում են, իսկ մյուսով գավաթ են մեկնում ռազմիկին: Ղան հորինվածքների մանրամասն բնութագրից կարելի է եզրակացնել, որ զինու ծիսական ըմպումը կազմում էր այսպես կոչված «հավերժ խնջույքի» թեմայի մի բաղկացուցիչը: Աս էլ իր հերթին սնվում էր ժողովրդական այն պատկերացումներով, թե մաշը հնարավոր է հաղթահարել խնջույքի օգնությամբ:⁹³

⁹¹ Шагинян М. Советское Закавказье, М.-Л., 1931, с. 345:

⁹² **Լխիջյան Սոս.** *Առնային Կարաբաղի հայերը (սոցիալ-տնտեսական պայմաններ) - Տղազգայություն և բանահյուսություն*, հ. 12, Երևան, 1981, էջ 44:

⁹³ Ավելի հանգամանորեն տես **Պետրոսյան Հ.**, Անանիա Շիրակցու «Խրամանակները» և միջնադարյան խնջույքը - Հայաստան և Քրիստոսը Արևելքը, Երևան, 2000, էջ 356-361: **Նույնի**, **Բոնակորի** հայտնի տապանաքարի հորինվածքի մեկնության շուրջ - *Հանդես անտրյու*, 2001, էջ 429-456: **Петросян Г.** Средневековый пир и закавказские союды для подачи вина на стол – Археология, этнология и фольклористика Кавказа, Материалы международной конференции, Эчмиадзин, 2003, с. 343-347:




Նկ. 65 Խոսքար՝
արևրու մոր և կրեխայի
քանդակով, 12-րդ դարի
վերջ -13-րդ դար:

Կարող ենք նաև եզրակացնել, որ Արցախում գոյություն ունեւ հայրենիքի համար կռիւղ ռազմիկի մի առանձնահատուկ պաշտամունք, և մեր պատկերաքանդակներն էլ հենց այդ պաշտամունքի դրսևորումներից մեկն են:

Հանդարերդի խաչքարային եզակի մի հորինվածք էլ պատկերում է սոնտու մորը՝ մանկանը կուրծք տալիս (նկ. 39, 65): Այն նախ խիստ ուշագրավ է երեխաների խնամքի, կերակրող մոր ու մանկան տարազի առումով: Մայրը հագել է մինչև ոտքերի թաթերը հասնող լայնափեշ զգեստ, գլուխը ծածկված է գլխաշորով, որը բոլորում է նաև ծնոտը, կուրծքը դուրս է հանել զգեստի վրա հատուկ արված ուղղահիգ կտրվածքով, որն ամենայն հավանականությամբ կերակրող մայրերի զգեստի առանձնահատկությունն էր: Մայրը մի ձեռքը դրել կրծքին, իսկ մյուսով իրանին է սեղմել կուրծք ուտող մանկանը: Մանուկը, դատելով ակահնչակայներով գլխարկից, պատկանում է արական սեռին. թեև զգեստն իր ձևվածքով և երկարությամբ համարյա չի տարբերվում մոր զգեստից: Այս տեսարանում ամենագարնանային այն է, որ երեխան մոր գրկում չէ, ինչպես որ սպասելի էր երեխային կուրծք տալու դեպքում, այլ կանգնած է ողջ հասակով մեկ: Կարելի է ենթադրել, որ գործ ունենք մի կոնկրետ դեպքի հետ, երբ երեխան կուրծք է կերել նաև ավելի հասուն տարիքում, կամ էլ նման ձևն ակնարկում է հանգուցյալ երեխայի հետ կապված մի ինչ-որ հավատալիք: Ուշագրավ է և գլխարկի ճակատային մասում արված աստղազարդը: Ինչպես արդեն նշել ենք, լինել աստղանշան, քրիստոսաբանական ընկալմամբ նշանակում էր նմանվել Քրիստոսին, կրել աստվածային հատուկ բարեհաճությունը:

Հանդարերդի մոր ու մանկան քանդակի առումով նկատենք, որ այդ թեման զանազան կատարումներով լայն տարածում ունեւ Արցախում: Ամենավաղ օրինակներից մեկը հայտնի է Գանձասարից: Այն 1181թ. մի խաչքար է՝ կանգնեցրած Ներքին Խաչենի իշխան Հասան Վախթանգյանի կողմից (չշխոթել Վերին Խաչենի կամ Հաթերքի համանուն իշխանի հետ, որին այդ ժամանակ պատկանում էր ավագությունը)՝ իր կնոջ և դստեր



զերեզմանների վրա: Ըստ Հ. Օրբելու նկարագրության՝ այս խաչքարում կենտրոնական խաչից ներքև պատկերված է մահիճ, որտեղ նստած է մի կին՝ երեխայի հետ:⁴⁴ Քանի որ քանդակն ակնհայտորեն ներկայացնում է Թագուհուն ու նրա դուստր Խաթունին, մենք կարող ենք եզրակացնել, որ աղջնակը մահացել է վաղ մանկական հասակում: Ըստ Էոթյան մեր քանդակը ներկայացնում է Գանձասարի համեմատ մի փոքր ավելի առաջացած տարիք, քանի որ երեխան արդեն բարորի մեջ չէ: Մանկան կերպարի՝ տարիքի առումով էլ ավելի առաջացած կատարումները հանդիպում ենք Օխառ եղի վանքում, Պատավածորում և Կոշիկ անապատում՝ պատանեկան տարիքից մինչև զինավառ ռազմիկը ներառյալ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում խաչքարային պատկերաքանդակի մի քանի հորինվածքներ, որ պայմանականորեն կարելի է անվանել «անմխիթար սգի» թեմա, որոնք ներկայացնում են հանգուցյալին և նրա մորը: Այսպես, Կոշիկ անապատի մի խաչքարի վրա, սալի ստորին մասում ձախից պատկերված է նիզակով, աղեղով ու կապարճով զինված հեծյալը, իսկ դիմացը՝ սալի աջ կողմում թախտին նստած է մայրը՝ համապատասխան գրոպյամբ. «Մայրն»: Արձանագրությունը հայտնում է. «Թ. :ՈԿԴ: (1215թ.). Ես Չախր կանգնեցի

⁴⁴ Տարօրինակ է, որ Բ. Ուրբելյանը հանդգնած պնդում է, թե այդ խաչքարի վրա նման քանդակներ չկան, և հավանական համարում, թե հեռագրողն այդ խաչքարը չիտթել է մի ուրիշի հետ (Խաչենի իշխանությունը..., էջ 139):



զխաչս որդոյ իմոյ Գրիգորոյ. յիշեցէք»:⁹⁵ Եթե մի դեպքում մայրը ձեռքերը խաչել է կրծքին, ինչպես կարելի է տեսնել նույն Կոշիկ անապատի մի այլ խաչքարի վրա, ապա նույն վանքից ծագող մեկ այլ խաչքարի պատկերաբանդակում մայրը ձեռքերը պարզել է դեպի որդին:

Ժամանակին մանրամասն քննության առնելով այս քանդակները, մենք դրանք միավորել ենք այսպես կոչված ընտանեկան տեսարանների մեջ, որոնք ծնողական առանձնահատուկ խանդավառանքի միջավայրում են ներկայացնում տան կրտսեր անդամներին:⁹⁶

Հանդարերդի 12-րդ դարի վերջի բազալտե այս խաչքարերը զգալի ընդհանրություններ ունեն Դաղիվանքի 12-րդ դարի վերջերի և 13-ի սկզբի մի շարք խաչքարերի հետ: Ի մասնավորի նկատի ունենք Դաղիվանքի 1182թ. հայտնի խաչքարը, որի հետ նույնական են կենտրոնական խաչերը, եզրագույնները, հորինվածքին առանձնահատուկ հմայք հաղորդող երիցուկները: Ուշագրավ է, որ բոլորն էլ պատրաստված են կարծր բազալտից: Այդ խաչքարի արձանագրության մեջ Հասան Վախթանգյան իշխանը, որն Արցախի գահերեցն էր, հայտնում է. «Եւ բերի զխաչաբարս յԱզուս, շատ աշխատութեամբ և բազում հնարիսք...»:⁹⁷ Ցավոք այս վայրը չի տեղայնացվում, սակայն

մենք կարող ենք հավանական համարել, որ այդտեղից են ծագում և Հանդարերդի վանքի քննարկվող խաչքարերը:

Հանդարերդի խաչքարերի և խաչաքանդակ սպերի վերջին խմբի քննությամբ կարելի է վավերացնել 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկզբներին մի վարպետի գործունեությունը, որի կերտած կրաքարե խաչքարերը երևան են բերում քանդակի և հորինվածքի մի պարզունակ սխեմա. բարձր անգարդ եզրագույնի, խորադիր ետնախորք, եզրագուտուն հավասար բարձրությամբ եռաբողբոջ երկատումներ ունեցող կենտրոնական մեկ կամ երկու խաչ՝ երբեմն ավելի փոքր խաչերի և/կամ պարզ արմավագարդերի ուղեկցությամբ (նկ. 66): Թե՛ եզրագուտին և թե՛ խաչերը լրացուցիչ որևէ այլ մշակման չեն ենթարկվել: Խաչքարային մշակույթի համար, սակայն, այս խումբն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ մի շարք օրինակներ իրենց վրա կրում են սապազա հորինվածքի ուրվագծման ակնհայտ հետքերը (նկ. 67): Դրանք վկայում են, որ վարպետը հորինվածքի ուրվագիծը քարի վրա ստանալու համար քանոնի ու կարկինի օգնությամբ կառուցումներ է կատարել, ինչի արդյունքում էլ ստացվել է սապազա հորինվածքի գծապատկերը:⁹⁸

Նման հորինվածքներ կրող համարյա բոլոր կոթողներն էլ պատրաստված են սպիտակ կարծր կրաքարից: Նրանցից մեկը՝ գտնված զանգակատան պեղումներից, կրում է 1271թ. արձանագ-

⁹⁵ ԴՀՎ 5, էջ 27:

⁹⁶ **Պետրոսյան Հ.** *Խոսքար. ծագումը, գործառույթը, պարկերազությունը, իմաստաբանությունը*, էջ 307-309: «Մանկան» կերպարի մասին հայ միջնադարյան պատկերաբանդակում մանրամասն տես **Պետրոսյան Հ.** «Մանուկի» կերպարը ուշ-միջնադարյան հայ տապանաբարային քանդակում (15-17-րդ դարեր) - *Թուխ մանուկ*, Երևան, 2001, էջ 68-84:

⁹⁷ ԴՀՎ 5, էջ 198: Այս արձանագրությունն առավել արժեքավոր է նրանով, որ այստեղ օգտագործվում է հենց *խաչաբարս* բառը, ինչն այս եզրի միակ հայտնի արձանագրական հիշատակությունն է: Եվս մի հզոր վաստարկ ընդդեմ աղբրեջանական հերյուրանքների, թե Արցախի խաչքարերն աղվանական են:

⁹⁸ Ինչպես ցույց է տվել Անդրկովկասի զարդարվածի նշանավոր հետազոտող Յ. Բալտուշայտիսը, բազմապրոֆիտ ու համասան երկրաչափական քանդակի ստեղծումը ենթադրում էր մաթեմատիկական խոր գիտելիքների առկայություն, քանոնի և կարկինի օգնությամբ ճշգրիտ չափումների իրագործում (**Բալտուշայտիս Յ., Ուսումնասիրություն վրաց և հայ միջնադարյան արվեստի**, Երևան, 2003, էջ 20-39): Ինչպես տեսնում ենք, այս դեպքում դա ոչ թե ենթադրելի է, այլ ուղղակի տեսանելի:



րություն (նկ. 83): Խաչքարերից բացի կան նաև հատուկ պատի մեջ ազուցանելու նպատակով պատրաստված խաչքանդակ սալեր: Այս ամենը հիմք է տալիս խոսել վանքային հիմնական շինությունները կառուցելու ընթացքում ծրագրավորված գործունեության մասին: Անհավանական չէ ենթադրել, որ դրանց հեղինակը հենց Դավիթն է, որն իրեն անվանում է վարդպետ՝ մի եզր, որը, ինչպես քաջ հայտնի է, դասական միջնադարում օգտագործում էին նշանակելու թե՛ իմաստասեր հոգևորականին և թե՛ ճարտարապետ-քարգործին:⁹⁹ Նկատենք, որ վանքի շինարարական արձանագրության մեջ հատուկ շեշտվում է, որ «շինեցաւ ժամաւ/տունս եւ եկեղեցիքս Դաւիթ վարդապետ/ի/ ձեռամբ»: Այնպես որ բոլոր հիմքերը կան պնդելու, որ Դավիթը ոչ միայն կառուցել է շինությունների հիմնական մասը, այլև քանդակել է կրաքարե խաչքարերի և խաչքանդակ սալերի մի մեծ խումբ և դրանով զարդարել եկեղեցական շինությունների միապսղաղ մակերեսները:

Այս առիթով նշենք և մի եզակի գյուտի մասին: Դա մարմարյա փորքիկ մի խաչասալ է (ցավոք գտնվել են միայն երեք բեկորներ, որոնք միանալով կազմում են նախնական սալի նեքեի կեսը)՝ խաչի գծապատկերով և 1276 թ. արձանագրությամբ (նկ. 68): Բացառված չէ, որ սա էլ Դավիթ վարդապետի ստեղծագործությունն է:

Տապանաքարեր: Հայտնի է, որ հայ միջնադարի դասական գերեզմանային կառույցը ներառում էր ստորգետնյա թաղման խուցը, հորիզոնական դիրքով դրվող տապանաքարը և ուղղաձիգ

կանգնեցված խաչքարը: Եթե խուցն ու տապանաքարը խորհրդանշական ձևով իրականացնում էին խզումը, սպա խաչքարն, ընդհակառակը՝ կապը:¹⁰⁰ Եվ կախված այն հանգամանքից, թե տվյալ մշակութային միկրոմիջավայրում որ բաղկացուցիչն էր ավելի կարևորվում, քանակապես գերակշռում և հաճախ էլ ճարտարապետորեն գերակայում էր այս կամ այն բաղկացուցիչը: Արցախյան 12-14-րդ դդ. բացօթյա գերեզմանոցների դեպքում, մանավանդ՝ վանքերին կից, ակնհայտորեն գերակշռել են խաչքարերը: Տապանաքարերը որպես կանոն դրվել են գավիթներում (այդ դեպքում ուղղաձիգ բաղկացուցիչի խորհրդանշական դերակատարումն իրագործում էր հենց գավիթի կառույցը. բնութագրական է, որ ինտերիերային տապանաքարերի վրա խաչքար չէին կանգնեցնում) կամ էլ եկեղեցական շենքերին անմիջապես կից ստեղծվող տապանաքակերում: Հանդաբերդի վանքի պեղումների հետևանքով բացվել են երկու տապանաքակեր: Մեկը կից է հյուսիսային առանձին կանգնած մատուռին՝ հարավից, երկրորդը՝ եկեղեցուն կից հարավային մատուռին՝ նորից հարավից: Առաջին տապանաքակում կիրառված տապանաքարերը մոտավոր

⁹⁹ Ընդհանրապես նկատելի է, որ գերեզմանային կառույցների ընդհանրական խորհրդարանությունը սկսած բրոնզի դարից երևան է բերում երկու հակադիր ընկալման համադրում. մի կողմից հանգուցյալի հետ կապի խզում (գերեզմանափոս, դամբանալիցք, պատյան, տապանաքար), մյուս կողմից այդ կապի ապահովում (մենիիր, աշտարակ, կորզան, ֆալոս, խաչքար և այլն), հանգամանք, որը վկայում է հենց մահվան երկակի ընկալումը հին հասարակություններում: Մանրամասն տես **Պետրոսյան Շ.**, Բոնակոթի հայտնի տապանաքարի հորինվածքի մեկնություն շուրջ, էջ 435-437: **Նույնի,** Խաչքար. ծագումը, գործառույթը, պարկերագրությունը, ինստրաբանությունը, էջ 339-341:

Նկ. 68 Մարմարե խաչասալ, 1276 թ.:

Նկ. 69 Հարավային մատուռին կից տապանաքար:

⁹⁹ **Բարխուդարյան Ս.,** Միջնադարյան հայ ճարտարապետները և քարգործ վարպետները, Երևան, 1963, էջ 18-19:



հարթ սալեր են՝ առանց լրացուցիչ մշակման և առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում: Երկրորդ տապանաքարի չորս տապանաքարերից (նկ. 69) երկուսը լավ հղկված, շուրջանակի ակոսով եզրավորված ուղղանկյուն սալեր են՝ յուրաքանչյուրի նեղ կողերից մեկի վրա փորված միջանցիկ անցքով: Կոթողների վրա նման անցքերը բավականին հին ակունքներ ունեն: Դրանք առկա են դեռ ուշբրոնզեդարյան կոթողների և կիկլոսյան ամրոցների մեծ քարերի վրա (օրինակ՝ Շաղատի ամրոցը, Ջորաքարերի կոթողները): Դրանք լայնորեն կիրառվել են և միջին դարերում թե՛ խաչքարերի և թե՛ տապանաքարերի վրա: Ավելի քան հավանական է, որ դրանք ունեցել են զուտ տեխնիկական նպատակ. անցքերն օգտագործվել են պարանների օգնությամբ քարերը տեղափոխելու և տեղադրելու համար: Այս տապանաքարի տապանաքարերից մեկի վրա առկա են մարդկային մարմնի երկու գծապատկեր: Կարելի է վստահորեն ասել, որ տապանաքարը դրվել է երկու հանգուցյալի վրա: Մարդկային մարմնի սխեմատիկ պատկերումը տապանաքարի վրա ածանցյալն է հիշատակի միջնադարյան ընկալման: Հարթ տապանաքարը հանդես էր գալիս որպես վերջին ժամանակներին ուղղված «կյանքի մատյան», որի վրա աշխատում էին թողնել հանգուցյալի անունն ու պատկերը:¹⁰¹ Այս տեսակետից ուշագրավ է և մի հարթ տապանաքար (նկ. 70), որի նախնական



տեղն անհայտ է (այն գտնվում էր վանքի տարածքով աղբրեջանցիների բացած ճանապարհի եզրին և, հավանական է, տեղաշարժվել է հենց այդ ճանապարհին անցկացնելու ընթացքում) և որը կրում է Աղվանից կաթողիկոս Տեր Ստեփանոսի անունը: Այս տապանաքարն էլ վերնամասում ունի կլոր միջանցիկ անցք:

Մկրտության ավազանը (նկ. 71): Մկրտության ավազանը, ինչպես պարզել են պեղումները, տեղադրված է եղել գլխավոր եկեղեցու հյուսիսային և արևմտյան պատերի հատման անկյունում՝ հատակի մակարդակով: Այն համարյա քառանկյուն լայնաշորթ քարե տաշտակ է՝ հատակին փորագիր խաչապատկերով և շուրթի վրա Դավիթ վարդապետի անունը կրող ու 1273 թվականով թվագրված արձանագրությամբ:¹⁰² Հայտնի է, որ մեր եկեղեցիներում մկրտության ավազանը տեղադրվում էր հյուսիսային պատում՝ հատուկ այդ նպատակով ստեղծված խորշի մեջ՝ աղոթասրահի՝ բեմին մոտ հատվածում: Մեր դեպքում ակնհայտ է, որ եկեղեցու նախնական կառուցումն ավազան նախատեսված չի եղել (ինչը բնորոշ է մատուռ-եկեղեցիներին): Կարելի է վավերացնել, որ այն ավելացրել է Դավիթ վարդապետը մինչև վանքում 1276թ. իր հիմնական շինարարական գործունեության ձեռնարկելը: Այսինքն, Դավիթը ոչ միայն կառուցել է մի շարք նոր շինություններ, այլև հարդարել-գարդարել է արդեն գոյություն ունեցած եկեղեցին: Բացառված չէ, որ եկեղեցուն է պատկեր և Դավիթ վարդապետի անունը կրող մարմարյա սալաքարը:

Նկ. 70 Աղվանից կաթողիկոս Տեր Ստեփանոսի տապանաքարը:

Նկ. 71 Մկրտության ավազան, 1276 թ.:

¹⁰¹ Մանրամասն տես Պետրոսյան Հ., Ողջերը և մեռածները. մահը և անմահությունը հայ ավանդական աշխարհընկալման համակարգում - *Գրություն և րեխանիկա*, 2003, թիվ 6-7, էջ 57-58: Եսայի, Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը - *Հայոց պարմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու*, թիվ 6, Երևան, 2005, էջ 206:

¹⁰² Արձանագրության տեքստը և բնութագրեր տես Արձանագրությունները բաժնում:



Նկ. 72 Խոսքարային
սրահկերպարանրակ և
արձանագրություն, 12-րդ
դարի վերջ -13-րդ դար:

Գլուխ Ե

Արձանագրությունները

Հանդարերդի վանքի հետազոտության համար առաջնակարգ նշանակություն ունեն նրա արձանագրությունները, որոնց զգալի մասը հայտնաբերվել է հենց պեղումների շնորհիվ (ճկ. 72):

Ընդհանրապես՝ մատենագիր աղբյուրների համեմատ իրենց ունեցած շատ ավելի ընդարձակ գործառնական դաշտի շնորհիվ արձանագրություններն առանձնահատուկ պատմական սկզբնաղբյուրներ են: Ի տարբերություն գրքի, որն առավելապես ենթադրում էր անհատական օգտագործում, իսկ հաճախ՝ նաև մեկուսի ընթերցում, արձանագրություններն ըստ էության նախատեսված էին հասարակական դիտարկման և ընթերցման համար: Այս հանգամանքը պայմանավորել է արձանագրությունների գործառնական, թեմատիկ, լեզվադճական և պատկերագրական առանձնահատկություններն այն աստիճան, որ ի դեմս դրանց մենք գործ ունենք ոչ միայն և ոչ այնքան սոսկ գրչության մի առանձին ձևի, որքան մշակութային տարողունակ երևույթի հետ: 5-18-րդ դարերից մեզ են հասել մոտ 20 հազար հայերեն արձանագրություններ՝ տեղադրված տարբեր շինությունների, առանձին կանգնած կոթողների և զանազան նյութերից պատրաստված պաշտամունքային, հասարակական, տնտեսական, կենցաղային ու արհեստագործական իրերի վրա: Նրանցից հրատարակված են մոտ 15 հազարը:

Արձանագրությունների լայն տարածման հիմքերից մեկը Հայաստանում քարի (ժայռերի, լեռների) առատությունն էր և այդ առատությամբ պայմանավորված նրա տնտեսամշակութային և պաշտամունքային կարևորությունը: Քարն իր բազմազան տեսակներով ու ձևերով գործիքների ու հարմարանքների իդեալական հումքն էր, կառույցների հիմնական շինանյութը, միջավայրի ու բնապատկերի և պաշտամունքի անբաժան մասը: Լեռներն ու ժայռերը համարվում էին աստվածային բնակարաններ, հանդես էին գալիս որպես մշտականության ու հավերժության խորհրդանշաններ: Հայաստանի լեռներում սփռված հազարավոր ժայռապատկերները վկայում են այն կարևոր դե-

րի մասին, որ հազարամյակներ շարունակ եստկացվում էր քարածայռին՝ որպես պատկերագիր և նշանագիր ինֆորմացիայի կրողի:

Ըստ երևույթին հայ գրերի գյուտի նախօրյակին քարի՝ որպես հիմնական գրանյութի ավանդույթը բավականին կայուն էր: Այսպես, գյուտի վաղմիջնադարյան որոշ նկարագրություններում Մեսրոպ Մաշտոցին աստվածային հրամանով գրերը գծագրվում-ցուցադրվում են հենց քարի վրա. «Ե տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն սչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք զծին՝ կուտեալ ունէր քարն (եւլ տեսնում է ոչ՝ երազ քնի մեջ, ոչ՝ տեսիլք արթնութեան մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը զծերի հետքը պահում էր ինչպես ձյունի վրա)»¹⁰³: Նման ընդհանրական ընկալման գոյության օգտին է խոսում և նորաստեղծ գրերի անվանումը՝ երկաթագիր, որն ըստ երևույթին նշանակում էր երկաթով գրվող, այսինքն՝ քարի վրա գրելու հասարակառնական:

Նկատի ունենալով հայերեն գրերի գյուտի արձանագիր միջավայրն ու վաղ տատերի երկաթագիր անվանումը, կարելի է ենթադրել, որ առաջին արձանագրությունները երևան են եկել գրերի գյուտից անմիջապես հետո: Գոհնէ 5-րդ դարի կեսերին արձանագրություններն արդեն լայն տարածում ունեին, Եղիշեն Վարդանանց պատերազմից անմիջապես հետո երևան եկած հիշատակագիր կոթողների մասին խոսում է որպես շատ տարածված և հանրաձանոթ մի երևույթի¹⁰⁴: Սակայն մեզ հասած արձանագիր վաղ օրինակների թվագրումը բարդանում է նրանով, որ դրանցում թվականներ չեն օգտագործվում, և ժամանակը կարելի է որոշել պակաս վստահելի հանգամանքներով՝ ըստ հիշատակվող անձանց, դեպքերի, տառասների.

¹⁰³ Մովսիս Խորենացու *Պատմություն Հայոց*, Տեղիս, 1913, էջ 327: Մովսես Խորենացի. *Պատմություն Հայոց* Աշխարհարար բարձրագույն դպրոցի Մեծ Մովսեսյանի, Երևան, 1990, էջ 214:

¹⁰⁴ Եղիշէի *Վասն Վարդանայ և հայոց պատերազմին*, Երևան, 1957, էջ 203:

ճարտարապետական կամ հնագիտական միջավայրի: Թվականակիր առաջին արձանագրությունները երևան եկան 8-րդ դարի վերջերին, դրանք որպես կանոն թվագրվում էին հայոց մեծ թվականով, որը 7-րդ դարում մշակել է Անանիա Շիրակացին և որի մեկ թվականը համապատասխանում է ներկա թվականության 551 կամ 552 թվականին:

Երկրորդ կարևոր հանգամանքը, որը սլայմանավորեց վիճագիր արձանագրությունների լայն կիրառությունը, հիշատակի միջնադարյան ընկալումն էր: Այն ենթադրում էր, որ կենդանության օրոք ցանկացած հավատացյալ կարող է ստեղծել իր «կյանքի մատյանը»՝ հոգու փրկության յուրատեսակ մի երաշխիք, որը ժամանակների վերջում, երբ կայանա Արդար դատատանը, պիտի բացվի Քրիստոսի առջև և ներկայացնի հավատացյալի կյանքը: Նման մատյանների դեր էր վերագրվում ոչ միայն գրքերին և հատկապես նրանց հիշատակարաններին, այլև ցանկացած սրբազնացված կառույցի և իրի (տաճար, խաչքար, տապանաքար, հոգևոր կենտրոններին նվիրվող բազմապիսի իրեր), որի վրա կարելի էր թողնել վերջին օրերին ուղղված տեղեկություններ՝ նախ և առաջ՝ «անվան գիրը», ապրած ժամանակը, կատարած գործը: Հոգու փրկություն հայցող հավատացյալը նման հիշատակագրով «ապահովում» էր իր կյանքի արժանահավատ ներկայացումը Վերջին դատաստանին՝ հետևաբար և անրագրում փրկության հույսը:¹⁰⁵ Եվ եթե գրքերի դեպքում ավելի մեծ էր անվան գիրը հետագայում ուրիշների կողմից ջնջելու հավանականությունը, հեռանկար, որը միջնադարյան գրչի մտատանջության հիմնական թեմաներից մեկն էր,¹⁰⁶ ապա արձանագրությունների դեպքում այն շատ ավելի դժվար էր թվում ոչ միայն տեխնիկապես, այլև շնորհիվ այն բանի, որ

արձանագրությունները հասարակայնորեն «վավերացված», տեսանելի ու հսկողության ենթակա գրություններ էին:

Թերևս պակաս կարևոր չէր և այն հանգամանքը, որ արձանագրությունների մի զգալի մասն էլ դրան զուգահեռ ուներ կարևոր կարգավորիչ դերակատարում հենց իրական կենսընթացի տեսանկյունից: Դրանք զանազան հրովարտակներ, հրամաններ, սահմանումներ, պայմանագրեր ու պայմանավորվածություններ էին, որոնք սովորաբար ուժի մեջ էին մտնում փորագրման պահից և միտված էին, ինչպես դրանց տերերն են հորդորում, սլայմանադրում կամ պահանջում՝ հավերժ գործառնության:


Ջարմանալի չէ, որ արձանագրություններն իրենց թեմատիկայով ներառում են միջնադարյան կենսընթացի համարյա ողջ բազմազանությունը, հստակաճանկ ու պարտությունը, հաջողությունն ու անհաջողությունը, շինարարությունն ու բարերարությունը, առջև ու վաճառքը, նվիրատվությունն ու պայմանագիրը, ծնունդն ու մահը, վիշտն ու մխիթարությունը: Ընդ որում, արձանագրություններում այդ ամենը ոչ թե սոսկ հիշատակվում են, այլ, ինչպես նշեցինք, հիշատակվում են որոշակի ակնկալիքով: Փաստորեն՝ արձանագրությանը որպես կանոն հետագա գործառայթ էր վերագրվում: Կարելի է եզրակացնել, որ *արձանագրությունները միջնադարյան հայ հանրայթի, դասի ու խմբի, հաճախ էլ առանձին անհատի կյանքում կռիվի ունեցող փոփոխությունները փաստագրելուց զար, հանրացնող են արձագանքելու, դրանք վավերացնելու, իմաստավորելու և նպաստակատողելու դեպքակապարտումներ ունենին:*

Հայ հանրայթի միջնադարյան կյանքի բազմաթիվ ասպարեզներ, որոնց մասին մատենագրական աղբյուրները լռում են կամ շատ քիչ բան են հաղորդում, մեզ ներկայանում են վիճագրերի օգնությամբ:

Հայ իշխանական բազմաթիվ մանր տները, որոնք սովորաբար չեն ունեցել իրենց տոհմական պատմիչները, հայտնի են դառնում իրենց թողած

¹⁰⁵ Տես *Պետրոսյան Հ.*, խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը – *Հայոց պատմության հարցեր. գիտական հոյակաճանրի ժողովածու*, թիվ 6, Երևան, 2005, էջ 195-216:

¹⁰⁶ Այդ մասին մանրամասն տես *Petrosyan H.* Writing and the Book – In: *Armenian Folk Arts, Culture and Identity*. Bloomington and Indianapolis, Indiana Univ. Press, 2001, p. 57-58.



արձանագրությունների շնորհիվ: Որոշ դեպքերում դրանց օգնությամբ հնարավոր է վեր հանել իշխանական տան ողջ տոհմագրությունն ու տեղական-գավառական գործունեության հիմնական դրվագները, ինչպես որ դա հայտնի չափով նաև Դուփյան իշխանական տոհմի դեպքում է:

Միջհամայնքային բնույթի իրադարձությունների ու ներհամայնքային կյանքի մասին հիմնական աղբյուրը նորից արձանագրություններն են: Համայնքային պարտավորություններն ու պայմանավորվածությունները հաճախ տեղ են գտել բնակավայրի մայր տաճարի պատերին՝ ի տես բոլորին:

Հարկահանության մեխանիզմները, հարկերի տեսակներն ու դրանց չափերը, պետական-պաշտոնական հրամանագրությունը, առևտրատնտեսական պայմանագրերը մեծ մասամբ հայտնի են արձանագրությունների շնորհիվ:

Արձանագրությունները բացառիկ աղբյուր են եկեղեցական կալվածատիրության մի շարք դրսևորումների, եկեղեցի-հավատացյալ փոխհարաբերությունների տնտեսաֆինանսական ու հոգևոր առումների, եկեղեցուն արվող նվիրատվությունների տեսականու և չափերի վերաբերյալ:

Միջնադարի ռազմական, տնտեսական-քաղաքացիական և պաշտամունքային շինարարության տարեգրության մի զգալի մասը մեզ է հասել արձանագրությունների միջոցով: Այն ներառում է բնակավայրերի, վանքերի և եկեղեցական շինությունների հիմնումը, ամրոցների, բուրգ-աշտարակների, կամուրջների, պալատների, արհեստանոցների, ջրամբարների ու ջրանցքների կառուցումը: Շինարարությունը, հատկապես հանրային բնույթի, համարվում էր բրիստոնյա հավատացյալի ամենամեծ բարեմասնություններից մեկը և հենց նման գործունեությունն էր ենթակա առաջնահերթ հիշատակման «կյանքի մատյանում»:

Կոնկրետաճանալով մեր նյութի վրա, կարող ենք հավաստել, որ մատենագրական աղբյուրներում չհիշատակված այս և նման շատ այլ վանքերի դեպքում արձանագրություններն, ըստ էության, դառնում են վանքի շինարարական, տնտեսամշակութային և իրավական կոնկրետ կյանքի մասին միակ գրավոր սկզբնաղբյուրը: Հանդարերդի վանքի դեպքում առանձնահատուկ նշանակություն ունեն և հայերեն արձանագրություններ կրող կղմինդրներն ու թասերի քեկորները, որոնք փաստում են հայերեն գրի օգտագործման տարածվածությունը նաև զուտ կենցաղային մակարդակով, որն իր հերթին էթնիկության ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: Արձանագրական որոշ նորագյուտ նյութեր էլ թույլ են տալիս էլ ավելի ընդարձակել լեռնագավառի անձնանվանական համակարգը:

Հանդարերդի վանքի արձանագրությունները թեմատիկ առումով կարելի է բաժանել երեք խմբի. *շինարարական, նվիրատվական, հիշատակային*: Ընդ որում, վերջին խմբի մեջ են մտնում նաև կղմինդրների վրայի արձանագրությունները:

Շինարարական արձանագրությունների շարքը կարելի է դասել միայն մեկը: Այն փորագրված է հյուսիսային մատուռի բարավորի վրա, որն այժմ ընկած է մատուռից արևմուտք, լանջի վրա: Արձանագրությունը բաղկացած է յոթ տողից, այն հայտնում է (նկ. 73):¹⁰⁷

¹⁰⁷ Արձանագրությունների վերձանությունները ներկայացնում ենք ըստ «Դիվան հայ վիճագրության» կորպուսում կիրառվող սկզբունքների (տես ԴՀՎ, սյր. 1. Անի քաղաք /Կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 27-31), որոնցով արդեն հրատարակված է հայ վիճագրական ժառանգության զգալի մասը: Վերձանության մեր ներկայացման մեջ Դիվանից միակ էական տարբերությունն այն է, որ տեքստը տրվում է փորրատատերով, մեծատատերը կիրառելով միայն ժամանակակից հայերենում ընդունված կանոնների համաձայն: Վերձանությունը մեծատատերով ներկայացնելու սկզբունքը, որ կիրառվում է Դիվանում, ոչ միայն դժվարընթեմնելի է դարձնում տեքստը, այլև հնարավորություն չի տալիս առանց լրացուցիչ փնտրտուքի տարբերակել հատուկ և հասարակ անունները:

Նկ. 73 Հանդարերդի շինարարական արձանագրությունը, 1276 թ.:

1. «:ՉԻԵ: (1276) թ./ Այլ շինեցաւ ժամա-տունս եւ եկեղեցիքս Գլատիթ վարդապետի/ ձեռաբ: Ազատեցին զս/ա հաթերքեցիքն լաւմենայն»¹⁰⁸ չարէ:/ Ած արեւնի գնոսա: Ով/ խափանէ՝ դատի»:¹⁰⁹ Ինչպէս տեսնում ենք, արձանագրությունը հայտնում է, որ Գավիթ վարդապետը կառուցել է ժամատուն-գավիթը և եկեղեցիները: Կարծում ենք, որ եկեղեցիների տակ նախ և առաջ պիտի նկատի ունենայ հյուսիսային առանձին կանգնած մատուռը, որի բարավորի վրա փորագրվել է քննության առարկա արձանագրությունը: Հաջորդ եկեղեցու (կամ եկեղեցիների) տակ կարելի է հասկանալ գլխավոր եկեղեցուն կից մատուռները: Այս երեք կառույցները միավորվում են հին խաչքարերի լայն օգտագործումով, ինչը պակաս դիտելի է թե՛ ժամատանը կից մատուռի և թե՛ զանգակատան պարագայում: Այսպիսով, ավելի քան հավանական է, որ Գավիթը կառուցել է ժամատունը, հյուսիսային առանձին կանգնած մատուռը և գլխավոր եկեղեցուն հյուսիսից և հարավից կից մատուռները: Դատելով «ձեռաբ» արտահայտությունից, Գավիթն այդ ամենը կառուցել է իր սեփական ձեռքերով, ինչը չի բացառում, որ նա նաև կառույցների ճարտարապետն է: Եկատենք, որ միջին դարերում *վարդապետ* նզրն օգտագործվում էր նշանակելու համար թե՛ քարոզիչ-հոգևորականին և թե՛ ճարտարապետ-շինարարին (*վարդապետ* ձևով):¹¹⁰ Սակայն անկասկած է, որ Գավիթը նախ և առաջ հոգևորական-ճարտարապետ է և ամենայն հավանականությամբ վանքի վանահայրը: Այսպէս նա հոգևոր կառույցներ հիմնադրելու իրավունք չէր ունենա և արձանագրությունում էլ կնշեր, թե ում հրամանով կամ նախաձեռնությամբ է կառուցում: Լույնը ենթադրելի է և արձանագրության

շարունակությունից, ուր Գավիթն արդեն խոսում է վանքի իրավական կարգավիճակի մասին, ինչը հազիվ թե վերաբերեր աշխարհական շինարարի կամ ճարտարապետի իրավասությանը: Արձանագրության այն հատվածը, ուր Գավիթը հայտնում է, թե «Ազատեցին զս/ա հաթերքեցիքն լաւմենայն չարէ», այսինքն՝ հաթերքեցիներն ազատեցին վանքը բոլոր հարկերից, մենք արդեն մանրամասն քննել ենք և մի բանի ենթադրություններ արել հաթերքեցիների ով լինելու մասին:¹¹¹ Այստեղ միայն նկատենք, որ ընդհանրապես սպասելի էր, որ արձանագրության սկզբնամասում, ինչպէս որ ընդունված էր, նշվեր, թե ում տիրակալության, իշխանության և/կամ հայրապետության օրոք է տեղի ունեցել այդ ձեռնարկումը: Որպէս օրինակ կարող ենք հղել նույն՝ 1276թ. Սոդթում (օրը մտնում էր Ծարի իշխանության կազմի մեջ) կառուցված եկեղեցու շինարարական արձանագրությունը. «ԹՎ :ՉԻԵ: (1276) ի թագավորութի Ապարդին, կաթողիկոսութի տրՍտեփանոսի, պարոնու թի Հասանա, ազնականու թի ամուսին իրո Մամբանին. ես անարժան Առաքելս շինեցի զեկեղեցիս իշատակ ինձ և ամուսին իմ եւ զաւակաց իմ...»:¹¹²

Արձանագրությունը նաև ցուցում է, որ մեր վանքը չի պատկանել որևէ իշխանական տան: Թվում է ամեն ինչի նախաձեռնողը Գավիթ վարդապետն է, որը ձեռք է բերել արդեն գոյություն ունեցող վանքը, նոր շինություններ է հավելել հին եկեղեցուն, ստեղծել իր անունը կրող մկրտության ավագանը, խաչքարեր և այլն և հասել նրան, որ տեղի աշխարհիկ տերերը զիջել են բոլոր հարկերը:

Նվիրատվական արձանագրություններն ընդամենը երեքն են: Դրանցից երկուսը փորագրված են գլխավոր եկեղեցու արևմտյան պատին դրսից, իսկ երրորդը՝ գլխավոր եկեղեցուն հյուսիսից կից մատուռի բարավորին, որն անցած դարի 80-ական թթ. աղբյուրեցանցիների կողմից ջարդուվաղու է արվել:

¹⁰⁸ Արձանագրության մեջ *ամենայն* օղագրված է համապատասխան նշանով (𐌆), որի մասին տես Աբրահամյան Ա., *Տարոց գիր և գրություն*, Երևան, 1973, էջ 214:

¹⁰⁹ Հրատ. *Կարավետյան Ա.*, *Նշվ. աշխ.*, էջ 27, ուր բաց է թողնված *ամենայն*:

¹¹⁰ Բարխուդարյան Ա., *Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ*, Երևան, 1963, էջ 14-22:

¹¹¹ Տես Հանդարտիյի *վանքը և պալատնայությունն իրավիճակը Վերին Խոսչենում 13-14-րդ դարերում* գլխում:

¹¹² ԴՇՎ. սր. 5. *Արցախ Արագածց Ա. Գ. Բարխուդարյան*, Երևան, 1982, էջ 328-329:



Եկեղեցու պատին փորագրված արձանագրությունները բացվեցին պատահաբար, ժամատան պատի համապատասխան հատվածի փլուզման հետևանքով: Ստացվում է, որ ժամատան կառուցումով դրանք ծածկվել են: Առավել ուշագրավ է, որ այդ արձանագրությունները նվիրատուների համար պատարագներ էին սահմանում և նույնիսկ նզովում դրանք խափանողներին: Կարելի է կարծել, որ Դավթի գործունեության ժամանակ նվիրատուներն ու նրանց անմիջական ժառանգներն այլևս չկային, թերևս չկար և վանքի միաբանությունը: Այսինքն՝ Դավիթը վերականգնել-վերակառուցել է ինչ-ինչ պատճառներով լքված վանքը:

Արձանագրությունները տեղադրված են եկեղեցու մուտքից աջ, պատի համեմատաբար մեծ քարերի վրա և ակնհայտորեն հարմարեցված են նրանց սահմանափակ մակերեսներին: Կարելի է նույնիսկ հավաստել, որ այդ քարերն ի սկզբանե նախատեսված չեն եղել արձանագրությունների համար:

2. Ներքևից առաջին արձանագրությունը, բաղկացած յոթ տողից, հայտնում է (նկ. 74, 75):

«**Ես Աշոտ՝ Հարթ/ա**¹¹³ **ո՛րդի .Գ. (3) համա/դ/կի հող իմ հողոյ/** **Եկեղեցիս տվի. տ/ա՛րումն .Գ. (3) ար ժա/մ. ով չառեայ՝ ի/մ խղճոյս տ/է/ր [է.]»:**¹¹⁴

Ընդհանրապես սա նվիրատվական արձանագրության կաղապարային մի ձև է, որը, որպես կանոն, ավելի գործարքի բնույթ էր կրում: Հավատացյալները վանքին նվիրում էին ինչք կամ գումար, և նվերի իրական արժեքին համապատասխան պատարագներ ստանում: Տվյալ դեպքում Հարթի որդի Աշոտը նվիրել է երեք *համադկի* հող և փոխարենը ստացել երեք պատարագ: Ինչպես ժամանակին պարզել ենք հատուկ քննությամբ՝ *համադկին* հողի չափի միավոր է՝ վկայված միայն Արցախի 12-13-րդ դարերի արձանագրություն-




Նկ. 74 Հարթի որդի Աշոտի արձանագրությունը, 12-րդ դարի երկրորդ կես:

Նկ. 75 Հարթի որդի Աշոտի արձանագրությունը:

¹¹³ Հարթ անձնանունն ըստ Շ. Աճառյանի ծագում է արաբերեն *harb* անունից, որ նշանակում է *կրրիճ, քաջ, ուսովիկ, Աճառյան Շ., Հայոց անձնանունների բարարան*, Երևան, հ. Գ., 1946, էջ 62:

¹¹⁴ Հրատարակվում է առաջին անգամ:

ներում: Ցավոք այս եզրի թե՛ն ստուգարանությունը և թե՛ նշանակած չափը մնում են չբացահայտված:¹¹⁵ Ինչպես կտեսնենք ստորև, Հանդարտրդի՝ դրախտային պատկերագրություն կրող հայտնի խաչքարը կանգնեցվել է Հարբի թոռ Վասակի կողմից՝ իր հոր՝ Աշոտի հիշատակին: Այսպիսով, մենք ունենք վանքի հետ կապված մի գերդաստանի երեք սերնդի անունները՝ Հարբ, Աշոտ, Վասակ: Քանի որ Վասակի խաչքարը կանգնեցվել է 1194 թվականին (երբ Աշոտն արդեն մահացած էր), ուրեմն այս արձանագրությունը փորագրվել է այդ ժամանակից առաջ: Սա նույնպես մի լրացուցիչ կովան է՝ զլխավոր եկեղեցին 12-րդ դարով թվագրելու համար:



0 10սմ
|

Ըստ երևայթին Հարբը որոշակի հեղինակություն և դիրք է ունեցել տոհմում, այլապես Վասակը կբավարարվեր միայն հոր անունը հիշելով, ինչպես որ սովորաբար վարվում էին նման դեպքերում: Այս հանգամանքը հավանական է դարձնում ի դեմս այս Հարբի տեսնել հայտնի Հարբանց տոհմի հիմնադիր Հարբ Ա-ին, որը գործել է 12-րդ դարի 60-70-ական թթ. և որի կալվածքներն այլ տվյալներով տեղայնացնում են Ծարի հարևան Սևորդյաց գավառում:¹¹⁶ Եթե մեր դիտողությունը Հարբի ինքնության մասին ճիշտ է, ապա պիտի կարծել, որ Հարբանց տոհմը կալվածքներ է ունեցել և Լևոնագետի միջնահովտում:

3. Երկրորդ արձանագրությունը, որ տեղադրված է նախորդից անմիջապես վերև, ութ տող է և հայտնում է (նկ. 76).

«Ես Վասակ՝ Կուտ¹¹⁷ որդի/ սովեցլի/

¹¹⁵ Մանրամասն տե՛ս Պետրոսյան Հ., Համայնի-համադիկ, տերմին թե՛ն աշխարհագրական անուն - Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Լեզիկոսաբոլ գիտնականների նախաշջյան, Ջեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1988, էջ 63-64:
¹¹⁶ Այս տոհմի ակունքների մնավորման և հետագա մի քանի ներկայացուցիչների գործունեության մասնամասնելը տե՛ս Մարգարյան Գ., Նոր նյութեր Հարբանց իշխանական տոհմի մասին - Ավանդականի զարգացման հարցերը հայկական մշակույթում, Ջեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1982, էջ 19-21:
¹¹⁷ Ըստ Հ. Աճառյանի՝ այս անձնանվան ծագումն անհայտ է.

եկեղեց/իս հող ես իրք. յ/ տարումն .Գ. արժ/ամ՝ գիս ես զիս նև ջե/ցեք. յաղաթթ/ լիշեցեք»:¹¹⁸


Ինչպես տեսնում ենք, այն իր բովանդակությամբ էապես չի տարբերվում նախորդից, միայն թե հողից բացի Կուտի որդի Վասակը եկեղեցուն տվել է նաև ինչ-որ իրեր՝ մերձավոր հանգուցյալների և իր համար ստանալով տարեկան երեք պատարագ:

4. Նվիրատվական երրորդ արձանագրությունը՝ վեց տող, չնայած խիստ վնասված է (նկ. 77, 78), քննարկման շատ ավելի մեծ հեռանկարներ ունի, քանի որ այն, ինչպես կտեսնենք, թողնվել է քիչ թե՛ շատ հայտնի մի անձնավորության կողմից:

«Յանու[ն Այ] / ես Սասնայ՝¹¹⁹ յ՛րու/առ միաբան եղէ Գ...վան/ք՝ ամէն եկեղեցիքս:


նույնանուն մի անձնավորություն էլ հիշատակված է Հաղպատի գրատան 1179թ. մի արձանագրության մեջ, Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Բ., 1944, էջ 680:
¹¹⁸ Հրատարակվում է առաջին անգամ:
¹¹⁹ Ըստ Հ. Աճառյանի՝ ծագում է Սասուն գավառի անունից, 13-րդ դարում բավականին տարածված անձնանուն էր, Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Դ., 1948, էջ 397-398:

Նկ. 76 Կուպի որդի Վասակի արձանագրությունը, 12-րդ դարի երկրորդ կես:



[Խոստ]աց[ա]ն պատարագեն զ... [եա] մահու ինձ՝ սք Գրիգորի տանին՝...»:¹²⁰

Սասնայի անունով մեկական արձանագրություններ էլ պահպանվել են Դաղիի և Գանձասարի վանքերում: Դաղիվանքի կաթողիկե եկեղեցու արձանագրությունը հայտնում է. «Կաման ԼՅ ես Սասնա ձեռնատր միաբանեցա սք ուխտիս առաջնորդութբ տր Աթանասի, ետու :Դ: եզն ես այլ արդիւնք ի սք կաթողիկէս. ես սահմանեցին ինձ :Բ: ար ժամ զամէն եկեղեցիքս ի տան Սահակս ես կիրակէն: Ով զհողն իսլէ կամ զիմ ժամն խափանէ իմ մեղաց պարտական է. :2Ժ: (1261)»:¹²¹ Շատ ավելի ուշագրավ է Գանձասարի արձանագրությունը. «Յանուն ԼՅ ես Սասնայս հանդաբերդեցի եկի մեծ յուսով ի սք ուխտս Գանձասարս իշխանութբ Աթաբակին. զիմ հոգոյ արդիւնքն ի կաթողիկէս տվի, միաբանքս տվին զժառգարդարն զամէն եկեղեցիքս ինձ պատարագ :Բ: ժամ իմ կենակցին Մահանա, ով խափանէ իմ մեղացն պարտական է :2Ի: թի՛ն (1271)»:¹²² Անունը, ծագումը, համաժամանակությունը, արձանագրության որոշ մասերի նույնակամությունը հիմք են տալիս պնդել, որ երեք դեպքերում էլ գործ ունենք նույն անձնավորության՝ հանդաբերդի ձեռնավոր Սասնայի հետ: Հանդաբերդի մոտիկությունը մեր վանքին շատ ավելի վստահելի է դարձնում այդ հավանականությունը:



Արձանագրության ինսատը, չնայած տեքստի աղճատվածությանը, լրիվ հասկանալի է. Սասնան միաբանել է վանքին, այսինքն՝ ինչ-որ նվիրատվություն է արել և փոխարենը խոստում ստացել, որ մահվանից հետո նրա ետոս ֆրիլության համար պատարագ կմատուցվի:

Եթե «Դ...[վան]ք» մեր վերականգնումը դիտենք հավանական, ապա կարելի է փորձել պարզել և մեր վանքի անունը, որը պետք սկսվեց Դ տառով և ավարտվեց վանք բառիկացուցիչով: Բացատրված չէ, որ Դանթի մտնարկումներից հետո այն կոչվեց սուրբ Դարթի վանք (անչուչո, Դավիթ անվան տակ այս դեպքում պետք նկատի ուենալ սուրբ Դանթի մարգարեին) կամ ուղղակի Դարթավանք:

Նկ. 77 Ձեռնավոր Սասնայի արձանագրությունը, 12-րդ դարի երկրորդ կես:


Նկ. 78 Ձեռնավոր Սասնայի արձանագրությունը

¹²⁰ Հրատ. Կարապետյան Ս., Նշվ. աշխ., էջ 27, ավելի համառոտ: Ցավոք բարավորի համարյա կեսը եղծված է, և վերականգնումները փոքր-ինչ թեական են: Պեղումների ընթացքում մեզ հասցրվեց գտնել բարավորի մի կտոր ևս, սակայն նրա վրայի արձանագրությունը համարյա լրիվ քերված էր:

¹²¹ ԳՀՎ 5, էջ 205:

¹²² ԳՀՎ 5, էջ 51:

Հիշատակային արձանագրություններն ամենամեծ թիվն են կազմում, քանի որ դրանք ներառում են խաչքարերի, տապանաքարերի և կղմինդրների արձանագրությունները: Նախորդ բաժնում տապանաքարերի հետ կապված շեշտել ենք այն հսկայական դերակատարումը, որ խաղում էր հիշատակի ընկալումը հայ միջնադարյան հանրույթի կյանքում: Փաստորեն հենց հիշատակի առանձնահատուկ ընկալումն է պայմանավորել կոթողների բազմաքանակությունն ու նրանց վրա արձանագրությունների առկայությունը: Համաձայն պաշտոնական քրիստոնեության և հայ միջնադարյան մի շարք ժողովրդական ընկալումների, Արդար դատաստանի ժամանակ Աստծո առջև պիտի բացվեն գրքերը և ներկայացվեն մարդկային գործերը, իսկ Աստված էլ պիտի բացի իր գիրքը՝ «կյանքի մատյանը», և մարդիկ պիտի դատվեն ըստ այդ գրվածքների (հմմտ. Գանիլ, Է, 9, 10: Յայտն., Ի, 11-15): Թե ինչպես պիտի հայտնվեն մարդկանց գործերը Աստծո առջև, հետաքրքիր տվյալներ կարելի է քաղել ժողովրդական բանահյուսությունից: Ըստ հայ ավանդական մի շարք պատկերացումների՝ մարդկային գործունեությանն այս կյանքում ուշի-ուշով հետևում են աստվածային զգոնությունը մարմնավորող հրեշտակները, որոնք լրացնում են Արդար դատաստանին ներկայացվելիք մատյանները: Յուրաքանչյուր մարդու հետևում են երկու հրեշտակներ, որոնցից բարին *կյանքի մայրյանում* գրանցում է մարդու բարի գործերը, իսկ չարը՝ *մահվան մայրյանում* գրանցում է չար գործերը:¹²³ Բայց կյանքի մատյանը կարող է լրացնել նաև ինքը՝ հավատացյալը, նրա մեքենավորներն ու հարազատները՝ արձանագրելով բարի գործերը, անվան գիրք և



պատկերը: Ըստ էության, միջնադարում լայն տարածում գտած հարթ ուղղանկյուն տապանաքարերն ու խաչքարերը իրենցից ներկայացնում էին կյանքի մատյանի նմանակումներ, որտեղ գրված էր հանգուցյալի անունը, երբեմն էլ բանդակված էր նրա պատկերը, զբաղմունքը մատնանշող իրերը և այլն: Նման դեր էր հատկացվում ձեռագիր հիշատակարաններին, տաճարներին, կրոնական կենտրոններին նվիրվող կարասուն ու զարդերին, մի խոսքով՝ ցանկացած «սրբազան» կառույցի, մակերեսի, իրի, որի վրա կարելի էր թողնել անվան գիրք և (կամ) պատկերը: Կղմինդրների վրա չի եզակի արձանագրություններն էլ փորագրվել են հենց այդ պատճառով. դրանք նախատեսված են եղել սրբազան կառույցների համար, ուրեմն՝ փորագրել նրանց վրա անունը՝ նշանակում էր ստեղծել վերջին օրերին ուղղված «կյանքի մատյան»:

Այժմ ներկայացնենք այդ արձանագրությունները:

5. Արձանագրությունը տեղադրված է դրախտային պատկերագրություն ունեցող հայտնի խաչքարի ներքնամասում՝ վարդյակի երկու կողմերում (նկ. 79), տասը տող: Խաչքարն այժմ դրված է ժամատան ներսում՝ հյուսիսային պատի խորշին հենած:

«Ես Վասակ թո՛ռն Հարբի կա/ն՛գնեցի գխ/աչ՛ա. ես եւ մայր/ հ[ո]տար իմոյ/ [Աշո]տայ/ Որք երկիրպա/գայք՝ յաղա/թս յիշեց/էք: ԹՎ ին. .: ՈՒՄԳ: (1194)»:¹²⁴

¹²³ Տես, օրինակ, **Արեղյան Մ.**, Հայ ժողովրդական հավատքը - **Արեղյան Մ.**, Երկեր, Երևան, հ. է., 1975, էջ 21-22: «Կյանքի մատյանը» միջնադարյան պոեզիայի ամենատարածված մետաֆորաներից մեկն էր, բավարարվեցր Գրիգոր Նարեկացու «Մատյանից» մի փոքր մեջբերումով. «Եւ անուան գիր՝ ի կենաց մատենէն եղծեալ, Եւ կշտամբանք ընդ երանութեան՝ անդ արձանացեալ» (**Գրիգոր Նարեկացի**, Մատենա ողբերգություն, Երևան, 1985, էջ 333):

¹²⁴ Այս խաչքարը նույնպես ջարդվել է աղբրեջանցիների կողմից, որի հետևանքով պոկվել է և արձանագրության թվակիր հատվածը: Պեղումների ժամանակ գտնվեցին խաչքարի ջարդոտված մի քանի բեկորներ, այդ թվում և կետերի մեջ ամրացված: ՈՒՄԳ: տառերի հատվածներ պարունակող մի բեկոր: Հրատ. **Կարապետյան Ս.**, էջ 28, ուր բացակայում է թվականը, իսկ [Աշո]տայ-ի փոխարեն ասկա է ...ոայ:

Նկ. 79 Հարբի թոռ Վասակի արձանագրությունը, 1194 թ.:

Ինչպես տեսանք, Հարբը և Աշոտը հիշվում են նաև գլխավոր եկեղեցու արձանագրություններից մեկում:

6. Արձանագրությունը խաչքարի ներքնամասում է, յոթ տող (նկ. 80), այժմ գտնվում է վանք տանող ճանապարհի աջ եզրին, նրանից մոտ 50 մ հարավ-արևելք:

«Ես Ջալար կալն/զնեցի զխաչս փրկուլ/ թիւն հոգոյ աղբուր իմոյ Խափլա¹²⁵: Որքէ/ րկիրպագէք՝ յաղաթս յիշեցէք: Թիւն :ՈՒՅԳ: (1194)»:¹²⁶

7. Խաչքար, դրված է գլխավոր եկեղեցուն հարավից կից մատուռի հարավային պատում արտաբուստ, բացվել է պեղումների հետևանքով: Արձանագրությունը փորագրված է խաչքարի ներքնամասում, հորինվածքից ներքև (նկ. 81), չորս տող:

«Ես՝ Մամիկ կագինեցի զխաչ/ /ս փրկութիւն հոգո մոր իմո Շ/ահինդխտո: ¹²⁷ Որքերկ[ը]րպագււմ/յք՝ յաղութս լ/իշեցէք»:¹²⁸

Մամիկ անձնանունն առաջացել է հայերեն *մամ*՝ մայր կամ տատ բառի փաղաքշական ձևից¹²⁹: Նույն հիմքից են առաջացել նաև Մամա, Մամախարթուն, Մամբան իգական անձնանունները,¹³⁰ որոնք Արցախի այս ժամանակի արձանագրություններում բավականին հաճախ են հանդիպում: Եթե նկատի ունենանք, որ տղամարդկանց անձնանունների մեջ էլ հանդիպեցինք խիզախ և վագր (Հարբ, Խափլան) բնութագրումներին, կարող ենք ենթադրել, որ տղամարդու ռազմական և կնոջ մայրական կերպարն արտահայտվում էր ոչ միայն իրական կենսընթացում, այլ նաև քանդակում և անձնանվանական համակարգում:

¹²⁵ Անձնանունն ըստ Հ. Անադյանի ծագում է բարբերեն *գարթոն* (ժղ. խափլան)՝ վագր բառից (Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Բ, էջ 504):


¹²⁶ Հրատ. Կարապետյան Ս., Նշվ. աշխ., էջ. 28:

¹²⁷ Անձնանվան ճիշտ ձևն է Շահինդոխտ (զուցն և Շահանդոխտ, որը պարսկերեն նշանակում է թագավորների դուստր, Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Գ, էջ 106), սեռականը կլինի Շահինդխտոյ կամ Շահինդոխտոյ. հավանական է՝ գրիչը շփոթել է *խ* և *ո(ւ)* տառերի տեղերը:


¹²⁸ Հրատարակվում է առաջին անգամ:

¹²⁹ Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Գ., էջ 184:


¹³⁰ Նույն տեղում, էջ 176:



Նկ. 80 Ջալարի արձանագրությունը, 1194 թ.:



Նկ. 81 Մամիկի արձանագրությունը:



8. Խաչքար, գտնվել է հյուսիսային մատուռում՝ աղբրեջանցիների կողմից լրիվ ջարդուփշուր արված, աչքի է ընկնում հեծյալ ռազմիկի պատկերաբանդակով: Արձանագրությունը փորագրված է կենտրոնական խաչից ներքև՝ արմավագարդի և պատկերաբանդակի հատվածներում, ութ տող (նկ. 82):

«Նա Աբաս/որդի Ն/ւմ/նա/-¹³¹ ...ունայ կանգ-նեցի զխ/աչս հոգոյ իմոյ [իմ] լոր/ք երկիր-պա/գ/անայք՝ յաղա/թս յիշեցէք»:¹³²

9. Խաչքար, գտնվել է զանգակատան պեղումների ժամանակ, կրում է կրաշաղախի հետքեր, հավանական է՝ օգտագործվել է հենց զանգակատան պատում, պատկանում է այն խաչքարերի թվին, որոնք ստեղծել է կան Դավիթ վարդապետը, կան նրա աշխատողներից մեկը: Արձանագրության թվականը գրված է սայի վերին երկու անկյուններում, մնացած տեքստը՝ հորինվածքից ներքև (նկ. 83), հինգ տող:

«Թ. :Ձի:/ (1271): Նա Մխիթար, եղբայ/ր իմ՝ Սասրէ, կա/նկեցաք զխա/չս մար մեր ևս հար»:¹³³

Ըստ Հ. Աճառյանի՝ Սասրէ անձնանվան արմատը պարսկերեն *savzi*՝ չամիչ բառն է:¹³⁴ Մխիթար, Չամիչ, Շաքար, Դեղ, Լույս և նման բազմաթիվ այլ անձնանունների օգտագործումը հայ միջնադարում պայմանավորված էր այն հիմնարար պատկերացումով, համաձայն որի անունը ոչ միայն առանձնացնում էր կրողին մյուսներից, այլև նրան տալիս էր որոշակի բնութագիր և կերպավորում: Նախարարական տոհմերում անվան կրկնումը ի գորու էր ապահովել իշխանության օրինական փոխանցումը (այն, որ Խորենացին անվանում է «ըստ հույսի», բառանը պապի անունը դնելով՝ հույս էին տաճում, որ նա պիտի կրկնի պապի ճակատագիրը)¹³⁵: Ծանր ժամանակներում նման անունները պիտի համանման կերպավորում և գործունեություն ապահովեին այն կրողների համար, անվամբ կարելի էր կանխել անգամ մահը:¹³⁶

¹³¹ Նաև-նաևնա (ըստ Հ. Աճառյանի ծագում է լատիներեն *nomnus*՝ հայրիկ, *nonna*՝ մայրիկ հիմքերից, որոնց հետ հետագայում նույնացան հայերեն *նաև*՝ տատ, թորքերեն *nene*՝ մայր բառերը) հիմքով կազմված հայտնի անձնանունների մեջ, որոնք բացառապես իգական են, ցավոք, մեր անվան հետ նույնացող անձնանուն չկա (տես Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Գ, էջ 18-21), ուստի անձնանվան ամբողջական ձևը մնում է անորոշ:

¹³² Հրատարակվում է առաջին անգամ:

¹³³ Հրատարակվում է առաջին անգամ:

¹³⁴ Աճառյան Հ., Նշվ. աշխ., հ. Գ, էջ 467:

¹³⁵ Մովսիս Խորենացու Պարմոթիան Հայոց, էջ 69, 187:

¹³⁶ Մանրամասն տես Պետրոսյան Հ., Ողջորդ և մտածները. մտեր և անմահությունը հայ ավանդական աշխարհընկալման համակարգում - *Գիտություն և րեկոնստրուկցիա*, 2003, թիվ 6-7, էջ 54-60:

Նկ. 82 Աբասի արձանագրությունը:



Նկ. 83 Մխիթարի արձանագրությունը, 1271 թ.:

Նկ. 84 Աղբյուրի արձանագրությունը:

Նկ. 85 Գրիգորի արձանագրությունը:

Նկ. 86 Արձանագրությունը խաչքարի կողմին, 1209 թ.:

Նկ. 87 Խաչքարային արձանագրություն, 1197 թ.:

10. Խաչքար, քայքայված, գտնվել է զանգակատան պեղումների ժամանակ, արձանագրությունը՝ հարավային նեղ կողմին, ութ տող (նկ. 84):
 «Ես՝ Աղբ/ա/յր, կա/ն/գնեցի/ լ զ/խաչս Վիր/կուրթի/ւն] հոգ/ոյ] հա/... ոյ՛ք՞...»:¹³⁷

11. Խաչքար, գտնվել է համալիրից ներքև, արևմտյան թեք լանջին, արձանագրությունը՝ բիվի հատվածում (նկ. 85), երկու տող:
 «[զՀ]ամ_ա_ն եւ [Մ]ամբան յիշեցէք ի Քա Գրիգ/որ]»:¹³⁸


Ինչպես տեսանք, 13-րդ դ 60-ական թվականներից ի վեր Վերին Խաչենի իշխանն էր Հասան Բ-ն, որի կինն էր Մամբանը և որդին՝ Գրիգորը: Եթե ընդունելի է Հասան վերականգնումը, ապա հավանական է, որ խաչքարը կանգնեցրել է հենց այս Գրիգորը՝ 13-րդ դարի վերջին:

12. Խաչքար, քայքայված, գտնվել է զանգակատան պեղումների ժամանակ, արձանագրությունը հարավային նեղ կողմին (նկ. 86), տողերի թիվը հնարավոր չէ որոշել:

«:ՈՇԸ: (1209) թ՛վ/ականիս/ եւ պ/ա/լ_ոն] .../ուլաք կանգն/եց/ի զ/խ/աչս] ...»:¹³⁹




0 10սմ



10 0 10սմ

¹³⁷ Հրատարակվում է առաջին անգամ:
¹³⁸ Հրատ. Կարապետյան Ս., Նշվ. աշխ., էջ, 28, որ [զՀ]ամ_ա_նը փոխարեն առկա է ...ասն:
¹³⁹ Հրատարակվում է առաջին անգամ:



13. Խաչքար, գտնվել է համալիրից ներքև, արևմտյան թեք լանջին, արձանագրությունը փորագրված է հորինվածքից ազատ տեղերում (նկ. 87).

«Ես Արիս...¹⁴⁰ [զխաչս].../ որք/ երկիր-պա/գան/էք յաղաթս...: ԹՎ. :ՈՒՏԶ: (1197)»:¹⁴¹

14. Խաչքար, քայքայված, գտնվել է գլխավոր եկեղեցուն հարավից կից մատուռի պեղումների ժամանակ: Արձանագրության թվականը գրված է կենտրոնական խաչի հորիզոնական թևերից ներքև, մնացած տեքստը՝ կողին, վեց տող (նկ. 88):

«ԹՎ. :ՈՒՄԱ: (1212)/...կ/...դր/...կո/...ծ/...ատ/... սար/...ակ/...ն»:¹⁴²

15. Խաչքար, դրված է գլխավոր եկեղեցուն հարավից կից մատուռի հարավային պատում ներքուստ: Արձանագրությունը փորագրված է հորինվածքից ազատ հատվածներում, տառերի զգալի մասը չի տարբերակվում, տողերի քանակը հնարավոր չէ որոշել (նկ. 89):

«Աճ [ող]որմի/... Գա/ե/ ... եւ/.../...թվ ին :Ո... : ... ետա...»:¹⁴³

16. Խաչքարի ներքնամաս, գտնվել է հյուսիսային մատուռին հարավից կից տապանաբակի մաքրման ժամանակ, արձանագրությունը երեք տող (նկ. 90):

«...արի/... յիշատ/ակին»:¹⁴⁴

17. Մկրտության ավագան, գտնվել է գլխավոր եկեղեցու պեղումների ժամանակ, աղոթասրահի հյուսիսարևմտյան անկյունում, շաղախով ամրացված, բեկորային վիճակում: Արձանագրությունը փորագրված է լայն շուրթերից երեքի վրա՝ երկու հորիզոնական և մեկ ուղղաձիգ տողերով (նկ. 91):

«Աճ ողո՛րմեա՛. գԳԻաիթ յիշէ գվար յիլապետ»: :ՉԻԲ: (1273)»:¹⁴⁵

18. Խաչասալ, գտնվել է գլխավոր եկեղեցուն հարավից կից մատուռի պեղումների ժամանակ, վերջինիս հարավային պատի մոտ, դրսից: Պահպանվել է ներքին կեսը և արձանագրության վերջնամասը, երեք տող (նկ. 92).

Նկ. 88 Խաչքարային արձանագրություն, 1212 թ.:

Նկ. 89 Խաչքարային արձանագրություն:

Նկ. 90 Խաչքարային արձանագրություն:

¹⁴⁰ Առաջին տողի տառերն այնքան մաշված են, որ գրչագրել հնարավոր չէրավ:

¹⁴¹ Հրատարակվում է առաջին անգամ:

¹⁴² Հրատարակվում է առաջին անգամ:


¹⁴³ Հրատարակվում է առաջին անգամ:

¹⁴⁴ Հրատարակվում է առաջին անգամ:

¹⁴⁵ Հրատարակվում է առաջին անգամ: Ընթերցանության տրամաբանական հայտնողականությունն ապահովելու համար կարելի կարդալ և «Աճ ողո՛րմեա՛ իւ յիշէ գԳԻաիթ գվար յիլապետ»: :ՉԻԲ: (1273)»:



4 0 4սմ



1 0 1սմ


«Թիլի :2ԻԵ:(1276)... յաղարթս Լյիլեցե-
ք»:¹⁴⁶

Միանգամայն հնարավոր է, որ սա էլ Դավիթ վարդապետի ձեռնարկումներից է, այդ դեպքում բացառված չէ, որ ամբողջական տեքստում եղել է և նրա անունը:

19. Հարթ տապանաբար, հանվել է վանքին կից հյուսիսային ձորից, գտնվում էր ճանապարհի ձախ եզրին, տեղափոխել ենք հյուսիսային մատուռին կից արևմտյան լանջ, այլ կործողների մոտ: Արձանագրությունը փորագրված է սալի միջնամասում՝ խոշոր կանոնավոր տառերով, հինգ տող (նկ. 93).

«Այս է հանգի/սա տր Ստեփ/անոսի Աղու/անից կաթող/իկոսի»:¹⁴⁷

Ինչպես ապացուցված է պատմագիտական մանրամասն քննությամբ՝ Ուտիքը, ապա և Արցախը 428-451թթ. ընթացքում Սասանյան Պարսկաստանի կողմից անջատվեցին Հայաստանից և միացվեցին Աղվանից թագավորությանն (ապա՝ մարզպանությանն) ու եկեղեցուն,¹⁴⁸ որոնք մինչ այդ հստակորեն տեղակայված



10 0 10սմ

Նկ. 91 Դավիթ վարդապետի ձեռնարկությունը անբողոքյան ախազանի վրա, 1273 թ.:

Նկ. 92 Արձանագրություն իտալասալի վրա, 1276 թ.:

Նկ. 93 Աղվանից կաթողիկոս Կեր Սրեփանոսի տապանագիրը:

¹⁴⁶ Հրատարակվում է առաջին անգամ:
¹⁴⁷ Հրատ. Ս. Կարապետյան, *Նշվ. աշխ.*, էջ 28:
¹⁴⁸ Խնդրի մանրամասն քննությունը համապատասխան

էին Քրոնի ձախսահնայակից մինչև Մեծ Կովկասի լեռնափեղեղերն ընկած տարածքներում: Հետագայում (առնվազն 7-րդ դարի վերջերից ի վեր) թեև այդ եկեղեցու գործունեության հիմնական բնագավառը Քրոնի աջափնյակն էր և հոտն էլ՝ տեղի հայ բնակչությունը, եկեղեցին ընդհուպ մինչև 19-րդ դարը շարունակում էր պահպանել «Աղվանից» անունը: Այնպես որ, տվյալ դեպքում, «Աղվանից»-ի տակ պետք է հասկանալ հայկական Արցախ և Ուտիք նահանգներն ու դրանց հարակից տարածքները, ինչպես նաև տեղի հայ բնակչությունը ներառող եկեղեցին: 12-14-րդ դարերում էլ Արցախի և Ուտիքի համարյա միատարր հայ բնակչություն ունենալու մասին հազիվ թե հնարավոր է կասկածել: Դա նախ և առաջ վերաբերում է իշխանական տներին, որոնց էթնիկ ինքնությունը մի անգամ չէ, որ հիշում են աղբյուրները: Բերենք միայն մի քանի օրինակ: Ինչպես տեսանք առաջին գլխում, մոնղոլների արշավանքների ամենահայտնի հայ պատմիչներից մեկը, որն ապրում էր Ալանայում, այսինքն՝ ծարեցիներին պատկանող ամրոցում, և որի պատմության ողջ թատերաբեմը Արցախ-Ուտիքն է, հատուկ շեշտում է, որ «պատճառ յաղթութեանն (մոնղոլների – Հ. Պ.) էին Հայոց եւ Վրաց իշխանքն»¹⁴⁹ *իշխանք Հայոցի* տակ նկատի ունենալով և նկարագրելով հենց Արցախ-Ուտիքի իշխանական տները: Նույն հընթացս դիտողությունն անում է և Կիրակոս Գանձակեցին,

որը նույն մոնղոլական արշավանքների հետ կապված մանրամասնորեն նկարագրելով Արցախի ավագ իշխան Հասան Ջալալի գործունեությունը, գրում է. «մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախոյ Հասան, գոր Ջալալն կոչէին զգումանօք, այր աստուածապաշտ և երկիրաւոյ, և պարկեշտ հայ ազգաւ»:¹⁵⁰ Ի վերջո մեջբերենք և Վերին Խաչենի հայտնի իշխան Գրիգոր Բ-ի որդի Սարգսի հիշատակարանի այն հատվածը, ուր որդին բնորոշում է հորը. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ունն, մեծ և երևելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի գարմէ դիցագանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց, Գրիգոր իշխան Հայոց...»:¹⁵¹ Հենց այս և նման այլ բազմաթիվ հայ իշխանական տներն էին մաքառում հանուն հայրենի երկրի անկախության, ու նրանց ուժին էին ապավինում Աղվանից կոչվող հայ եկեղեցու սպասավորները:

Քննարկվող ժամանակաշրջանում հայտնի են երկու Ստեփանոս կաթողիկոսներ, երկուսն էլ՝ սերտորեն կապված Հյուսիսային Արցախի և Խաչենի հետ: Նրանցից առաջինը մահացել է 1195թ. «ի Հերզ գաւառի»,¹⁵² որը 1417թ. մի հիշատակարանի համաձայն ներառում էր Պարտավն ու մերձակայքը («Սայ էր բնական ի Հերզա գաւառէ, ի նահանգէ Առանա, ի քաղաքէ Բարտաա...»)¹⁵³, այսինքն՝ Վերին Խաչենից դուրս: Երկրորդ Ստեփանոսի (1263-1323 թթ.) մահվան վայրի մասին կոնկրետ տեղեկություններ չկան:¹⁵⁴ Հավանա-

ակրնաղբյուրների հղումով տես **Ուլտարյան Բ.**, Հյուսիսարևելյան Հայաստանի նախամարզայանական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջ - ԲԵՀ, 1975, թիվ 2, էջ 149-164: **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի բազմափրության հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ. - ԲԵՀ, 1976, թիվ 2, էջ 77-95: **Акопян А. А.** *Албания-Алуанк в греко-латинских и армянских источниках*, Ереван, 1987, с. 109-142. **Новосельцев А. П.** *К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в Античный период - К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении*, Ереван, 1991, с. 7-15. **Арутюнян Б. А.** *Административно-политическое состояние Северо-восточных областей царства Великой Армении в 387-451 гг. - К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении*, с. 16-36.

¹⁴⁹ **Գրիգոր Ալանեցի**, *Պատմություն ազգին նկարողաց*, էջ 20:

¹⁵⁰ **Գանձակեցի**, էջ 358:

¹⁵¹ *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 84:

¹⁵² Կիրակոս Գանձակեցին մանրամասն պատմում է այս կաթողիկոսի կյանքը, որը հայաձվելով Գանձակի մասնաղակաճանրից՝ Չարեքից տեղափոխվում է Խաչեն, սպա մինչև մահը քափառում զանազան վայրերում (**Գանձակեցի**, էջ 178-181):

¹⁵³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ /Կազմ. **Լ. Ս. Խաչիկյան**, Երևան, Հ. Ա., 1955, էջ 205:

¹⁵⁴ Հայտնի է, որ 13-րդ դ. վերջերին այս Ստեփանոս ապրում էր Ստեփանոս Օրբելյանի մոտ: Պատմիչը հայտնում է, որ շատերը, նեղված իրենց երկրների անապատությունից, գալիս էին իր եղբայր Էլիկումի մոտ, ինչպես որ վարվել էր և Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը (**Օրբելյան**, էջ 431): Մեզ կոնկրետ ոչինչ հայտնի չէ 13-րդ դարի վերջում Վերին Խաչենում եղած վատ իրավիճակի մասին: Միայն նկատենք, որ Վերին Խաչենում այդ ժամանակ իշխում էր Գրիգոր Բ-ն, որի կին Ասփան Էլիկում և Ստեփանոս Օրբելյանների յոթրբ թույրն էր:




կան է, որ մեր տապանաբարը վերաբերում է այս վերջինին: Ուշ թվագրության օգտին են խոսում և կցագրերը, որոնք Արցախի 12-րդ դ. արձանագրություններում համարյա չեն հանդիպում:¹⁵⁵

Հանդաբերդի պեղումների անսպասելի արդյունքներից մեկն էլ արձանագրակիր կղմինդրների գյուտերն են: Դրանք թվով տասն են, ցավոք՝ բոլորն էլ բեկորային:

Երկու դեպքում կարելի է վստահորեն ասել, որ արձանագրությունն ունեցել է թվական: Փորակավոր մի բեկորի վրա (նկ. 94ա, բ, 95) պահպանվել է «ԹՎ ԻՆ...Դ...» հատվածը: Մի հարթ բեկորի վրա ընթեռնելի են պատվի նշանի տակ առնված «Չ...» տառերը (նկ. 94է), այսինքն՝ նորից գործ ունենք թվականի հետ: Քանի որ միավորը չի պահպանվել, մնում է ենթադրել, որ գրությունը փորագրվել է 1271-1280թթ. արանքում, ժամանակ, երբ վանքում Դավիթ վարդապետն ակտիվ շինարարական գործունեություն էր ծավալել:

Հարթ կղմինդրի երկու բեկորներ կրում են «Ա», «Թար...» հատվածները (նկ. 94դ, թ). ենթադրելի է, որ դրանք անձնանունների մասեր են:

Մնացած դեպքերում արձանագրության բնույթի մասին որևէ բան դժվար է ասել (օրինակ՝ «Խրո», «աշի ...ղաճ...», նկ. 94զ, ը): Կան բեկորներ, որոնց վրա տառերի ինչ լինելը հնարավոր չէ որոշել (նկ. 94ե): Սակայն անկախ տեքստերի նման թեականությունից, կարող ենք հավաստել, որ նման արձանագրությունները վկայում են գրավոր հայերենի գուտ կենցաղային մակարդակով տարածվածության մասին: Դրանք փորագրվել են թաց կավի վրա, այսինքն՝ կղմինդրների պատրաստման պրոցեսում: Անվարժ ու արագորեն փորագրված տառերը վկայում են, որ փորագրողները եղել են ոչ թե մասնագետ գրիչներ, այլ



շարքային մարդիկ, որոնք ցանկացել են հոգևոր կառույցների վրա թողնել իրենց անվան հիշատակությունները, հայտնել ինչ-ինչ բարեգործությունների մասին: Այսինքն՝ հիմքում նորից հիշատակի միջնադարյան-քրիստոնեական ընկալումն է:

Հարկ է նկատել, որ Հանդաբերդի կղմինդրների արձանագրությունները եզակի դրսևորում չեն հայ մշակույթում: Արձանագրակիր կղմինդրների ամենամեծ հավաքածուն հայտնի է Դվինի կաթողիկե եկեղեցու պեղումներից: Ինչպես եզրակացնում է Կ. Դաֆադարյանը, դրանք «մեծ մասամբ փորքիկ հիշատակագրեր են և գրչախաղեր վանքի

Նկ. 94
Արձանագրությունների
խեցեղեղների վրա:

Նկ. 95
Արձանագրություն
կղմինդրի վրա:

¹⁵⁵ Խնդրի շուրջ արտահայտված կարծիքները տես Կարապետյան Ս., Նշվ. աշխ., էջ 29: Բալայան Մ., Հայոց Արևելից կղմինդր կկեղեցին 6-15-րդ դարերում, Երևան, 2003, էջ 105-106, 116:

անհայտ միաբանների անունից գրված» և վերաբերում են 7-րդ դարին:¹⁵⁶ Արձանագրակիր կղմինդրների մի այլ հավաքածու էլ, բայց արդեն 11-12-րդ դարերին վերաբերող, երեան է նկել Աղխուռի (Սյունիք) հայտնի հուշակառույցին կից եկեղեցու 1991թ. պեղումների ժամանակ: Արձանագրությունները դարձյալ հիշատակային բնույթ ունեն:¹⁵⁷ Փաստորեն Հանդաբերդի հավաքածուն վկայում է, որ այս ավանդույթը կենսունակ էր նաև 13-14-րդ դարերում:

Նշենք և հասարակ մի թասի մասին, որի նատուկին դրսից՝ խնցին դեռ թաց վիճակում փոքագրվել է «խ» տառը (նկ. 94Ժ):¹⁵⁸

Քոյոր այս գրություններն աչքի են ընկնում իրենց տեխնիկական անկատարությամբ, երբեմն թաց կավի վրա հապշտապ արված արագագրի տպավորություն են թողնում: Ավելի քան անհ-

հայտ է, որ դրանք ոչ թե եկեղեցական գործիչների կամ իշխանների, այլ հասարակ շինականների կամ արհեստավորների հիշատակագրեր են: Հայերեն գրի նման ոչ պաշտոնական, կենցաղային օգտագործումն, անշուշտ, հայ ինքնության ամենամեծ հավաստումներից մեկն է:

Հանդաբերդի արձանագրությունները ղժվար է համարել հայ մշակույթի և գրչության այդ կարևոր բնագավառի առաջնակարգ դրսևորում: Սակայն, ինչպես տեսնում ենք, դրանք ներկայացնում են երկրամասի հայեցի կյանքի այնպիսի մանրամասներ, որոնք ոչ միայն վկայված չեն ժամանակի պատմական երկերում, այլև հանգամանակից քննության դեպքում կարող են դառնալ այն աղյուսիկները, որոնցով միս և արյուն են ստանում պատմությունն ու մշակույթը:

¹⁵⁶ Ղաֆադարյան Կ., *Կվին բարսքր և նրա պեղումները*, Երևան, 1952, էջ 246-248, նկ. 230, 231:

¹⁵⁷ Պետրոսյան Հ., Աղխուռի 1991 թ. պեղումների հիմնական արդյունքները - *Հանրապետական հնագիտական նորաշրջան. Ձեկուցումների հիմնադրույթնեկ*, Երևան, 1994, էջ 51-53: Փորակավոր մի կղմինդրի վրա փորագրված է «ես՝ Խուսրովիդ/ախո...», երկրորդի վրա՝ «...րս յաղաթս [չ]իշկե/լք», երրորդի վրա՝ «գայս ես Եվա/...ս ես Սնակա/տ/)... Արքա .../այ իս/...ե» (պեղումները կատարվել են մեր կողմից, արձանագրությունները հրատարակվում են առաջին անգամ):


¹⁵⁸ Այս մասին ավելի մանրամասն տես վեցերորդ գլխի խնցեղեմին նվիրված հատվածը:



ա



բ



Նկ. 96 Խուշի կրթատ և
զանգակ:

Գլուխ 2

Յնագիտական գտածոները. նկարագրությունը, տիպաբանությունը, ժամանակագրությունը, զուգահեռները, գործառույթը

Հայտնի է, որ միջնադարյան վանքերը վարում էին սեփական ինքնաբավ տնտեսություն, այսինքն՝ իրենք էին հոգում ամօրյա կենսընթացի հետ կապված նյութական կարիքները¹⁵⁹: Այսուհանդերձ, պետք է նաև նկատի ունենալ, որ ի տարբերություն բնակատեղիների, վանքային համալիրներում կենցաղի հետ կապված հնագիտական իրերի գյուտերը եզակի են լինում: Սա կարելի է բացատրել մի կողմից վանքերի ամօրյա համեստ կենցաղով, մյուս կողմից էլ այն հանգամանքով, որ լքվելուց հետո էլ դրանք մնում էին ուխտավորների և ուղղակի հետաքրքրասերների այցելավայր, ինչը խանգարում էր մշակութային հզոր շերտի առաջացմանը: Հանդարերդի վանքն այս առումով բացառություն չէ. պեղումներով հայտնաբերված՝ մետաղից, կավից, ապակուց և քարից պատրաստված գտածոները միայն մասնակի պատկերացում կարող են տալ վանական տնտեսության և կենցաղի մասին:

Մետաղյա իրեր: Պեղումներից հայտնաբերված մետաղյա իրերի քանակը խիստ սահմանափակ է: Ըստ գործառույթի՝ դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝ աշխատանքային գործիքներ, կենցաղային սարքեր և իրեր, եկեղեցական իրեր:

Աշխատանքային գործիքների և դրանց առանձին մասերի շարքը կարելի է դասել պայտերը (նկ. 97, 99բ), անուրները, կացինն ու հատոցը (նկ. 98):


Աշխատանքային գործիքների շարքում կարելի է առանձնացնել մի քանի իրեր, որոնք, հնարավոր է, եկեղեցական կառույցների միջավայրում հայտնվել են պատահաբար, գուցե և հետագայում: Խոսքը վերաբերում է նախ և առաջ երկաթյա կացնին (նկ. 98ա, 99ա)՝ պատրաստած դարբնոցային եղանակով, մի տեխնոլոգիա, որը միջնադարում երկաթյա իրերի պատրաստման հիմնական եղանակն էր: Վարպետը նախ երկաթյա հումք-ձողը հնոցում շիկացնելով և փափկացնելով՝ ծալել է



Նկ. 97 Պայտեր (ա, բ, գ) և գավ (դ):

Նկ. 98 Կացին (ա), քախիսար (բ), անուր (գ):

¹⁵⁹ Պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութը լաբորատոր ուսումնասիրությունից և վերականգնումից հետո հանձնվել է Արցախի պատմության պետական թանգարան: Մետաղյա իրերը մաքրել է Էլենա Աթոյանը, խեղցեներ վերականգնել է Վարդան Վարդանյանը:



քառակյուն մի այլ ձող-հենքի շուրջ և ստացել ուղղանկյուն կոթառը: Ապա արդեն ծավված ձողի երկու մասերն իրար միացնելով՝ ստացել է սայրը (կոթառի ներսում հստակորեն դիտելի է երկու մասերի միացման գիծը):¹⁶⁰ Կոթառի և սայրի կանոնավորությունը, բավականին ողորկ մակերեսը, արտաքնապես միատարր զանգվածը վկայում են որակյալ հումքի և պատրաստման բարձր վարպետության մասին: Դատելով երկար, փոքր-ինչ կախ սայրից, կացինը նախատեսված է եղել ծա-

ռահատման համար, այսինքն՝ եղել է փայտահատի կացին, ինչն անտառաչառ այս շրջանում պիտի որ լայն տարածում գտած գործիքների թվին պատկաներ:

Եւիստ ուշագրավ են կացնի կոթառի երկու եզրերին և լեզվակի երկու երեսների վրա առկա աստղաձև նշանները, որոնք դրվել են որոշակի համաչափությամբ (սիմետրիայով). չորսական՝ կոթառի վերին եզրի երկու կողմերում և երեքական շարքերով՝ լեզվակի երկու երեսների վրա: Տպավորությունն այնպիսին է, թե վարպետը երկաթյա մասերն իրար ամրացնելու համար զօղումից բացի (որը դարբնոցային ավանդական տեխնոլոգիայում իրականացվում էր երկաթի կտորները համատեղ տաքացնել-ծեծելու միջոցով), օգտագործել է նաև զամեղու եղանակը. նա արդեն զօղած երկաթյա շերտերի մեջ միջանցիկ անցքեր է բացել, անցքերի մեջ զամեր մտցրել և հատուկ դրոշմիչով զամերի եզրերն աստղաձև լայնացնելով էլ ավելի ամրացրել արդեն զօղված մասերը: Սա, անշուշտ, միայն նախնական ենթադրություն է՝ ենթակա հստակեցման մետաղագրական անալիզի դեպքում:

Պեղումները տվել են նաև ցաքատի մի օրինակ (նկ. 98բ, ավելի ճիշտ՝ միայն երկաթյա կեռփիք սայրը, որն իր երկար կոթառով ժամանակին ամրացված է եղել փայտե պոչին)՝ պատրաստված նորից դարբնոցային պայմաններում՝ սառը մշակման եղանակով (շիկացում, մխում, ծեծում, կտրում): Այն շատ նման է Դվինից և Գառնիից գտնված ցաքատներին¹⁶¹ և նույնական է Արցախում այսօր էլ օգտագործվող նույնանուն օրինակների

¹⁶⁰ Կացինների պատրաստման նման տեխնոլոգիայի մանրամասն նկարագրությունը ռուսական միջնադարյան գտածոների օրինակով տես Կոլչին Բ. Ա. Черная металлургия и металлообработка в Древней Руси (Материалы и исследования по археологии СССР, № 32), М., 1953, с. 102-108.

¹⁶¹ Քալանթարյան Ա., Դվինի նյութական մշակույթը, էջ 17, աղ. 16/3: Լաֆարդյան Կ., Քալանթարյան Ա., Դվին 2. Կվին բաղաբը և նրա պեղումները (1973-1980), Երևան, 2002, աղ. 57/3: Պետրոսյան Շ., Գառնիի 9-14-րդ դարերում, էջ 39, աղ. 15/2: Հայկական ցաքատներին տեսքով և գործառույթով համապատասխանում են վրացական ժողովները, որոնց սայրերի ստրուգական օրինակներ են գտնվել մի շարք միջնադարյան հուշարձաններից, տես Չիրաշվիլի Լ. Ա., Չվերի Կապույտի պարսև-հնագիտական ուսումնասիրություն, Թբիլիսի, 1975, էջ 102-103 (վրացերեն): Արտաևա Վ. Ե. Железообрабатывающее ремесло древней Грузии, Тбилиси, 1976, с. 68-72, табл. 30.

Նկ. 99 Կացին (ա), ձիու պայր (բ), խաչի կոթառ (գ), զանգակ (դ):

հետ: Նման թեթև գործիքները, ինչպես վկայում է 14-րդ դարի մի մանրանկար,¹⁶² միջին դարերում օգտագործվում էր զանազան այգեգործական աշխատանքների ժամանակ: Անտառաշատ Խաչենի դեպքում, ինչպես և ցաքատ-ցախհատ անունն է հուշում, այն նախ և առաջ օգտագործվել է մանր ծառեր, ճյուղեր ու թփեր հատելու համար: Նշենք, որ այսօր էլ այս գործիքն Արցախում լայնորեն տարածված է և օգտագործվում է նույն նպատակով: Երկաթե կացնի և ցաքատի թվագրությունը որոշակի բարդությունների հետ է կապված: Նկատի ունենալով գերազանց պահպանվածությունը, կոռոզիայի համարյա բացակայությունը, չի բացառվում, որ դրանք այստեղ կարող էին թողնվել կամ կորսվել, երբ վանքն արդեն լքված էր՝ այստեղ հանգստանալու, պատսպարվելու և նման այլ պարագաներում:

Ընդհանրապես սպասելի էր, որ պեղումները երևան կրերեն փայտամշակության հետ կապված բազմաքանակ իրեր, քանի որ Ծար գավառը հայտնի էր իր անտառներով և փայտամշակության ու փայտի ճարտարապետության ավանդույթներով: 11-րդ դարի հայտնի քաղաքական գործիչ, զորավար ու մտավորական Գրիգոր Մագիստրոսն իր փեսա Մամիկոնյան Թորոնիկ իշխանին գրած նամակում նկարագրում է Ծար ավանի սուրբ Հակոբ վկայարանի փայտյա ճարտարապետությունը. «Ասեմ քեզ ի մերում սեփականին իսկ յԱղուանեանն աշխարհի առանն կոչեցեալ Ծար,¹⁶³ և ահա ոչ ձեքաբանեմ քեզ, մակարուս-



եալ վաղնջուց գեղեցկուղչն գի, յորմէ սիւնս ոչ սակաս հզօրս և ստուարս ի կոչարանում անդ տեսեալ մեր և գերանք գերակատարք և երկայնածիգք, որ է վկայարան սրբոյն Յակոբայ. ամենայն կաւիք տաճարին գերակա տախտակք և խոյակք և խարիսխք և թակաղակք, և զգրոմս և գտեանս հանդերձ բարատրօք և ներքոյ գատակս կազմեալ ի միոջէ ծառէ յայնմանէն գիոյն գոլ ասէին. գնա և զայլ ոմանս ի նոյն աշխարհին ընդարձակագոյնք սրաւիք և միջոցք այնմ տաճարի տեսեալ մեր, որ գրէթէ այսպիսի ոչ այլ ուրէք, բայց միայն ի թագաւորեալ քաղաքին»:¹⁶⁴ Այսինքն, Ծարում գտնվող սուրբ Հակոբ վկայարանի ողջ կառույցը (բացառյալ, թերևս, պատերը – Հ. Պ.)՝ հատակը, խարիսխները, սյուները, խոյակները, կամարները, ծածկագերանները, դռները, բարավորները պատրաստված էին մի հսկայական գիհի ծառի փայտանյութով: Մագիստրոսն ինքն անձամբ տեսել է այդ ամենը և հավաստում է, որ նրա նմանը որևէ այլ տեղ չկա, բայց միայն «ի թագաւորեալ քաղաքին», այսինքն՝ Կոստանդնուպոլսում:¹⁶⁵ Հարկ է


¹⁶² Գևորգյան Ա., *Արևիստրոնն ու կենցաղը հայկական մանրանկարներում*, Երևան, 1978, աղ. 3/8:

¹⁶³ «Մերում սեփականին» արտահայտությունը փաստում է, որ Գրիգոր Մագիստրոսը կամ Պաղատիկոնիների տոհմն այս կողմերում սեփական կալվածքներ ուներ: Մրա օգտին ակնարկ կա և Մագիստրոսի մի այլ թղթում ուղղված Գագիկ Բ Բագրատունի (1042-1045թթ.) արքային (Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը*, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 209-211): Նման ենթադրության հիմք է տալիս և Բջնիում կառուցած եկեղեցում Մագիստրոսի թողած արձանագրությունը, ուր նա նորաստեղծ Բջնիի թեմի տարածք է սահմանում «ի Ծար գետոյ մինչև գետն Ախուրեան»: Այս խնդիրների բնությունը տես Մխիթարյան Մ. Մ., Մագիստրոսյան սկզբնաղբյուրները Աղվանք աշխարհի և Ծար (Քելբաջար) գավառի մասին - Բանբեր Երևանի համալսարանի, 1996, թիվ. 3, էջ 154-158:

¹⁶⁴ Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը*, էջ 221:

¹⁶⁵ Հմմտ. Նոր բարձիրք հայկագեան լիգոի, Հ. Ա., Վենետիկ, 1834, էջ 790:

Նկ. 100 Ճարմանդ (ա), գամ (բ), հրահանի երկաթ (գ), կողպեքի գապանակ (դ), դանակ (ե):



նկատի ունենալ, որ միջին դարերում, հատկապես անտառաշատ վայրերում, լայնորեն տարածված էր փայտյա բացօթյա խաչերի պատրաստումը: Վերին Խաչենում գտնվող Ականա բերդից ծագող Գրիգոր Ականեցի պատմիչը, նկարագրելով մոնղոլների կործանարար արշավանքը, փաստում է, որ նրանք հրդեհում էին ճանապարհների ու լեռների վրա կանգնեցված փայտյա խաչերը. «եկն ընդ մէջ երկրին եւ կոխեաց անորորմաբար գտառապեալ քրիստոնեայսն. եւ զփայտեայ խաչ ուր եւ գտանէին ի ճանապարհս եւ ի լերինս կանգնեալ, զամեն այրէին»:¹⁶⁶ Դրանք պիտի որ լայն կիրառություն ունենային նաև վանքային համալիրներում: Կիրակոս Գանձակեցին պատմում է, թե ո՞նց Դավիթ Շարեցի, իրեն հռչակելով Քրիստոսի կողմից նշանակված բժիշկ, սատանայի խորհրդով «առեալ բռնութեամբ զգերան ձիթահանացն ի տանէ իւրմէ. արարին խաչ բարձրաբերձ, և կանգնեցին զնա ի դուռն եկեղեցւոյն, և զենին նմա զուարակս, և տային ի մտոյն ու ոսկերաց զուարակին, և ի տաշեղէ խաչին, և ի հատէ կորեկոյն, որ ի ջրաղացքն, որպէս նշխարս օրհնութեան ամենայն ուխտականացն, որ գային

¹⁶⁶ Ականեցի, էջ 33:



յամենայն կողմաց»¹⁶⁷: Այսպիսով, զրավոր փաստերը վկայում են զարգացած փայտամշակության մասին, և մեր գտածոներն էլ, թվում է, դրա արտահայտություններն են:

Թերևս ձիասարքի համար է օգտագործվել երկաթյա երկծվածիք կոպիտ ճարմանդը, որի մի եզրին ամրացված է լեզվակը (նկ. 100ա, 101բ): Ինչպես տեսանք, Արցախի խաչքարային պատկերաքանդակում ձին, որպես կանոն, ներկայանում է լիովին հանդերձավորված, ընդ որում, ձիասարքի զանազան մասերն իրար միանում են տարաբնույթ փոկերի միջոցով, որոնք կարող էին ձգվել և կապվել նաև ճարմանդների օգնությամբ: Սրան հավելենք և ձիու պայտի երկու բեկորները (նկ. 97ա, բ), որոնցից մեկի վրա պահպանվել են և ամրագամերը: Գտնվել է նաև ալմանակի կամ եզան պայտի մի կտոր՝ երկու անցքերի հետքերով (նկ. 97գ, 101գ): Այստեղ էլ նշենք, որ գտնվել են նաև երկաթյա երկու զամեր, մեկը՝ երկար, քառակող կտրվածքով (նկ. 96բ, 97ե), մյուսը՝ կարճ և լայն զլխարկով (նկ. 97դ, 101ա): Եթե առաջինի կոնկրետ կիրառությունը պարզ չէ, ապա երկրորդն, ամենայն հավանականությամբ,

¹⁶⁷ Գանձակեցի, էջ 323:

Նկ. 101 Գամեր (ա, ե), ճարմանդ (բ), պայտի (գ), կողպեքի գապանակը (դ) և նրա գործառնական սխեման (է), հրահանի երկաթ (զ):

Նկ. 102 Կողպեքի գապանակ:

ավանակի կամ եզան պայտի գամ է:

Նշենք նաև իրար մեջ հազգված գույգ անտր-
ների մասին, առաջինը՝ պատրաստված պղնձից,
երկրորդը՝ երկաթե թիթեղից և անբազված
երկաթե գամով (նկ. 98գ): Անտրները որպես
կանոն օգտագործվում էին սրչուկավոր իրերը
փայտյա բռնակներին անբազնելու համար: Մեր
դեպքում կարելի է ենթադրել, որ սկզբում իրը սր-
չին ամրացվել է պղնձե անուրի միջոցով, սակայն
հետագայում այն լրացուցիչ ամրացվել է ավելի
մեծ և ամուր՝ երկաթյա անուրի միջոցով:

Քննարկված իրերը գտնվել են եկեղեցական
շինությունների տարբեր հատվածների փլվածք-
ներում և հատակի մակարդակում, ունեն մի շարք
գուգահեռներ 12-14-րդ դարերի այլ հուշարձան-
ներից հայտնի գտածոների հետ և ամենայն
հավանականությամբ վերաբերում են հենց այդ
դարերին, այսինքն՝ վանքի գործունեության ժա-
մանակին:

Կենցաղային սարքերին և իրերին են վերաբե-
րում կողպեքի մասը, ծալովի դանակը, գամերը,
ճարմանդը, հրահանի երկաթը:

Կողպեքի գապանակավոր մասը տափակ
ձվածիր ձող է (նկ. 100դ, 101դ, 102): Ջապանակը,
որն այժմ բացակայում է, իրենից ներկայացրել
է մի ծայրով ձողից առանձնացած, իսկ մյուսով
նրան կպած տափակ թիթեղ: Ջապանակը, ձողը
կողպեքի գլանի անցքի մեջ մտցնելիս, հայվում էր
ձողին, իսկ ամբողջությամբ գլանի մեջ մտնելով՝
նորից բացվում, այսինքն՝ կողպվում (նկ. 101):
Ձողի պոչը ետ ծալվելով անցք է ձևավորել, որի
միջով անցկացրած թելի միջոցով այն կախվել է
կողպեքի աղեղից: Նման աշխատանքային մե-
խանիզմով կողպեքներ են գտնվել Անիի և Դվինի
պեղումների ժամանակ:¹⁶⁸ Մեր դեպքում ուշագ-
րավ են Թեղեմյաց վանքի պեղումներից հայտ-

նաբերված ավելի ամբողջական օրինակները:¹⁶⁹
Դրանք շատ ավելի մուտ են մեր գաածային և
վկայում են, որ նման հարմարանքները բավա-
կանին տարածված են եղել վանքային տնտե-
սության մեջ:

Դանակը, որը գտնվել է գտնգավառան մաքր-
ման ժամանակ պատկանում է ծալովի դանակ-
ների տիպին (նկ. 100ե): Պահպանվել է շեղքը՝
սրչուկով համդերը և ծալման մեխանիզմը՝ շեղ-
բակալի անուրը՝ անբազնուն գամով հանդերձ:
Ամենայն հավանականությամբ շեղբակալը եղել
է փայտից և ժամանակի ընթացքում փտել է:
Շեղքն ունի աղեղնածև վերանառա և ուղիղ սայր:
Սայրը երկարատև օգտագործման հետևանքով
բավականին մաշվել է և կորացել: Ուշագրավ է,
որ շեղքը վերնամասում ունի նեղ երկայնական
ակոս՝ շեղքն ավելի ամուր բռնելու և դրանով
իսկ դանակի բացելն ու փակելը դյուրին դարձ-
նելու համար: Ծալովի դանակները բավականին
տարածված են եղել հայ միջնադարում. դրանց
առանձին օրինակներ են գտնվել նաև Անիում և
Գառնիում:¹⁷⁰

Հրահանի երկաթը լայն և տափակ աշխա-
տանքային մասով ձվածիր իր է (նկ. 100գ, 101գ):
Ծայրերն այժմ ջարդված են, սակայն նկատի ու-
նենալով միջնադարյան հայկական¹⁷¹ և ռուսա-
կան գուգահեռները,¹⁷² կարելի է ասել, որ հրա-
հանի երկաթն ունեցել է պարուրած ետ թեքվող,
իրար չմիացող ծայրեր: Նման ձևը հարմար էր
նրանով, որ այն հազգվում էր գառու վրա, իսկ
օգտագործելիս՝ մատների վրա:

Եկեղեցական իրեր: 2005թ. ժամատան ավե-
րակները մաքրելիս վերջինիս արևմտյան պատի
փլուզումների մեջ գտնվել են բրոնզե զանգակի
և խաչի կոթասի մասեր (նկ. 96, 99գ, դ): Կարև-

¹⁶⁸ Աբրահամյան Վ., *Արևտրները Հայաստանում 4-18-րդ դդ.*, Երևան, 1956, էջ 54-55, նկ. 10, 11: Քալանթարյան Ա., *Դվին I*, Երևան, 1976, էջ 35-37, ազ. 10/1: Նման կողպեքների աշ-
խատանքային մեխանիզմների սկզբունքային սխեման տես
Колчин Б. А. Черная металлургия..., с. 152-162, рис.
128.

¹⁶⁹ Սարգսյան Գ., Թեղեմյաց վանքի պեղումները (1979-1989
թթ. արդյունքները) - *ՊԲՀ*, 1990, թիվ. 2, էջ 185, ազ. 2.2.2.3,
2/5:

¹⁷⁰ Առաքելյան Բ., *Բաղարները և արեւոյանները...* և. 1, նկ. 13.
Պետրոսյան Հ., *Դանակն 9-14-րդ դարերում*, էջ 40, ազ.
15/9:

¹⁷¹ Սարգսյան Գ., *Նշվ. աշխ.*, ազ. 2.6:

¹⁷² Колчин Б. А. Черная металлургия..., с. 165, рис. 138.



0 4սմ



0 4սմ



0 4սմ

լի է ենթադրել, որ դրանք դրված են եղել պատի ինչ-որ ճեղքում և վերջինիս փլուզման հետ թափվել են ներքև: Բրոնզե զանգակը ձուլված է մոմե կաղապարի մեջ: Միջին դարերում լայնորեն կիրառվող այս տեխնոլոգիան հնարավորություն էր տալիս ստանալ իդեալական ողորկ մակերես: Ջանգակը կտրվածքում ձվաձև է, դժվար է ասել՝ այն այդպես ձուլվել է, թե ձևափոխվել է մեխանիկական ինչ-որ ճնշման ազդեցությամբ: Կողերը հարդարված են երկու եռանկյունաձև ելուստներով, գագաթին ունի կամարաձև անցքակիր ականջիկ: Լեզվակը կախելու համար նախատեսված հիմնամասի ելուստը ինչ-ինչ պատճառներով ջարդվել է, և զանգակը վերանորոգվել է՝ գագաթին անցք բացելու և երկաթյա լար ամրացնելու միջոցով, որից էլ կախվել է լեզվակը: Այժմ մնացել է միայն լարը, իսկ լեզվակը բացակայում է: Դժվար է մեր զանգակը կապել եկեղեցական որևէ ծիսակատարության կամ իրի հետ: Այն չափից դուրս փոքր է (բարձր. 5,5 սմ), որպեսզի ենթադրենք, թե օգտագործվել է զանգակատան մեջ, և բավականին մեծ այն զանգույակներից, որ կախվում էին բուրվառներից¹⁷³ խնկարկման ժամանակ ձայնային էֆեկտ ապահովելով: Այն կարելի է դասել սովորական կենցաղային իրերի շարքը: Օրինակ, նման զանգակներ էին կախում անասունների, այդ թվում և կովերի վզից: Հանդարերդի գտածոյի հետ համարյա նույնական մի զանգակ էլ հայտնի է Գառնիից՝ գտնված 12-

13-րդ դարի առաջին կեսի շերտից: Ուշագրավ է, որ նրա լեզվակն ամրացնելու հարմարանքն էլ ջարդվել է և ենթարկվել վերանորոգման:¹⁷⁴

Պղնձյա ձուլածո երկրորդ իրը խաչի կոթառի մեկ փեղկն է՝ խնձորակով հանդերձ: Ձուլումը նորից իրականացված է մոմե կաղապարի միջոցով, որի հետևանքով ստացվել է իդեալական հարթ մակերես: Կոթառի միակ հարդարանքը կիսագնդաձև խնձորակի կենտրոնական մասով անցնող գույգ կիսազլաններն են: Ընդհանրապես, խաչը խնձորակի վրա դնելը գալիս է խաչը գունդ-տիեզերքի վրա պատկերելու վաղքրիստոնեական ավանդույթից:¹⁷⁵ Թեև խաչից որևէ մաս չի պահպանվել, սակայն կոթառի տեսքն ու միջին չափերը (երկ. 15.5 սմ) հիմք են տալիս ենթադրել, որ այն կարող էր պատկանել թե՛ այսպես կոչված ձեռաց խաչի, որն օգտագործվում էր եկեղեցում ծիսակատարությունների ժամանակ, թե՛ թափորային խաչի կամ խաչվառի, որը տարվում էր գանազան ծիսական թափորների առջևից:¹⁷⁶ Նման կոթառների տարբեր օրինակներ՝ 9-րդ դարից ի վեր թվագրությամբ հայտնի են ինչպես գանազան թանգարանային հավաքածուներից, այնպես էլ պեղումներից:¹⁷⁷

¹⁷⁴ Գառնիի 9-14-րդ դարերում, էջ 46, աղ. 18/14:

¹⁷⁵ Տե՛ս Պետրոսյան Շ., Խոսքար. ծագումը, գործարարը, պարկեղազրությունը, ինասարաբանությունը, էջ 42-43:

¹⁷⁶ Հմմտ. Օրմանյան Մ., Ծիսական քառարան, Երևան, 1992, էջ 84, 86:

¹⁷⁷ Մանրամասն տե՛ս Հակոբյան Ն., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը 9-13-րդ դարերում - Հայաստանի հնագիտական հուշարձանները, 10, Երևան, 1981, էջ 34-35, աղ. 4/4, 5ա/4,7 և այլն: Պետրոսյան Շ., Գառնիի 9-14-րդ դարերում, էջ 47-48, աղ. 19/8:

¹⁷³ Աբրահամյան Վ., Արևելահայկալի Հայաստանում (4-18-րդ դդ.), էջ 60:



0 4սմ

Խեցեղեն: Ինչպես արդեն նշել ենք, վանքի ամենավերին հարթակում պահպանվել են առանձին շինությունների աննշան հետքեր: Հնարավոր է, որ հենց այդտեղ են եղել տեղադրված վանքի բնակելի-տնտեսական համալիրները և կենցաղային առանձին իրերի բեկորները եկեղեցական շինությունների շրջապատում ու ավերակների մեջ հայտնվել են այդտեղից: Թերևս այս հանգամանքով կարելի է բացատրել և այն իրողությունը, որ պեղումներից գտնված կենցաղային իրերի մեծ մասը և հատկապես խեցանոթները չեն ամբողջանում:

Շինարարական խեցեղենը ներկայացված է հազարից ավելի բեկորներ կազմող կղմինդրներով, որոնց արդեն անդրադարձել ենք վանքի ճարտարապետությունն ու արձանագրությունները ներկայացնող բաժիններում: Այստեղ միայն նշենք, որ կղմինդրները որպես կանոն պատրաստված են խոշորահատիկ խառնուրդներով կավից, ունեն անհամաչափ թրծում: Դրանք պատրաստվել են բաց կաղապարներում, վեր-

նամասերը թաց վիճակում կոկվել են, երբեմն էլ պատվել կարմիր ներկով, ապա թրծվել: Հստակորեն առանձնանում են կղմինդրների երեք տիպեր՝ հարթ (նկ. 103), փորակավոր (նկ. 104) և հարթփորակավոր (նկ. 105): Մի դեպքում ծածկը հավաքվել է փորակավոր և հարթ, այսինքն՝ երկու տիպի կղմինդրների համադրումով, երկրորդ դեպքում՝ մի տիպի՝ հարթփորակավոր կղմինդրների օգտագործումով: Մի քանի օրինակների վրա պահպանվել են թաց վիճակում արված անցքեր, որոնք օգտագործվել են կղմինդրները ծածկի շաղախին գամելու համար:

Մի քանի տասնյակի է հասնում աղյուսների թիվը. դրանք մոտավորապես քառակուսի են (20*20*4սմ), պատրաստված են խառնուրդներ պարունակող կավից, ունեն ոչ բարձրորակ թրծում: Աղյուսների բեկորները հիմնականում հայտնաբերվել են զանգակատան մաքրման ժամանակ, ինչը հիմք է տալիս կարծել, որ դրանք օգտագործվել են զանգակատան ռուտոնդանն ծածկի շաղախով:

Նկ. 103 Հարթ կղմինդր:

Նկ. 104 Փորակավոր կղմինդր:

Նկ. 105 Հարթփորակավոր կղմինդր:

Նկ. 106 Կարաս:



Պեղումները տվել են նաև փողրակների մի քանի բեկորներ, որոնք հավանական է, երկրորդական օգտագործման են և կիրառվել են ծածկերում՝ փոխարինելով փորակավոր կղմինդրներին:


Հասարակ խեցեղենն ունի շատ համեստ տեսականի: *Կարասները* ներկայանում են համարյա ամբողջացող մի օրինակով (նկ. 106), որն ունի բավականին բարձր վիզ, փոքր բերան, ձգված մարմին, զարդարված է նեղ պարանախյուս գոտիներով և շուրթի տակով անցնող մատնեքներով: Գտնվել են նաև նման կարասների պատկանող մի քանի բեկորներ (նկ. 107):

